Է. ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԹԱ III ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

Э. В. ХАНЗАДЯН

КУЛЬТУРА АРМЯНСКОГО НАГОРЬЯ В III ТЫСЯЧЕЛЕТИИ ДО Н. Э.



ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Է. Վ. ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԹԱ III ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

A III / 3262



Հ-ՅԻ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհը բարձրանում է Փոքր Ասիայի և Իրանական բարձրավանդակի միջև ու տարածվում Առաջավոր Ասիայի հյուսիս-արևմտյան ծայրամասում: Այն բոլոր կողմերից շրջապատված է բարձրաբերձ լեռնաշղթաներով: Նրա հյուսիսային սահմանը կազմում է Փոքր-Կովկաս լեռնային սիստեմը, հարավից Հայկական Տավրոսն է, արևելքում Իրանական սարահարթից անջատվում է Ուրմիո լճով (Կապուտան ծով) և Ղարադաղի լեռներով: Հյուսիս-արևմուտքում Հայկական լեռնաշխարհի սահմանն անցնում է Անտիտավրոսով և Պոնտական լեռնաշղթայով:

Այսպիսով այն շրջապատված է բնական պատնեշներով և բռնում է մոտավորապես 300,000 կմ տարածություն: Շրջակա երկրներից ավելի բարձր է, որի համար կոչվել է «Լեռնային կղզի» և շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, բնական կամուրջի դեր է կատարել Արևելքի և Արևմուտքի միջև: Ծածկված լինելով տարբեր ուղղություններով տարածվող լեռնաշղթաների ցանցով, Հայկական բարձրավանդակը հարուստ է նաև ձորերով, լճային իջվածքներով և դաշտերով, որոնք բերրի են ու նպաստավոր երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար, իսկ երկրի բարեխառն կլիման ավելի քան նպաստում է դրան:

Հայկական լեռնաշխարհի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Հնագույն ժամանակներից սկսած այն հայտնի է եղել պղնձի, երկաթի, ոսկու, արծաթի, կապարի բազմաթիվ բովերով: Նրա լեռնային շրջաններին բնորոշ են նաև անտառապատ սարալանջեր, ալպյան մարգագետիններ:

Շնորհիվ նման բարենպաստ բնակլիմայական պայմանների, այն հանդիսացել է մարդու բնակության և նրա ստեղծած մշակույթի բնօրրաններից մեկը:

Կովկասի և Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական ցեղերի անցյալի ուսումնասիրության հարցում առանձնահատուկ տեղ է գրավում Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի վաղ բրոնզի դարաշրջանի պատմությունն ու մշակույթը:

Դեռևս նեոլիթի վերջերից Հայկական լեռնաշխարհը և ընդհանրապես Անդրկովկասը բնակեցված են եղել վաղ երկրագործական-անասնապահական

ցեղերով, որոնք մթա III հազարամյակում հասել են մշակութային զարգացման բավական բարձր աստիճանի:

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների վաղ բրոնզեդարյան մշակույթը ներկայացնում է նախնադարյան համայնական կարգերի զարգացման մի կարևոր փուլ, որի համար բնորոշ է երկրագործության, անասնապահության, մետաղագործության ու արհեստների զարգացման շեշտակի վերելքը:

Այդ ինքնատիպ մշակույթն ստեղծող տեղաբնիկ ցեղերի անցյալի ուսումնասիրությունը մենք սկսում ենք հուշարձանների՝ բնակատեղիների և տնտեսական նշանակություն ունեցող այլ կառուցվածքների, թաղման ձևերի զննությամբ:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

(ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐ ԵՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ)

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի պատմության, մշակույթի, կենցաղի, սովորույթների և հավատալիքների ուսումնասիրության հարցում մեծ կարևորություն են ներկայացնում մ.թ.ա. III հազարամյակի վաղ բրոնզեդարյան բնակատեղիները և դամբարանները:

Թեև այդ դարաշրջանի հուշարձանները դեռևս անբավարար են ուսումնասիրված, այնուամենայնիվ միայն Սովետական Հայաստանի տերիտորիայում այժմ հայտնի է մոտ վաթսուն հուշարձան: Վերջերս հուշարձանների մի ստվար խումբ հայտնաբերվել և ուսումնասիրվում է նաև արևմտյան Հայաստանի տերիտորիայում (ներկայիս Թուրքիա):

Հնագիտական հուշարձանների թվով, բազմազանությամբ ու հարստությամբ առանձնահատուկ տեղ է գրավում Արարատյան դաշտավայրը՝ Առաջավոր Ասիայի ամենաբերրի և ամենախոշոր հովիտներից մեկը:

1. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի սիրտը կազմող Արարատյան դաշտավայրը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի կենտրոնն է: Այն տարածվում է Արաքս (Երասխ) գետի միջին հոսանքի երկու ափերով՝ Ախուրյանի գետախառնուրդից մինչև Մեղրու կիրճը՝ մոտ 200 կմ երկարությամբ և Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ, ամենացածրադիր (միջին բարձրությունը ծ. մ. 800—850 մ) և ամենաարգավանդ դաշտավայրն է: Ընդհանուր առմամբ եռանկյան ձև ունի, որն իր ամենալայն մասով ընկած է հյուսիս-արևմուտք (լայնությունը 40 կմ): Այստեղ Արարատյան դաշտավայրը հյուսիսից եզերում է Արագածի վիթխարի հրաբխային զանգվածը, ջրերով ու բուսականությամբ հարուստ լայնանիստ լանջերով, որի շնորհիվ հնուց ի վեր այն երկրագործական մշակույթի կենտրոն է եղել, միևնույն ժամանակ իր արոտավայրերով մշտապես նպաստել է անասնապահության զարգացմանը:

Առաջանալով մի ժամանակ այստեղ եղած ծովի, ապա նրա վերանալուց հետո գոյացած լճերի նստվածքներից, հրաբխային զանգվածներից և գետերի

ընկած տեղից, Արարատյան դաշտավայրը հանդիսացել է Հայկական լեռնաշխարհի ամենահարուստ և պտղաբեր շրջանը և պատահական չէ, որ մատենագիրներն այն համարել են «դրախտ», «ամենաբույս», «ամենաբերրի», «գլուխ Հայոց», «միջնաշխարհ Հայոց» և այլն:

Ղազար Փարպեցին հետևյալ ձևով է բնութագրում Արարատյան դաշտավայրը.

«Եւ արդ՝ զայսպիսի զըղձակերտ գաւառ, զնաշխարհիկ և զամենալի բարութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւաւորն, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան...»[1]:

Շնորհիվ իր բնակլիմայական բարենպաստ պայմանների, Արարատյան դաշտավայրը երկրագործ տեղաբնիկների բնօրրանն է դարձել սկսած դեռևս մթա V հազարամյակից: Սակայն երկրագործական մշակույթն այստեղ նոր վերելք է ապրում մթա III հազարամյակում, որի շնորհիվ այն դառնում է Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան ինքնատիպ մշակույթի կենտրոնական օջախներից մեկը:

Արաքսի ձախակողմյան ափում՝ Երևանի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի և Արտաշատի շրջաններում հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան բազմաթիվ և բազմատիպ հուշարձաններ:

Արաքսի աջակողմյան ափի հուշարձաններից մեզ հայտնի են Իգդիրի հովտի և Կողբի հուշարձանները:

Շենգավիթ. Արարատյան դաշտավայրի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից առավել նշանավորը Շենգավիթն է:

Այդ ամրոց-բնակատեղին գտնվում է Երևանի հարավ-արևմտյան մասում՝ Հրազդան գետի բարձրադիր ձախ ափին: 1936—1938 թթ. Շենգավիթում պեղումներ է կատարել Ե. Բայբուրթյանը, այժմ պեղումները շարունակում է Ս. Սարդարյանը:

Բնակավայրը զբաղեցնում է անկանոն-ձվաձև մի հարթակ, մոտավորապես 6 հկտ տարածությամբ, գետի մակերևույթից մոտ 12 մ բարձրության վրա[2]: Այն շրջապատված է անմշակ քարերով կառուցված հզոր կիկլոպյան պարիսպով, որն ունի աշտարակներ և ստորերկրյա անցք: Բնակատեղին ունի չորս կուլտուրական շերտ, որոնցից ստորինը վերաբերվում է էնեոլիթյան մշակույթին, իսկ մյուս երեք շերտերը վաղ բրոնզեդարին (պեղումների նկարագիրը տրված է Ե. Բայբուրթյանի, Բ. Կուֆտինի, Բ. Պիոտրովսկու և Հ. Մարտիրոսյանի աշխատություններում)[3]:

Վաղ բրոնզեդարյան երեք շերտերում պեղումների ժամանակ հայտնաբերվել են կենտրոնական կլոր կացարաններ (6,5—8 մ տրամագծով), հարակից քառանկյուն շինություններով (3×3 մ² կամ 4×7 մ² տրամագծով, նկ. 1): Միայն № 2 կացարանին կից բացվել են տասներկու քառանկյուն սենյակներ[4]: Մյուս

[1] Ղազարա Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 23—24:

[2] Ե. Բայբուրդյան, Շենգավիթյան մշակույթը. ձեռագիր աշխատություն, Հայկական ՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, էջ 1:

[3] Նույն տեղում, էջ 1—73: **Б. А. Куфтин,** Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-аракский энеолит. Вестник Гос. музея Грузии, т. XIII В. Тб., 1943, էջ 113—115. **Б. Б. Пиотровский,** Археология Закавказья, Л., 1949, էջ 32—34. **А. А. Мартиросян,** Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 27—29

[4] Ե. Բայբուրդյան, նշվ. աշխ., էջ 35:

կլոր կացարանները ևս շրջապատված են եղել նման բազմաթիվ կառուցվածքներով[1]:

Կլոր կացարաններն ունեն գետաքարերով կամ կիսամշակ մեծ քարերով շինված հիմքեր (ոչ ավելի քան 0,9 մ բարձրությամբ և 1 մ հաստությամբ),



Նկ. 1. Շենգավիթի բնակարանների պլանը ըստ Ե. Բայբուրթյանի:

[1] Ե. Բայբուրդյան, նշվ. աշխ., էջ 36—37:

որոնց վրա բարձրացել են հում աղյուսե պատերը (աղյուսի չափերն են 30×40×10)։

Քառանկյուն սենյակների պատերը շարվել են երկշար կոպիճով՝ վրան հում աղյուսներ։ Սակայն հանդիպում են սենյակներ, որոնց երկու պատերը ամբողջապես շարված են հում աղյուսով (№ 8)[1]։

Թե՛ կլոր կացարանների և թե՛ քառանկյուն սենյակների պատերը դրսից և ներսից ծեփվել են կավով։ Կլոր կացարաններն ունեցել են գավիթ։ Մուտքը գերազանցապես արևելյան կողմից է, որը երբեմն քարե շեմ է ունեցել, կամ աստիճաններ։ Կացարանների հատակը պատրաստված է մանր կոպիճի համակենտրոն շրջանների շարվածքով։ Քարե այդ փռվածքը բազմիցս ծեփվել է կավով կամ ծածկվել հում աղյուսով։ Կլոր կացարանի շրջագծին համապատասխան, ներսից հում աղյուսե նստարաններ ու մահճեններ են պատրաստվել (45 սմ լայնությամբ և նույնքան էլ բարձրությամբ)[2]։

Շենգավիթի կլոր կացարանները քառանկյուն սենյակների կոմպլեքսով հանդերձ, չնայած գտնվել են միմյանցից 7,3 մ հեռավորության վրա, սակայն հարակից շենքերի վերջին պատով կցվել են միմյանց[3]։

Ըստ Ե. Բայբուրթյանի, կլոր կացարանն ունեցել է կոնաձև, իսկ հարակից ուղղանկյուն շենքերը տափակ տանիք։ Կլոր կացարանի կենտրոնում սյան համար քարի կողքին որպես կանոն միշտ դրված է եղել թրծած կավից կլոր շարժական օջախը, որը բոլոր կողմերից ունեցել է կոպիճե նեցուկներ։ Օջախի մոտ հայտնաբերվել են մեծ կավամաններ՝ այրված հացահատիկով, աղորիքներ, արորիչներ, սանդեր, սանդկոթեր և այլն։

Շենգավիթին բնորոշ են հացահատիկի և տնտեսական այլ նշանակություն ունեցող հորեր։ Բնակատեղիի կառուցողական շերտերը միմյանցից անջատված են 20—25 սմ նրբախավով։

Այսպիսով վաղ բրոնզեդարյան երեք կուլտուրական շերտերում հայտնաբերվել են հետաքրքրական ճարտարապետական կոմպլեքսներ, քարե, ոսկրե և մետաղե իրեր, օջախներ, շեղ, բարձրարվեստ խեցեղեն, ձուլման կաղապարներ, երկրագործության, անասնապահության, տնտեսության այլ և այլ ճյուղերի զարգացման աստիճանը, կենցաղն ու սոցիալական հարաբերությունները բնորոշող նյութեր։ Կիկլոպյան պարսպի տակ հայտնաբերվել են Շենգավիթի բնակիչների դամբարանները։

Մուխաննաթ-թափա. գտնվում է Երևանի հարավային մասում, երկաթուղային կայարանից ոչ հեռու։ Այն ձվաձև, զառիթափ մի բլուր է, 5600 մ^2 հարթ մակերեսով և 16 մ բարձրությամբ. շրջապատված է կիկլոպյան պարսպով[4]։ 1935—1937 թթ. Մուխաննաթ-թափայում պեղումներ է կատարել Ե. Բայբուրթյանը։

Մուխաննաթ-թափան առաջին հուշարձանն է, որ տվեց շերտագրական արժեքավոր տվյալներ, հաստատելով, որ էլարյան տիպի վաղ բրոնզեդարյան մշակույթը գտնվում է միջին բրոնզի դարաշրջանի գունազարդ խեցեղենով

---

[1] Նույն տեղում, էջ 36։

[2] Նույն տեղում, էջ 35—48։

[3] Նույն տեղում, էջ 37։

[4] Ե. Բայբուրթյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք II, Երևան, 1937, էջ 276։

մշակույթից ցած և հետևաբար նախորդել է նրան[1]: Նման մի պատկեր ստացվեց նաև Վրաստանում՝ Բեշտաշենի ամրոցի պեղումների ընթացքում[2]:

Երևանի տերիտորիայում բացի վերոհիշյալներից հայտնի են ևս երկու հուշարձաններ՝ Խորումբուլաղը՝ (Հրազդանի ափին, Երևանի հյուսիս արևմտյան մասում) և Թախիրովի սովխոզը (Շենգավիթի դիմաց, Հրազդան գետի աջ ափին), որտեղ հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ նյութեր:

Շրեշ-բլուր. (էջմիածնի շրջան): Դա արհեստական բլուր է եղել Քասախ գետի ափին, մոտ 3,5 մ բարձրությամբ (ժամանակին մոտ 10 մ բարձրություն է ունեցել), մոտավորապես 123 մ տրամագիծ ունեցող կլորացող մակերեսով: Գտնվելիս է եղել էջմիածնից կես կիլոմետր հեռավորության վրա, Օշական տանող ճանապարհի աջ կողմում, ճանապարհից 50 մ դեպի արևելք[3]:

Ե. Լալայանը բլուրի անվան մասին ասում է, որ այդպես է կոչվել, որովհետև կես դար առաջ բլուրի վրա առատությամբ շրեշ է բուսելիս եղել[4]: Սակայն պատմահայր Մ. Խորենացու վկայությամբ այս բլուրը Շրեշ անունը կրել է հնագույն ժամանակներից սկսած և բնակելի է եղել նաև անտիկ շրջանում[5]:

1913 թ. Ե. Լալայանը Շրեշ-բլուրը պեղել է (10 օր) խաչաձև կտրվածքով 1,5 մ խորությամբ: Բլուրն ունեցել է երեք կուլտուրական շերտ[6]:

Ստորին շերտի պեղումների ժամանակ մոխրաշերտում հայտնաբերվել են աղորիքներ, խեցեղեն, շան, ոչխարի, եզան և ձիու կիսայրված ոսկորներ[7]: Քարե գործիքների առատությունը (№ 121) և մետաղի բացակայությունը Ե. Լալայանին կարծել է տվել, որ Շրեշ-բլուրի ստորին շերտը «Հղկված քարե դարի է, որ նա ընդհանրապես նեկրոպոլ է եղել քարե դարից մինչև երկաթե դարը»[8]:

1935 թ. Ե. Բայբուրթյանի հետազոտությունների ժամանակ պարզվել է, որ բլուրի ստորին շերտը վերաբերում է մթա III հազարամյակին: Շրջակայքում հայտնաբերվել են վիթխարի անմշակ քարերով շարված պատի հետքեր[9], որոնք հավանաբար կիկլոպյան պարսպի մնացորդներ են:

Քյոլ-թափա. գտնվում է էջմիածնից 4 կմ դեպի հարավ, հարթ տարածության վրա, Շրեշ-բլուրից 7 կմ հեռավորությամբ: Դա նույնպես արհեստական բլուր է, տափակ գագաթով և ունի մոտ 65—70 մ լայնություն: Ըստ Ե. Բայբուրթյանի՝ այն իր շերտագրությամբ, տեղագրությամբ և հայտնաբերված նյութերով Շրեշ-բլուրի պատճենն է[10]: 1927 թ. Թ. Թորամանյանը նրա մակերեսից նյութեր է հավաքել, իսկ 1935 թ. Ե. Բայբուրթյանի հետազոտությունների ժամանակ հայտնաբերվել է մեծ քանակությամբ զարդարուն խեցեղեն, օջախի հենակ, քարե գործիքներ և այլն (№ 1227): Քյոլ-թափայում նյութեր է հավաքել նաև հնագետ Ս. Սարդարյանը (կենդանիների և մարդկանց արձանիկներ, № 1796):

---

1 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 38:

2 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети. Тб., 1941, էջ 197, 109.

3 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 61:

4 Նույն տեղում:

5 Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 195:

6 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 62:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 61:

9 Е. Байбуртян, նշվ. աշխ., էջ 210:

10 Նույն տեղում, էջ 212:

Վաղ բրոնզեդարյան նյութեր հայտնաբերվել են նաև Զվարթնոցից (Պետական պատմական թանգարան, № 1785 նյութերի մի մասը)[1], Ֆրանկանոցից և Կոշից (№ 780, 588, 589), Օշականից (№ 461—464), Մխլու-թափայից, Աղավնատնից և այլն։

Արագած (Էջմիածնի շրջան). այստեղ հայտնի է և՛ բնակատեղին, և՛ դամբարանադաշտը։ Արագած գյուղը ընկած է Աղավնատնից 2 կմ հեռավորության վրա։ Բնակատեղին (նախկինում կոչվել է Խղնաուզ) գտնվում է հենց գյուղի կողքին, դեպի Աղավնատուն տանող ճանապարհից ձախ, քարքարոտ անմշակ դաշտում. այն իր արտաքին ձևով և մակերեսով հիշեցնում է Շենգավթի բնակատեղին[2]։ Այս բլուրն ուսումնասիրվել է 1938 թ. Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախմբի կողմից, որի ընթացքում հայտնաբերվել է, ինչպես Ե. Բայբուրթյանն է գրում, Շենգավթյան տիպի խեցեղեն[3] (№ 1476)։

Արագած գյուղի հյուսիսային մասում 1962 թ. պատահաբար հայտնաբերված երեք քարարկղներից մեկը պեղվել է Հ. Մարտիրոսյանի կողմից, ըստ որի այն կառուցված է եղել երկու երկայնակի սալերով, հատակը շարված բազալտի մեծ կտորներով։ Դամբարանում հայտնաբերվել են տասներկու կավամաններ և չորս քայքայված կմախքներ, որոնց դիրքը հնարավոր չի եղել որոշել[4]։

Բնակատեղիի և դամբարանադաշտի խեցեղենի համեմատությունը պարզում է, որ նրանք ժամանակակից են և վերաբերվում են վաղ բրոնզից միջին բրոնզի անցման դարաշրջանին։

Աղրամիրը գտնվում է Աշտարակից 8 կմ հեռավորության վրա, Ոսկեվազ գյուղի արևելյան մասում, դեպի Օշական և Ֆրանկանոց տանող ճանապարհի վրա, Քասախ գետի ափին։ Այն քարքարոտ դաշտավայրում բարձրացած կիկլոպյան պարսպով շրջապատված մի բլուր է։ Ե. Բայբուրթյանը նշում է, որ գունազարդ խեցեղենի հետ միասին այնտեղ հայտնաբերվել է շենգավթյան տիպի խեցեղեն[5]։ 1961 թ. մեր կողմից կատարված հետազոտությունների ժամանակ ստորին շերտից նույնպես հայտնաբերվեցին վաղ բրոնզեդարյան նյութեր (№ 2247)։

Մեծամոր (Սև-բլուր) գտնվում է Էջմիածնի շրջանի Ջեյվա գյուղի մոտ՝ Մեծամոր գետի (Սև ջրի) ափին. հրաբխային խարամից առաջացած մի վարդագույն բլուր է։ 1965 թ. երկրաբանների և հնագետների կոմպլեքսային արշավախմբի պեղումների ժամանակ պարզվեց, որ Մեծամոր բլուրի ստորին շերտի մշակույթը վերաբերվում է մթա III հազարամյակին։ Հայտնաբերվեց սև փայլեցրած զարդարուն խեցեղեն, քարե և ոսկրե աշխատանքային գործիքներ, զենքեր և այլն։

Ղարա-թափա բլուրը (Հոկտեմբերյանի շրջան) գտնվում է Մրգաշատ (Գեչրլու) գյուղից հյուսիս-արևելք 2,5 կմ հեռավորության վրա, իսկ Հոկտեմբերյանի երկաթուղային կայարանից 5 կմ դեպի արևելք։

Բլուրն ուսումնասիրվել է 1938 թ. Ե. Բայբուրթյանի կողմից։ Այն արտաքինից ձվաձև է՝ 3 մ բարձրությամբ, գագաթը տափակ (40×60 մ տրամագծով)։ Բլուրի հյուսիսային, հյուսիս-արևելյան և հարավային կողմերի խուզահորան-

---

[1] Պետական պատմական թանգարանը տեքստում այսուհետև կօգտագործվի կրճատ՝ ՊՊԹ։

[2] Ե. Բայբուրթյան, Ձեռագիր աշխատություն, էջ 37։

[3] Նույն տեղում։

[4] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 42.

[5] Ե. Բայբուրթյան, նշվ. աշխ., էջ 64։

ների միջոցով կատարված ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են շենքերի մնացորդներ, խեցեղեն, կավե օջախի մասեր և այլն: Բլուրի 2,5 մ խորությամբ կտրվածքն ապացուցել է, որ այն միատարր մշակույթ ունի և շերտը շարունակվում է ավելի խոր[1]:

Արմավիր. գտնվում է Հոկտեմբերյանից 8 կմ հեռավորության վրա: Հայտնի է բլուրի շրջակայքում հայտնաբերված վաղ բրոնզեդարյան դամբարանային նյութերով[2] և պատահական որոշ գյուտերով:

1962 թ. Արմավիրի հնագիտական արշավախումբը Բ. Առաքելյանի ղեկավարությամբ վաղ բրոնզեդարյան նյութեր հայտնաբերեց Արմավիրից դեպի Դավթի սարը տանող հուշարձանների շարքում: Հայտնաբերված նյութերում գերազանցում էր սև փայլեցրած խեցեղենը՝ զարդարված ռելեֆ բազմազալար պարույրներով:

Բացի այդ, Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբը Հ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ուսումնասիրվող ժամանակաշրջանի նյութեր է հայտնաբերել Դավթի սարի ստորին շերտում:

Մոխրաբլուր. գտնվում է Արմավիրից Արևիկ (Արջախ) տանող գլխավոր ճանապարհի վրա, ավելի մոտ Արևիկ գյուղին, քան Արմավիրին: Այն մի արհեստական բլուր է, որը ճանապարհաշինության ժամանակ կիսվել է մեջտեղից և ավերվել: Բացի այդ, երկար տարիների ընթացքում անընդհատ ավերվել է տեղի բնակիչների կողմից, որոնք քանդել և հողը տարել են տանիքներ ծածկելու համար: Այժմ այն փոքր բլրակների մի խումբ է: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ 1962 թ. աշնանը հետախուզական պեղումներ սկսեցի Մոխրաբլուրի համեմատաբար լավ պահպանված մասում՝ դեպի Արևիկ տանող ճանապարհի ձախ եզրին: Պեղումները կարճատև էին. մոտ 50 մ² տարածության վրա խորացանք 1—1,5 մ: Կուլտուրական շերտը դեռևս շարունակվում է: Հայտնաբերվեցին բավական մեծ թվով սև փայլեցրած զարդարուն խեցեղեն, օջախի պայտաձև հենակներ, քարից և ոսկրից պատրաստված աշխատանքային գործիքներ, օբսիդաքարե շեղբեր, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ, փտած ցորեն, գարի և այլն (№ 2248):

Դվինը (Արտաշատի շրջան) հնուց ի վեր հայտնի է որպես միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք: Դվինի միջնաբերդը բազմաշերտ է, բնակելի է եղել վաղ բրոնզե դարաշրջանից մինչև ուշ միջնադար: Այն արհեստական մի բլուր է մոտ 30 մ բարձրությամբ, գագաթի մակերեսը մոտ 4000 մ² է և հեռվից հատած կոնի տպավորություն է թողնում[3]:

Դվինի սիստեմատիկ պեղումներն սկսվել են դեռևս 1937 թ. Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ, իսկ 1946 թ. սկսած պեղումները ղեկավարում է Կ. Ղաֆադարյանը:

Վաղ բրոնզեդարյան նյութեր հայտնաբերվել են 1939 թ. և 1952 թվականին: Դվինում 1959 թ. պեղումների ժամանակ, միջնաբերդի արևմտյան կողմում, 12—հ քառակուսում 3,5—3,7 մ խորության վրա ստորին՝ վաղ բրոնզե-

---

[1] Նույն տեղում, էջ 36—37:

[2] Նյութերը հայտնաբերվել են Ա. Ս. Ուվարովի, Պ. Ս. Ուվարովայի և Ա. Դ. Երիցյանի կողմից 1879 թ., գտնվում են Վրաստանի պետական թանգարանում, իրենց ճանաչումն են գտել և հրատարակվել Բ. Ա. Կուֆտինի կողմից՝ Б. А. Куфтин, Урартский „колумбарий"..., էջ 92, 93, նկ. 50, աղ. 23:

[3] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 22—24:

դարյան շերտում բացվեց արևմուտքից-արևելք տարածվող 0,88 մ լայնությամբ հում աղյուսե մի պատ՝ կազմված չորս շարք շախմատաձև դասավորությամբ աղյուսներից։ Այս պատի երկու կողմերում ընկած փոքր տարածություններում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ իրեր՝ քարե կոկիչ, սանդակոթեր, պղնձե սանդ, պայտաձև փոքրիկ պղնձե իր, մանգաղի կայծքարի ներդիր, նետասլաք, կայծքարե և օբսիդաքարե գործիքներ, ոսկրե հերուն, կիկլի գլուխ, կավից մանկական սայլի անիվ, զարդարուն խեցեղեն և այլն։ Դվինի ստորին շերտը դեռևս լուրջ ուսումնասիրության կարոտ է։

Այգեստան *(Արտաշատի շրջան). Հայտնի է հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված վաղ բրոնզեդարյան նյութերով (№ 1212)։*

Քյուլ-թափա *(Նախիջևանի ԱՍՍՀ). Արարատյան դաշտավայրի հարավ-արևելյան անկյունում՝ Նախիջևանից 8 կմ հյուսիս-արևելք, Նախիջևան գետի ձախ ափին է գտնվում նշանավոր Քյուլ-Թափա բնակատեղին, որը նույնպես արհեստական մի հսկա բլուր է՝ 22 մ բարձրությամբ։ Այստեղ 1904 թ. պեղումներ է կատարել Ե. Լալայանը*[1]*, իսկ 1951 թ. սկսած այն պեղվում է Ադրբեջանի պատմության ինստիտուտի կողմից, Օ. Ա. Աբիբուլաևի ղեկավարությամբ։*

Քյուլ-Թափան բաղկացած է չորս կուլտուրական շերտից, որից երկրորդը վերաբերվում է վաղ բրոնզի դարաշրջանին[2]*։ Երկրորդ շերտը (8,5—9,5 մ հաստությամբ) կազմված է 14 շինարարական հորիզոններից, որոնցում հայտնաբերվել են 28 կլոր կացարաններ հարակից շինություններով*[3]*։ Կլոր կացարաններում հայտնաբերվել են վառարաններ՝ բնակարանը տաքացնելու համար, օջախներ և օջախների պայտաձև հենակներ*[4]*, 17 մետաղե իրեր, ձուլման կաղապարներ, որոնցից մեկը կոթառով, սեպաձև կացնի համար է*[5]*։ Հայտնաբերվել են հորեր՝ լցված փտած հացահատիկով. կենդանիների ոսկորներ, նաև կենցաղային բազմաթիվ այլ իրեր՝ հերուններ, քարե և ոսկրե այլ գործիքներ, բազմաքանակ սև ու մոխրագույն փայլեցրած խեցեղեն, որի վրա զարդանախշերը շատ սակավ են։ Այն կազմված է վերադիր զարդերից, երբեմն համադրված ներճկված փոսիկների հետ*[6]*. ձևով հիշեցնում է Էլարի խեցեղենը։ Քյուլ-Թափայի երկրորդ շերտի մշակույթն իր ճարտարապետական ձևերով, հայտնաբերված նյութերով նմանվում է Շենգավիթին, սակայն չի ընդգրկում զարգացման բոլոր փուլերը։*

Արարատյան դաշտն ավելի նեղ շերտով է ձգվում Արաքսի աջ ափին, որտեղ նշանավոր են հատկապես Իգդիրի հովտի հուշարձանները՝ Մալաքլուն, Գեկչելին և Յայջին։

Մալաքլու. *1913 թ. Պ. Ֆ. Պետրովն Իգդիրից հյուսիս 8 կմ հեռավորությամբ, դեպի Մարգարա տանող ճանապարհին, Մալաքլու գյուղի մոտ գտնվող բլուրի վրա հայտնաբերել և պեղել է մթա III հազարամյակի բնակատեղի, որն*

---

[1] Ե. Լալայան, *Ազգագրական հանդես*, հատ. 13, Թիֆլիս, 1906, էջ 207—208։

[2] **О. А. Абибуллаев,** Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, СА, № 3, М., 1963, էջ 157.

[3] **О. А. Абибуллаев,** Остатки жилищ во втором слое поселения Кюль-тепе, около Нахичевани, МИА, № 125, էջ 40—67.

[4] *Նույն տեղում։*

[5] *Նույն տեղում։ Նույնի,* Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, էջ 157—168.

[6] *Նույն տեղում։*

անվանել է «կավե քաղաք»[1]: Լավայի ծածկույթի տակ 2,5 մ խորությունում, մոխրաշերտում հայտնաբերվել են հում աղյուսներ, փայտի ածուխ, մարդկանց և կենդանիների ոսկորներ, քարե գործիքներ՝ աղորիքներ, սանդակոթեր, պղնձե ձողիկներ, կոթառով սեպաձև կացնի մաս կռման հետքերով, օջախի պայտաձև հենակներ և հարուստ խեցեղեն, որոնց մանրամասն նկարագիրը տվել է Բ. Ա. Կուֆտինը[2]:

Յայջին և Գեկչելին Իգդիրի հովտի կարևորագույն բնակատեղիներից են: Մեզ հայտնի են միայն զարդարուն խեցեղենով[3], որը հարում է շրեշ-բլուրյան խմբին:

Կողբ. գտնվում է Իգդիրից հյուսիս-արևմուտք, հայտնի է աղահանքերում հայտնաբերված ակոսավոր փորվածք ունեցող մասսիվ կացին-մուրճով[4] և վաղ բրոնզե դարին բնորոշ մի շարք նյութերով (№ 402, 404):

Այսպիսով Արարատյան դաշտավայրում հայտնաբերված վերոհիշյալ հուշարձանները վկայում են, որ այն խիտ բնակեցված է եղել վաղ բրոնզի դարաշրջանում. անշուշտ ապագա հետազոտությունները ի հայտ կբերեն նորանոր հետաքրքրական հուշարձաններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն կստեղծի մի շարք մութ հարցերի պարզաբանման:

2. ԿՈՏԱՅՔԻ (ԱԲՈՎՅԱՆԻ) ՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է նաև նախալեռնային և լեռնային բնույթի հուշարձաններով, որոնցով հատկապես աչքի է ընկնում Կոտայքի շրջանը: Այստեղ վաղ բրոնզեդարյան հուշարձաններից ներկայումս հայտնի են Գառնին, Հացավանը, Էլարը և Գյումբեթը:

Գառնին լեռնային բնույթի նշանավոր հուշարձաններից է: Գտնվում է Երևանից արևելք, մոտ 30 կմ հեռավորության վրա, Գեղամա լեռների ստորոտում, ծովի մակերևույթից մոտ 1400 մ բարձրության վրա: Դեռևս շատ հնուց այն հայտնի է անտիկ շրջանի հոյակապ ամրոցով և տաճարով:

Գառնիի ամրոցը, որի ստորին շերտը վերաբերում է վաղ բրոնզեդարյան մշակույթին, գտնվում է գյուղի հարավ-արևմտյան մասում: Կառուցված է բարձր եռանկյունաձև դարավանդի վրա, սուր ծայրով ուղղված դեպի հարավ, իսկ հիմքով դեպի հյուսիս: Դարավանդի երկու կողմերում տարածվում է գեղատեսիլ խոր ձորը, որտեղ միախառնվում են Գառնի և Ազատ գետերը:

Գառնիի սիստեմատիկ պեղումներն սկսվել են 1949 թ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ: Պեղումների ընթացքում պարզվեց, որ ստորին շերտը վերաբերվում է մթա III հազարամյակին[5]:

Զգալի արդյունքներ տվեցին հատկապես վերջին տարիների պեղումները: Պարզվեց, որ Գառնիի անտիկ շրջանի պարսպապատը կառուցվել է ստորին

---

[1] Նյութերը գտնվում են Վրաստանի պետական թանգարանում, խմ. № 30—14 և հրատարակված են Բ. Ա. Կուֆտինի կողմից՝ **Б. А. Куфтин,** Урартский „колумбарий"..., էջ 1—2, 73—85:

[2] Նույն տեղում:

[3] **C. A. Burney,** Eastern Anatolia in the chalcolitic and Early Bronze Age, AS, v. VIII, 1958, էջ 187:

[4] Коллекции Кавказского музея, том, V, Тб., 1902, էջ 192, նկ. 63—87: Ազգագրական հանդես, գիրք 13, էջ 206—207: Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. I, Երևան, 1931, աղ. 7, նկ. 13:

[5] **Б. Н. Аракелян,** Гарни, I Результаты раскопок 1949—1950, Ереван, 1952, էջ 22—27.

շերտին վերաբերվող, այսինքն վաղ բրոնզեդարյան կիկլոպյան պարսպի վրա, որի շարունակությունն այս տարի հայտնաբերվեց նաև անտիկ շրջանի պարսպից ներս։ Վաղ բրոնզեդարյան շերտին բնորոշ են կլոր կացարաններ։ Բնակատեղիի մի հատվածում հայտնաբերվեցին իրար վրա նստած երկու կլոր կացարաններ, որոնք միմյանցից անջատված էին 0,2—0,3 մ մոխրաշերտով (նկ. 2)։ Նման պատկեր հայտնի է Շենգավիթից[1]։ Վերին կացարանի կլոր



Նկ. 2. Գառնիի կլոր կացարանը։

հիմքերը կառուցված են միջին մեծության անմշակ քարերի երկու շարքից (պատի լայնությունը 0,6 մ է, իսկ պահպանված բարձրությունը 0,5 մ)։ Պատի վրա տեղ-տեղ հանդիպում են հում աղյուսներ։ Կացարանի տրամագիծը 6,7 մ է։ Ստորին կացարանի հիմքը նույնպես կառուցված է մեծ և մանր քարերի 2—5 շարքով (որոնց բարձրությունը երբեմն հասնում է 1,2 մ, իսկ որոշ տեղերում՝ 0,5—0,6 մ)։ Պատի հաստությունը մոտ 0,9 մ է։ Ներսից՝ պատին կից, նրա ամբողջ շրջագծով կառուցված է կավե նստարան 0,5 մ բարձրությամբ և լայնությամբ։ Կացարանի մուտքն արևելյան կողմից է և ունի 1 մ լայնություն։ Հատակը կավածեփ է։ Կլոր կացարանն արտաքինից ունի կից շինություններ, որոնք դեռևս պեղված չեն։

Հացավան. *գտնվում է Գառնիից ոչ հեռու, Երևան—Գառնի խճուղու աջ կողմում։ Նույնպես հայտնի է անտիկ շրջանի ամրոցով։ 1961 թ. գյուղի հարավային ծայրում հողային աշխատանքների ժամանակ, գամբարանից հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան խեցեղեն։*

Էլար. *Աբովյանի շրջանի (նախկին Կոտայք) շրջկենտրոնն է, գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա և տեղավորված է Թբիլիսյան խճուղուց դեպի աջ։ Էլարը որպես հնագիտական հուշարձան մեծ արժեք է ներկայացնում և դեռ շատ հնուց արժանացել է գիտնականների ուշադրությանը։ Այն հայտնի է Արգիշտի առաջինի հանրահայտ սեպագիր արձանագրությամբ, որտեղ խոսվում է Դարանի քաղաքի նվաճման մասին։*

[1] Ե. Բայբուրթյան, նշվ. աշխ., էջ 34։

Էլարում առաջին անգամ հնագիտական հետազոտություններ և պեղումներ են կատարել՝ Ե. Լալայանը 1927 թ. և ապա Ե. Բայբուրթյանը՝ 1928 թվականին։

Ե. Լալայանը վաղ բրոնզի դարաշրջանի մի շարք հուշարձաններ է պեղել ինչպես ամրոցի շուրջը, այնպես էլ գյուղի շրջակայքում, նրա հյուսիս-արևելյան մասում՝ «Գոթուլկա» անունը կրող քարքարոտ հարթության վրա (գյուղից 200 մ հեռու), Ազամալյանի կալում (գյուղի և Գոթուլկայի միջև), «Նախրատափ» կոչվող քարքարոտ ընդարձակ վայրում, «Փոշտի դոշ» բլրակի գագաթին, ամրոցի բլրի արևելյան լանջին, գյուղի եկեղեցուց մոտ 100 մ դեպի արևմուտք՝ Մահտեսի Խաչատուր Խաչատրյանի տան մոտ և «Կարոյի կալ» (Կարապետ Սարգսյանի) կոչվող վայրում[1]։

Ըստ Ե. Լալայանի նկարագրության միայն մեկ տեղում՝ «Գոթուլկայում» նա նկատել է, ինչպես ինքն է արտահայտվում, «նախնական աների հիմնապատեր, բաղկացած մի գանով կլոր սենյակից»[2], իսկ մնացած բոլոր վայրերում նշում է, որ պեղել է «հղկած քարե դարի նախնական շրջանի դամբարաններ, շրջանաձև շարված անմշակ քարերով»[3]։ Սակայն Ե. Բայբուրթյանն իր պեղումներով ապացուցեց, որ Ե. Լալայանը ոչ թե դամբարաններ, այլ բնակատեղիներ է պեղել։ Փաստորեն հայտնաբերված անմշակ քարերով շարված պատերը կլոր կացարաններ են (4—6,5 մ տրամագծով) և նրանց մեջ մոտ 1—1,5 մ խորության վրա բացել է ոչ թե դամբարան, այլ հացահատիկի կամ տնտեսական նշանակություն ունեցող հորեր[4]։ Երբեմն նա պեղել է կրկնաշրջան շինություններ, որոնք հացահատիկի պահեստներ են, կամ տնտեսական այլ նպատակների են ծառայել (մեծի տր. 6,48 մ, իսկ ներսի շրջանի տր. 4 մ)։ Նման կառուցվածքներ հայտնաբերվել են Ուրմիո լճի ափին, Թավրիզի մոտ՝ Յանիկ-Թեփեի 4B շերտում (մեծ շրջանի տր. 8 մ, փոքրինը՝ 5 մ)[5]։

Մեծ թվով նյութեր են հայտնաբերվել «Կարոյի կալի» լայնքով՝ 15 մ երկարությամբ և 1,5 մ լայնությամբ խրամատ փորելիս[6]։

1928 թ. Ե. Բայբուրթյանը Ե. Լալայանի պեղած խրամատի երկայնքով քառակուսիներ է փորում և պեղում մոտ 41,7 մ² տարածություն։ Պեղման ընթացքում երկու կուլտուրական շերտ է հայտնաբերվել, ստորին շերտը վերաբերվել է վաղ բրոնզի դարաշրջանին և հետաքրքրական նյութեր է տվել[7]։

Երկու տարվա պեղված նյութերում հատկապես մեծ տեղ են բռնում սև փայլեցրած և վարդագույն աստառով խեցեղենը, քարե և ոսկրե իրերը, ընտանի կենդանիների ոսկորները և այլն։ Բացվել են հացահատիկի հորեր՝ կիսով չափ լցված փտած հացահատիկով։

Էլարի դամբարանադաշտը, որտեղ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ պեղումներ կատարեցի 1960—1961 թթ., գտնվում է ավազահանքում, գյուղի արևելյան ծայրամասում իր բնակատեղից

---

1 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 36—52։

2 Նույն տեղում, էջ 38։

3 Նույն տեղում։

4 **Е. Байбуртян,** По поводу древней керамики из Шреш-блура, СА, III, 1937, էջ 209, **Б. А. Куфтин,** Урартский «колумбарий» ...էջ 102.

5 **C. A. Burney,** Excavations at Janik Tepe. (North-West Iran) „Iraq", v. XXIII, № 2, 1961, էջ 143, աղ. LXVI։

6 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 38։

7 Ե. Բայբուրթյան, նշվ. աշխ., էջ 209—210։

А III/3267

Հ. Թ. Չեխ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ

(«Կարոյի կալից») ընդամենը 300 քայլի վրա, նրա արևելյան և հյուսիս-արևելյան մասում:

Պեղված 25 դամբարաններից 17-ը վաղ բրոնզի դարաշրջանին են պատկանում (աղ. 1), որոնց կարելի է երկու խմբի բաժանել՝ քարարկղային (№ 4, 10, 17, մանր ու մեծ գետաքարերով և սալաքարերով կառուցված) և հիմնահողային (մնացած բոլոր 14-ը): Հիմնահողային դամբարանները, որոնք մեծամասնություն են կազմում, իրենցից ներկայացնում են կավածեփ պատերով քառանկյունաձև խցեր: Բոլոր դամբարանները ծածկված էին սալերով (1—5 սալքար) և լցված ավազով: Մեծամասնությունը ուղղված էին հարավից-հյուսիս, միայն երեք դամբարանները (№ 16, 17, 20) ուղղված էին հյուսիս-արևելքից, հարավ-արևմուտք: Թաղման ձևը բոլորի մոտ նույնն է: Հանգուցյալը մեծ մասամբ պառկեցված է աջ կողքի վրա, դեմքով դեպի արևելք (բացի վերը նշած երեք դամբարաններից, որոնցում նրանք դրված էին ձախ կողքի վրա, դեմքերը դեպի վեր): Կմախքները դրված են կծկված վիճակում, ոտքերը ծալած, իսկ ձեռքերը կամ ծնոտի տակ, կամ պարզած դեպի դեմքը: Դեմքից մի փոքր ցած, կամ կրծքի դիմաց, աջ կողքին շարված են կավամաններ, երբեմն ծածկված սկավառակաձև կափարիչով և դրված բարձրադիր լայն շուրթերով պատվանդանի վրա: Սրանց կողքին, երբեմն նաև գանգի հետևի մասում դրված են լայնաբերան քրեղաններ՝ մանր եղջերավոր կենդանիների ոսկորներով: Պատահում են դեպքեր, երբ գանգից վեր ուղղակի սպիտակ ավազի վրա դրված է մանր եղջերավոր կենդանու մի ամբողջ կրծքավանդակ: Դամբարաններում բացի կավամաններից հայտնաբերվել են նաև զարդարանքներ (բրոնզե ապարանջաններ, կայծքարե կոճակ, պաստայից ուլունքներ), զենքեր (դաշույններ, դանակներ, նեգի ծայր) և օբսիդաքարե դանակներ, շեղբեր:

Գյամրեզ. գտնվում է Աբովյանի շրջկենտրոնից 17 կմ հեռավորության վրա: Այստեղ 1938 թ. հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան բնակատեղի[1], որը դեռևս ուսումնասիրված չէ:

3. ՀՐԱԶԴԱՆԻ ՇՐՋԱՆԻ (ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱԶԱԶ ԳԱՎԱՌԻ) ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մի շարք բրոնզեդարյան հուշարձաններ հայտնաբերվել են նաև Հրազդան գետի հովտում՝ Քաղսիում, Բջնիում և Ջրառատում:

Քաղսի (պատմական Կակաղսի. շրջկենտրոնից 4 կմ հեռու): Բնակատեղին և դամբարանադաշտը գտնվում են Հրազդանի ափին՝ Ջայնենթայ կոչվող ձորում: Բնակատեղում հստակորեն գծագրված են կլոր կացարանների բազմաթիվ կոմպլեքսներ, որոնք դեռևս ուսումնասիրված չեն: Այստեղ 1955 թ. դամբարաններ է պեղել հնագետ՝ Հ. Մնացականյանը (հրապարակված չեն):

Ջրառատ գյուղը գտնվում է շրջկենտրոնից 7 կմ հեռավորության վրա: Այստեղ 1952 թ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ՝ Պետական պատմական թանգարանի արշավախումբը պեղեց վաղ բրոնզեդարյան մի դամբանաբլուր, որն առանց դամբանափոսի էր[2]: Թաղումը կատարվել էր գետնի երեսին պատրաստված սալահարթակի վրա: Այստեղ բացվեց ինը չափահաս մարդու և մեկ երեխայի կմախք: Հայտնաբերվեցին նաև օբսիդաքարե գործիքներ, նե-

---

[1] Ե. Բայբուրդյան, Ձեռագիր աշխատություն, էջ 41:

[2] Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները: Պատմաբանասիրական հանդես, 1965, № 2, էջ 95—96:

տասլաքներ, խիկի գլուխներ ոսկորից և սև փայլեցրած խեցեղեն՝ զարդարված ներճկված փոսիկներով, խուլ փոքրիկ կանթերով և ելուստներով (№ 1939)[1]:

Բջնի. շրջկենտրոնից 13 կմ հեռավորության վրա է գտնվում և հայտնի է վաղ բրոնզեդարյան խեցեղենով (№ 272):

4. ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Սևանի ավազանում վաղ բրոնզեդարյան մի շարք հուշարձաններ են հայտնի, որոնք գերազանցապես լեռնային բնույթի են:

Լճաշեն (Օրդաքլու, Սևանի շրջան, շրջկենտրոնից 4 կմ հեռու), որտեղ 1962 թ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ Պետական պատմական թանգարանի արշավախումբը հայտնաբերել է բնակատեղին և դամբարանադաշտը: Կիկլոպյան ամրոցի ստորին շերտում, 2,5 մ խորության վրա (8գ սենյակ) հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան մշակույթ՝ ազորիքներով, ոսկրե գործիքներով, խիկի ոսկրե գլուխներով և խեցեղենով, որը նմանեցվում է Շենգավիթի վերին շերտի, Էլարի, Գառնիի, Քաղսիի, Դիրաքլարի (Կառնուտ) խեցեղենին[2]: Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև Լճաշենի № 120 դամբանաբլուրը, որն առանց դամբանախուցի է և թաղումը կատարվել է գետնի երեսին մանր քարերով շարված շրջանաձև հրապարակի վրա և միջանցքաձև մուտքում: Դամբանաբլուրում հայտնաբերվել են 13 կմախք՝ նստեցրած վիճակում: Այն հարուստ է եղել խեցեղենով (մոտ 200 կտոր): Հայտնաբերվել են նաև պարուրաձև ապարանջան, մատանիներ մետաղից, քարե կախազարդ և այլն[3]: Ամրոցի և դամբանաբլուրի նյութերը Հ. Մնացականյանի կողմից թվագրվում են մթա III հազարամյակի 3-րդ քառորդով[4]:

Կամո (Նոր Բայազետ), հայտնի է Ե. Լալայանի կողմից (№ 115/28) և հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված վաղ բրոնզեդարյան նյութերով (№ 409, 558):

Աստղաձոր (Ալիղուլի, Մարտունու շրջան, շրջկենտրոնից 9 կմ հեռու), նույնպես հայտնի է Ե. Լալայանի կողմից պեղված դամբարանային նյութերով, որոնք գտնվում են Վրաստանի պետական թանգարանում և հրատարակված են Բ. Ա. Կուֆտինի կողմից[5]:

Ակունք (Ղըրխբուլաղ՝ Բասարգեչարի շրջան, շրջկենտրոնից 3 կմ հեռու), այստեղ 1961 թ. խեցեղենի բեկորներ է հավաքել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Գ. Միքայելյանը:

Ծովինարի ամրոց (Քոլաղրան, Մարտունու շրջան, շրջկենտրոնից 16 կմ հեռու), որի ստորին շերտի նյութերը ըստ Բ. Բ. Պիոտրովսկու շատ մոտ են Էլարին[6]:

Լեռնային բնույթի հուշարձան է նաև Ջաղջառիսը (Ապարանի շրջան, շրջկենտրոնից 16 կմ հեռու), որտեղ 1951 թ. Հ. Մնացականյանը վաղ բրոնզեդարյան դամբարաններ է պեղել:

---

1 Նույն տեղում, էջ 96:

2 Նույն տեղում, էջ 95—96:

3 Նույն տեղում, էջ 96:

4 Նույն տեղում:

5 Б. А. Куфтин, Урартский «колумбарий»..., էջ 99, նկ. 51 a, աղ. XX_1:

6 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, էջ 36.

5. ՏԱՇԻՐ-ՁՈՐԱԳԵՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի հյուսիսի ամենախիտ բնակեցված շրջանը վաղ բրոնզեդարում Տաշիր-Ձորագետն է և հատկապես Կիրովականի մերձակայքը:

Վաղ բրոնզեդարյան հուշարձաններով հարուստ է Կիրովականի արևելյան կողմում գտնվող «Դիմացի թաղը», որը քաղաքի ամենաբարձրադիր մասն է և երեք կողմից շրջապատված է գետերով. հարավ-արևմուտքից՝ Տանձուտ, իսկ հյուսիսային կողմից՝ Փամբակ գետերով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հուշարձաններից այստեղ հայտնի են՝ Թագավորանիստը և նրա հարավ-արևելյան լանջին հայտնաբերված դամբարանադաշտը, ինչպես և Թագավորանիստից մոտ 2 կմ դեպի հարավ՝ Մաշտոցի բլուրը և նրա դամբարանադաշտը:

Հնագիտական հայտնագործություններից պարզվում է, որ Տանձուտ գետի երկու ափերն էլ վաղ բրոնզի դարաշրջանում բավական խիտ են բնակեցված եղել: Նրա աջ ափը կազմում է բարձրադիր Դիմացի թաղը, իսկ ձախ ափին Կիրովականի թանգարանի աշխատակից՝ Ե. Մոմջյանը հողային աշխատանքների ժամանակ բնակատեղիի հետքեր է հայտնաբերել Թագավորանիստի դիմացի բլրակում, գետի հակառակ հոսանքով դեպի վեր՝ Հոկտեմբերյան և Շուռ փողոցների միջև՝ գետափնյա բլրակի վրա, ապա Խնձորուտ գյուղի կողմը, Տանձուտ գետի ափին՝ տափարակ «յաբաղ» կոչվող հարթավայրում և այլն:

Վաղ բրոնզի դարաշրջանի բնակատեղի հայտնաբերվել է նաև Կիրովականի շրջանի Համզաչիման գյուղում, Աղստև գետի ակունքի մոտ՝ Սարի-սափ բլուրի վրա: Վերջերս Ղազախում, նույն Աղստև գետի ափերին, Ադրբեջանի հնագետները հայտնաբերել և պեղում են էնեոլիթյան և վաղ բրոնզի դարաշրջանի մի շարք հուշարձաններ՝ Թոյրե-թեփեն, Շոմու-թեփեն և Բաբա-դերվիշը: Շատ հավանական է, որ այս գետի երկու ափերն էլ վաղ բրոնզի դարաշրջանում խիտ բնակեցված են եղել և հավանաբար ապագայում հնագիտական հետազոտությունները այդ կապացուցեն:

Կիրովականում վաղ բրոնզի դարաշրջանի մեկ այլ բնակատեղի հաջողվել հայտնաբերել ինձ, բժկոմբինատի դիմաց՝ Փամբակ գետի ձախ կողմում գտնվող բնական բարձունքի վրա՝ Քոսի-ճոթեր կոչվող հանդամասում:

Նույն դարաշրջանի բնակատեղիներ են հայտնաբերվել Կիրովականի շրջանի նաև Փառնի և Եղեգնուտ գյուղերում, Ֆիոլետովոյում[1]:

Հետախուզական պեղումներ կատարվել են միայն Թագավորանիստում և Քոսի-ճոթերում, մյուս բոլոր հուշարձանները հայտնաբերվել են պատահաբար, հողային աշխատանքների ժամանակ:

Թագավորանիստ. գտնվում է Կիրովականի արևելյան կողմում՝ Դիմացի թաղի հյուսիս-արևմտյան անկյունում: Նա երեք կողմից, հյուսիս-արևմտյան և հարավային, շրջապատված է գետերով: Բնակատեղին տեղավորված է բարձր բնական բլուրի վրա, որի գագաթը հարթ է, իսկ հարավ-արևելյան լանջն աստիճանաբար դեպի վար իջնող տեռասների շարք է ներկայացնում:

---

[1] Թագավորանիստի, Քոսի-ճոթերի և Ֆիոլետովոյի նյութերի մի մասը գտնվում են ՊԳԹ-ում, իսկ Քոսի-ճոթերի նյութերի մյուս մասը և վերոհիշյալ մյուս բոլոր հուշարձանների նյութերը գտնվում են Կիրովականի Գավառագիտական թանգարանում, որն այսուհետև կօգտագործվի կրճատ՝ ԿԳԹ:

Նյութերի հետ ծանոթանալու և օգտագործելու համար շնորհակալություն եմ հայտնում թանգարանի աշխատակից՝ Ե. Մոմջյանին:

1938 թ. այստեղ, գետի երեսից վաղ բրոնզի և ավելի ուշ շրջանի խեցեղեն են հավաքել հնագետներ՝ Ե. Բայբուրթյանը, Կ. Ղաֆադարյանը և հանձնել պատմական թանգարան (№ 1475)։ Նույն թվականին Ե. Բայբուրթյանը հարավ-արևելյան լանջի պեղումների ժամանակ, վերին հրապարակից 2 մ ցած հայտնաբերել է հինգ ոչ մեծ քարերի մեկ շարքից կազմված լանջի հենապատ (1,43 մ բարձրությամբ)։ Պատի առջև կառուցված 1,38 մ լայնությամբ հարթակի վրա, պատի հիմքին հավասար խորության մեջ հայտնաբերվել է կոտրված մեծ կճուճ սև փայլեցրած մակերեսով (Ե. Բայբուրթյանի արտահայտությամբ՝ Շենգավթի տիպի զարդանախշերով) և այլ նյութեր[1]։

1959 թ. Կիրովականում մեր կողմից կատարված հետախուզական պեղումների ընթացքում, հարավային լանջի հենապատի հիմքերի մոտ բացված հրապարակի մոխրաշերտում հայտնաբերվեցին վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղենի բեկորներ, կենդանիների ոսկորներ, եղջյուրից պատրաստված գործիք, օբսիդաքարե քերիչներ և շեղբեր (№ 2128)։ 1938 և 1959 թթ. գետի երեսից հավաքած և հետախուզական պեղումների ժամանակ ձեռք բերված նյութերում բացի վաղ բրոնզից կան նաև մթա VIII—VI դդ. նյութեր[2]։

Թագավորանիստի բնակատեղիից ոչ հեռու, նրա հարավ-արևելյան փեշերում տեղավորված է եղել նրա դամբարանադաշտը, որտեղ առաջին անգամ պատահաբար դամբարաններ են բացվել 1893 թ.[3]։ Նույն տեղում 1949 թ. մի շարք դամբարաններ է բացել նաև Ե. Մոմջյանը։

Թագավորանիստի գետի երեսից և մասամբ հետախուզական պեղումներով ձեռք բերված նյութերը չնայած քիչ են և հնարավոր չէ նրանց միջոցով ամբողջական պատկերացում կազմել այդ հուշարձանների վերաբերյալ, սակայն կարելի է խոսել խեցեղենի ձևերի, զարդանախշերի կատարման եղանակի մասին և որոշել նրա տեղը վաղ բրոնզի դարաշրջանի մյուս հուշարձանների շարքում։

Քոսի-Ճորեր *բնակատեղին գտնվում է Փամբակ գետի մոտ, բարձրադիր մի վայրում, Կիրովականի քիմկոմբինատի դիմաց[4]։ Այն գագաթով դեպի հյուսիս ուղղված բարձրադիր եռանկյունաձև մի հրվանդան է, երկու կողմից շրջապատված խոր ձորերով (արևմուտքից՝ «Շլորկուտի ձորով», իսկ արևելքից՝ «Հայդարբեկի ջրով»), որոնց միջով փոքրիկ գետակներ են հոսում։ Հարավից այն մի աստիճանաձև բարձունք է ներկայացնում՝ կազմված 10 հսկա տերրասներից, որոնցից յուրաքանչյուրն ունի մոտ 15 մ լայնություն։ Հրվանդանի գագաթը հարթ է, տափակ, դարեր շարունակ այն որպես հանդամաս է ծառայել։ Այժմ էլ նրա, ինչպես հարթ գագաթը, այնպես էլ տերրասների մակերեսը օգտագործում են որպես ցանքատարածություն։*

1960 թ. բնակատեղիի երկայնքով, ջրամբարի և ջրատար խողովակների համար արևմտյան կողմից վերից-վար՝ հյուսիսից-հարավ գծով, 2—3 մ խորությամբ, 3 մ լայնությամբ և մոտավորապես 250 մ երկարությամբ խրամատ փորվեց։

---

[1] Ե. Բայբուրդյան, *Ձեռագիր աշխատություն, էջ 39—40։*

[2] Է. Խանզադյան, *Հետախուզական պեղումներ Կիրովականի մերձակայքում, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1962, № 10, էջ 75—78։*

[3] **Б. Б. Пиотровский**, *նշվ. աշխ., էջ 36։*

[4] Է. Խանզադյան, *նշվ. աշխ.։ Նույնի,* Энеолитическое поселение близ Кировакана, СА, № 1, М., 1963, *էջ* 152—161.

Այս կտրվածքը երևան բերեց կուլտուրական մնացորդներով հագեցված շերտեր։ Բնակատեղիի 6-րդ տեռրասի վրա, խրամատի աջ եզրին, 25 մ² տարածության վրա, կատարեցինք մեր հետախուզական պեղումները։

Բնակատեղիի 1,5 մետր խորություն ունեցող վերին կուլտուրական շերտի ուսումնասիրությունից պարզվեց, որ այն վերաբերվում է մ.թ.ա. VIII—V դարերին։

Գետնի մակերեսից մոտ 2 մ խորության վրա սկսվեց ստորին շերտը, որը վաղ բրոնզի դարաշրջանին վերաբերող հետաքրքիր նյութեր տվեց։

Այս շերտում հայտնաբերվեցին կլոր կացարանի քարե հիմքերը մոտ 1 մ բարձրությամբ և 0,45 մ հաստությամբ, որոնք կառուցված էին վեց շարք իրար վրա չոր շարված միջին մեծության անմշակ քարերով։ Պատի արտաքին երեսին մոտ 2—3 սմ հաստությամբ պահպանվել էին կավե ծեփի հետքեր։ Կավե հատակը 6—10 սմ հաստությամբ, շինված էր նարնջագույն քարի և ավազի բավական ամուր բնական խառնուրդ ունեցող մայր հողի վրա։ Գետնին փռված էին փայտի և հյուսածո եղեգնի բազմաթիվ այրված կտորներ, որոնք հավանաբար ժամանակին կազմել են կացարանի ծածկը։ Կավե հատակի վրա գտնըվեցին նաև կենդանիների ոսկորներ, քարե և ոսկրե գործիքներ, զարդեր, վաղ բրոնզի դարաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներ։ Հատակի կենտրոնում ձվաձև փոսի մեջ՝ մոխրաշերտում հայտնաբերվեցին աղորիքների բեկորներ, իլիկի գլուխ ոսկորից, մանգաղի ներդիր վարդագույն կայծքարից, փոքրիկ տուֆե անիվ, վարազի ժանիք և խեցեղենի բեկորներ։

Կավե հատակի հյուսիս-արևելյան անկյունում բացված քարերով կազմըված օջախից ոչ հեռու գտնվեցին եղջերուների չորս եղջյուրներ՝ կիսայրված վիճակում և մատերի ոսկորներ՝ անցքով։

Բնակատեղում գտնվեց նաև թրծած կավից պատրաստած, Շենգավիթի տիպի կլոր օջախի երկու բեկոր՝ վերին հարթ մակերեսի երկու եզրերը զարդարված հատած եռանկյունիների գծային ժապավեններով։

Ուշադրության են արժանի նաև Քոսի-Ճոթեր բնակատեղում պեղված հրապարակից մի քանի մետր բարձր, առվի երկու եզրին բացված կլոր հատակագծով, կոնաձև կտրվածքով կառուցվածքները, որոնք փորված էին բնական, նարնջագույն, քարքարոտ, ավազախառն շերտի մեջ։ Պատերն ունեին կավե ծեփ։ Այս կոնաձև փոսերը լցված են մոխրով, այրված, շեկ գույնի հողով և փայտի ածուխով։ Դժվար է որոշել նրանց ինչ լինելը, սակայն կարելի է ենթադրել, որ նրանք սրբազան մոխրի փոսեր են եղել, որտեղ լցրել են պաշտամունքային օջախներից հանված մոխիրը։

Պեղումների ընթացքում գտնվեցին եզան, ձիու, խոզի և գոմեշի ոսկորներ։ Հայտնաբերվել են նաև ազնիվ եղջերուի, կխտարի, վայրի այծի ոսկորներ[1], որոնք ապացուցում են, որ նրանք զբաղվել են նաև որսորդությամբ։

Գեոմորֆոլոգների աշխատանքները և պեղված նյութերը[2] ցույց են տալիս, որ բնակատեղիի շրջակայքը ծածկված է եղել լայնատերև անտառներով, որը որսի լայն ասպարեզ կտար Քոսի-Ճոթերի վաղ բրոնզեդարյան բնակիչներին։ Քանի որ բնակատեղին շրջապատված է եղել գետակներով, պարզ է, որ նրանք անշուշտ զբաղվել են նաև ձկնորսությամբ։

Այսպիսով Կիրովականի վաղ բրոնզի դարաշրջանի հուշարձանները գտնըվում են իրար բավական մոտ և գերազանցապես լեռնային բնույթի են։ Կա-

[1] Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը կատարել է Ս. Մեժլումյանը։

[2] Փայտի ուսումնասիրությունը կատարել է Լ. Փալանջյանը։

ռուցվել են շրջակայքի նկատմամբ գերիշխող բնական բարձունքների վրա, իրենցից ներկայացնում են զառիթափ հրվանդան՝ շրջապատված գետերով: Ժամանակավոր բնակության հետքեր գտնվում են նաև այդ բարձունքների դիմաց՝ գետի հակադիր ափերին: Թե՛ Քոսի-ճաթերը, և թե՛ Թագավորանիստը հարավ-արևմտյան կողմից ունեն տեռրասների շարքեր: Այդ հուշարձանները շնորհիվ բարենպաստ դիրքի բնակեցված են եղել նաև երկաթի դարաշրջանում:

Կիրովականի վերոհիշյալ հուշարձանների նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանք ունեն արտակարգ մեծ նմանություններ և կարող են դիտվել որպես ազգակից տոհմերի կամ ցեղերի միևնույն մշակույթի արգասիքը:

Հուշարձանների մի խումբ հայտնաբերվել է նաև ներկայիս Սպիտակի և Ալավերդու շրջաններում:

Սպիտակի շրջանի շրջկենտրոնում հայտնի է Սարդարի կոնտ բլուրը. Նալբանդ գյուղում՝ Դպրոցի բլուրը, իսկ Գեղարոտում՝ Բերդ բլուրը, որտեղից 1956 թ. Հ. Մարտիրոսյանը վաղ բրոնզեդարյան խեցեղեն է հավաքել:

Ալավերդու շրջանում չորս հուշարձաններ են հայտնի՝

Ալավերդին, *որտեղ ակումբի շինարարության ժամանակ 1931 թ. հայտնաբերվել է կոցավոր կացին (ինվ. № 759/6):*

Ճամլուղ *գյուղը (Ալավերդու կայարանից 8* կմ *հեռավորության վրա), որտեղ հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան խեցեղեն (№ 2073, 2074):*

Արդվի *գյուղը (շրջկենտրոնից 18* կմ *հեռու), որտեղ 1927 թ. հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է ռելեֆ-ներճկված զարդանախշերով խեցեղեն (№ 1038):*

Արնակ *գյուղում ակադ. Ն. Յա. Մառն ավելի ուշ շրջանի խեցեղենի հետ հայտնաբերել է նաև Ե. Բայբուրթյանի արտահայտությամբ՝ Տրեչ-բլուրի տիպի խեցեղեն*[1]:

Այսպիսով Ալավերդու շրջանի վաղ բրոնզեդարյան հուշարձանները չնայած դեռևս ուսումնասիրված չեն, սակայն պատահաբար հայտնաբերված նյութերը վկայում են այն մասին, որ այդ շրջանը նույնպես խիտ բնակեցված է եղել հիշյալ ժամանակաշրջանում:

6. ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Լենինական. *այստեղ մսի կոմբինատի մոտ, ցամքարանադաշտից հողային աշխատանքների ժամանակ 1938 թ., հայտնաբերվել են մթա III հազարամյակի կճուճներ (№ 1510, 1511):*

Պատահականորեն հայտնաբերված մի շարք արժեքավոր նյութեր, որոնք գտնվում են Լենինականի գավառագիտական թանգարանում, օրինակ՝ բրոնզից կոթառով սեպաձև կացինը, պղնձե դաշույնը, կոցավոր կացինը և այլն[2], *վկայում են տեղում մետաղաձուլության և փոխանակային կապերի գոյությունը Հին Արևելքի և Անդրկովկասի հետ:*

---

[1] Ե. Բայբուրթյան, *Հայաստանի ցունազարդ կերամիկայի պրոբլեմը*, էջ 296։

[2] **А. А. Мартиросян**, О древнем поселении около Ленинакана, Изв. АН Арм. ССР, №, 10, 1952, *էջ 37։ Նույնի*, К предыстории древнейших этипов культуры Армении. *Պատմա-բանասիրական հանդես, 1960, № 1, էջ 92—99։*

Քեթի գյուղը (Լենինականից 12 կմ հեռավորության վրա) նույնպես հայտնի է վաղ բրոնզեդարյան նյութերով (№ 1689, 1266)։

Կառնուտ գյուղը (Դիրաքլար) գտնվում է Լենինականից 9 կմ հեռավորության վրա։ Այստեղ 1938 թ. գարնանը Հուշարձանների պահպանության կոմիտեի ներկայացուցիչների կողմից հայտնաբերած բնակատեղին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես սև փայլեցրած զարդարուն խեցեղենով (№ 1473)։

Տիգնիս բնակատեղից (գտնվում է Թուրքական սահմանում) հայտնաբերված նյութերը պահպանվում են ՊՊԹ-ում (№ 636)։

Սառնաղբյուր (Սոգյութլու) գտնվում է Աղինից 7 կմ դեպի հարավ-արևելք։ Այստեղ հայտնաբերվել է վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղեն (№ 1547)։

Հառիճում (Ղփչաղ, Արթիկի շրջան, շրջկենտրոնից 5 կմ հեռու) 1931 թ. հարավ-արևելյան ձորում աղբյուրի ջրատար խողովակների մոտ հայտնաբերվել է սև փայլեցրած խեցեղեն էլարյան տիպի (№ 781)։

7. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայտնի է ներկայումս միայն դամբանաբլուրներով։ **Խաչենագետի** աջ ափին, Արչաձորից մոտ 9 կմ դեպի հարավ-արևելք 1897 թ. է. Ռեսլերը պեղել է հինգ դամբանաբլուրներ, որոնք չնայած արտաքին նմանությունների (կլոր են, հարթ գագաթով և ոչ բարձր), միմյանցից տարբերվում են թաղման ձևով[1]։ Մի խումբ դամբանաբլուրներում գտնվում է դիակիզման ձևը (№ 4 և 5), մյուսներում դիաթաղման ձևը (№ 1, 2 և 3)։

№ 1 դամբանաբլուրը Ջրառատի և Լճաշենի № 120 դամբանաբլուրների նման դամբանախուց չի ունեցել և դամբանաբլուրը կազմող գետաքարերի մեջ հայտնաբերվել են չորս կմախք նստեցրած, դեմքերով դեպի արևելք։ Ոչ մի իր չի հայտնաբերված։

№ 2 դամբանաբլուրի տակ քառանկյունաձև հիմնահողային դամբարանում կմախքը պառկեցված է եղել մեջքի վրա, ձեռքերը կողքին ձգված, գլուխը հարավ-արևմուտք։ Դամբարանում հայտնաբերվել են բրոնզե դաշույն, քարե գնդաձև գուրզ, ոսկե զարդարանքներ, օբսիդիանե շեղբեր, սև փայլեցրած վերադիր զարդերով խեցեղեն։

№ 3 դամբանաբլուրի հիմնահողային դամբարանում հայտնաբերվել են երկու կմախք՝ մեջքի վրա պառկեցրած, որոնց հետ դրվել են բրոնզե դաշույն, պարուրաձև փաթաթված բրոնզե զարդարանք՝ վերափաթաթված ոսկե թիթեղով։

№ 4 և 5 դամբանաբլուրների դամբանախցում դիակիզման հետքեր են հայտնաբերվել, մեկում (№ 4) սակավաթիվ իրեր, մյուսն առանց իրերի։

8. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Վաղ բրոնզեդարյան հուշարձանների մի ստվար խումբ հայտնաբերվել է Արևմտյան Հայաստանում։

---

[1] Խաչենագետի դամբանաբլուրների մանրամասն նկարագիրը տվել է Կ. Քուշնարյովան, տե՛ս **К. Х. Кушнарева**, Памятники медного века в Нагорном Карабахе, СА, XX, 1956, էջ 165—179։

Բագրևանդում (Ալաշկերտի դաշտ, Ղարաքիլիսա, Կարագյող) դեռևս երկու հուշարձաններ են հայտնի՝ Ցիգնիրեփեն *և* Մուսուրին *(Ղարաքիլիսայից արևմուտք)*[1]*:*

Վանանդ *գավառում հայտնի է Կարսի մոտ՝ Մեջիտլի գյուղը*[2]*: Ջալդրանի դաշտում* Կյուլֆյուրյուլակը*՝ Վանա լճից մոտ 30* կմ *դեպի հյուսիս-արևելք, որտեղից հայտնաբերված նյութերը Չ. Բարնեի կողմից վերագրվում են վաղ բրոնզի զարգացման երրորդ փուլին*[3]*:*

Կարինի *(Էրզրումի) շրջակայքում երեք հուշարձաններ են հայտնի՝* Սոսը *և* Թեփեջիկը *(Բասենի դաշտում), Հասանկալայի հովտում՝* Էրզրումից *հյուսիս և* Արծնը *(Կարազ): Այս հուշարձաններից ուսումնասիրված է Արծնը:*

Արծնը *(Կարազ, Ղարարչ)*[4]*, գտնվում է Էրզրումից 16* կմ *դեպի հյուսիս-արևմուտք: Այն 16 մ բարձրություն և 200 մ երկարություն ունեցող մի բլուր է: Այստեղ թուրքական պատմագրական ընկերությունը պեղումներ է կատարել 1942—1944 թթ. Համիդ Քոշայի ղեկավարությամբ*[5]*: Պեղումների ընթացքում պարզվել է, որ այն կազմված է 15 շինարարական շերտերից, որոնցից վերին շերտերը վերաբերվում են վաղ բյուզանդական շրջանին, իսկ ստորինները վաղ բրոնզի դարին: Շերտերը դասավորված են ոչ թե իրար վրա, այլ բլուրի լանջերին: Ինչպես Հ. Քոշայն է արտահայտվում, ճարտարապետական կառուցվածքների մասին դեռևս դժվար է լրիվ գաղափար կազմել, բայց հանդիպում են բազմակուսի սենյակներ, քարե հիմքերով և հում աղյուսի պատերով*[6]*: Հայտնաբերված իրերում գերազանցում է սև, վարդագույն փայլեցրած զարդարուն խեցեղենը: Հետաքրքրական են օջախները և օջախի հենակները: Հայտնաբերվել են կայծքարե և օբսիդաքարե իրեր, նաև մետաղե իրեր, գաշույններ, կախակթաև կացին, ասպարանջաններ, հերազարդար և այլն*[7]*:*

Վաղ բրոնզեդարյան հուշարձաններ հայտնի են նաև Երզնկայից հյուսիս՝ Բյուրում *(Պուլուր)*[8] *և նրանից հյուսիս-արևելք՝* Բայբուրդի դաշտավայրում[9]*: Այս մշակույթը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում տարածվում է Սվազի երկու գավառներում՝* Դիվրիգում *և* Կանգալում*: Դիվրիգում հայտնի են* Հորոնվիլ, Ցերո, Սիվրիկկայա, Արմուտակ *բնակատեղիները, իսկ Կանգալում՝* Կեյգիրմինդե–Հույուկը *և* Եշիլկալեն[10]*: Սակայն Սվազից արևելք՝ Զարա և Հաֆիկ գավառներում այն այլևս չի հանդիպում*[11]*:*

Ուսումնասիրվող դարաշրջանի հուշարձաններով բավական հարուստ է Վանա լճի շրջակայքը:

Արծկեում *(Ադիլջևազ, Վանա լճի հյուսիսային ափին, Սիփանից հարավ) հայտնաբերվել են սև փայլեցրած հաստախեցի, ռելեֆ հաստ շուրթերով, կի-*

---

[1] **C. Burney,** Eastern Anatolia, in the chalcolitic and early Bronze Age, *էջ 187:*

[2] Коллекции Кавказского музея, т. V. Карская область, *էջ 131:*

[3] **C. Burney,** *նշվ. աշխ., էջ 186:*

[4] **N. Z. Koşay**, K. Turfan, Erzurum-Karaz Kazisi raporu. TTK Belleten, XXIII, 1959, № 91, *էջ 360:*

[5] *Նույն տեղում, էջ 367:*

[6] *Նույն տեղում, էջ 358:*

[7] Winifred Lamb, The culture of North-East Anatolia and its Neighbours. Anatolian Studies, I, 1954, *էջ 24:*

[8] **C. Burney,** *նշվ. աշխ., էջ 161:*

[9] *Նույն տեղում, էջ 166:*

[10] *Նույն տեղում, էջ 166, տե՛ս նաև քարտեզ III:*

[11] *Նույն տեղում, էջ 166:*

ազնդաձև կանթերով և ներճկված փափկներով զարդարված խեցեղեն, որը Չ. Բարնեյը վերագրում է վաղ բրոնզի 1-ին և 2-րդ փուլերին[1]:

Արճեշը (Էրճիս, Էրջիս, Վանա լճի հյուսիսային ծայրում) հայտնի է 1937 թ. հայտնաբերված քարարկղային թաղումներով, որի խեցեղենն իր զուգահեռներն ունի Էլարում: Չ. Բարնեյը այդ խեցեղենը վերագրում է վաղ բրոնզի 2-րդ փուլին[2]:

Առեստում (Բիչիկյումբեթ, Վանա լճի հյուսիս-արևելյան ափին) հայտնաբերվել է նման խեցեղեն[3]:

Վանի ամրոցը, նրա ստորոտի բնակատեղին և Հայկր (Իրեմիր), Վանա լճի հարավ-արևելյան մասում, որտեղից հայտնաբերված խեցեղենը Չ. Բարնեյը վերագրում է վաղ բրոնզի 1-ին և 2-րդ փուլերին[4]:

Մի շարք հուշարձաններ հայտնաբերվել են Վանա լճից արևելք՝ Արճակ լճի արևելյան ափերին՝ Խառակոնիսը (Կարագյունդուզ), Արճակ լճի հյուսիս-արևելյան մասում՝ Քեչաննեսը (Կեչանենիս), Արճակից արևելք՝ Հինոն (Խանու), Արճակի հարավային ափին՝ Մոլլա-Հասանը (Աչագի Մոլլահասան), Մահմեդիկ գետի ափին՝ Քեչաննեսից արևելք[5]:

Հուշարձանների մեկ այլ խումբ հայտնաբերվել է Մանազկերտի և Բուլանըխի շրջանում, Մանազկերտից մի փոքր հարավ-արևմուտք Խաչլու (Բուլանա) լճի շրջակայքում՝ Շեյխ-Յաղուբում (Շեյխյակուպ), լճից հյուսիս, Բլուրում (Գուլուր)՝ նախորդից մի փոքր հարավ-արևելք, Քիճեղույում (Կեկեոլի), լճի հարավ-արևելյան մասում, Լիզում՝ լճից դեպի արևմուտք և Բուլանըխում[6]:

Բազմաթիվ հուշարձաններ հայտնաբերվել են Մշո դաշտում՝ Ալիկիրպաճ, Խորոնք (Օգոնկ, Մուշ քաղաքից հյուսիս արևմուտք), Շեյխաբիրիմ II, Գայբեյան, Ջիարեթ (Արածանիից հյուսիս), Սողոմ-բեփենի (Մուշի մոտ, Բիթլիսի ճանապարհին), Մեղրագոմ (Միգրակոմ), Դոմ, Կիրքագոմ, Շեյխ-յուսուֆ, Հոնան[7]: Մի շարք բնակատեղիներ հայտնի են Բուլուի շրջակայքում[8]:

Խարբերդի (Էլյազիգ) շրջանից հայտնի են նրանից արևմուտք ընկած բնակատեղիները՝ Հուլվենքը, Ակչիկին, Էրգուրուկը, Հինձորը, Հանքենդին, Տագիմը, Կույուլան, Ոլուովան: Խարբերդի բերքառատ դաշտավայրում (Ալտինովա), որն ընկած է Խարբերդ քաղաքից հարավ-արևելք, հայտնաբերվել են մի շարք բնակատեղիներ՝ Հողյու, Քենկի, Տյուլին-թեփե, Իշմե (Աշագի-իշմե), Գոմք (Կոնք), Սարբլուր, Կյովենկ, Տիլանձիտ (Տինացիտ), Թեփեջիկ, իսկ Ծովք (Գոլջուք) լճից հարավ-արևելք՝ Արղանա-Մադենում (Սարսափ մեկիկ)[9]:

Մալաթիայի շրջանում վաղ բրոնզեդարյան հուշարձաններ հայտնաբերվել են՝ Արսլան-թեփեում, Ֆերենջիում, Ֆիրաք-գյոլու-Հույուկում, Հասիրջի Ալ-ում, Սամանքյոյում, Ֆերիյեում: Մալաթիայից արևմուտք՝ Ակչադաղում երեք հուշարձաններ են հայտնի՝ Յուկարի՝ Օրուկքյոյ, Իկինջիլեր, Էորեն[10]: Մա-

[1] C. Burney, նշվ. աշխ., էջ 179:

[2] Նույն տեղում, էջ 178—179:

[3] Նույն տեղում, էջ 178:

[4] Նույն տեղում, էջ 178, քարտեզ II:

[5] Նույն տեղում, քարտեզ II:

[6] Նույն տեղում, էջ 187, քարտեզ II:

[7] Նույն տեղում, էջ 192—193, քարտեզ II:

[8] Նույն տեղում, էջ 157:

[9] Նույն տեղում, էջ 193—194, քարտեզ III:

[10] Նույն տեղում, էջ 195, քարտեզ III:

լթիայից հյուսիս նույն ժամանակաշրջանի հուշարձաններ հայտնաբերվել են Արդավանի շրջանում և նրանից արևմուտք՝ Հերիմխանում: Արդավանի բնակատեղիներից հայտնի են՝ Կարանույուկը, Իսակֆյոյը, Յուկարի-Սուլեյմենլին, Հոռոմխանը, *իսկ Հերիմխանից՝* Յուկարի-Բուդաղլին, Աչագի-Սակլիջան, Հաջար-բեփեն[1]:

Հուշարձանների նման բազմությունը խոսում է այն մասին, որ Հայկական լեռնաշխարհը մթա III հազարամյակում բնակեցված է եղել բավական խիտ և այդ հուշարձանների ուսումնասիրությունը հնարավորություն կտա հանգամանորեն և բազմակողմանիորեն վեր հանել բնիկների մշակույթի և կենցաղի հետ կապված մի շարք կարևորագույն հարցեր:

Ամփոփելով նյութը կարելի է նկատել, որ ըստ բնակատեղիների դիրքի, Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզի դարաշրջանի երկու տիպի հուշարձաններ են հայտնի:

1. Արհեստական բլուրների վրա:

2. Բնական բլուրների և բարձունքների վրա:

Արհեստական բլուրները հում աղյուսով կառուցված բնակարանների մնացորդների հզոր շերտերով և կուտակված մոխրի խավերով առաջացած բլուրներ են, որոնք բնորոշ են հարթավայրերին: Մեզ մոտ ստացել են մոխրաբլուր, Առաջավոր Ասիայում «թելլ», իսկ Միջին Ասիայում «թեփե» անունը:

Հայկական լեռնաշխարհում արհեստական բլուրների շարքը կարելի է դասել Արարատյան դաշտավայրի հուշարձանները, Կարնո դաշտում՝ Արծնը (Կարազ): Նման բլուրներ հայտնի են Իրանական Ադրբեջանում՝ Ուրմիա լճի արևմտյան ափին՝ Գեոյ-Թեփեն, որի վաղ բրոնզեդարյան շերտի հաստությունը հասնում է 6 մ[2]*: Երեք բլուրներ հայտնաբերվել են Ուրմիա լճի արևելյան ափին Յանիկ-Թեփեում («այրված բլուր»), Թավրիզից հարավ-արևմուտք, մոտ 16,5 մ բարձրությամբ*[3]*:*

Մոխրաբլուրներ հայտնաբերվել են նաև Վրաստանում, հատկապես Ներքին Քարթլիում և Հարավային Օսեթիայում (Նացար-գորան)[4]*: Հյուսիս-արևելյան Կովկասում մոխրաբլուր հայտնի է Դաղստանում՝ Մամայկուտանյան բնակատեղիում*[5]*:*

Երկրորդ տիպի հուշարձանների համար, վաղ բրոնզի դարաշրջանի բնակիչները բնակության վայր են ընտրել բարձր լեռնային և գետային տերրասներում, այնպիսի տեղերում, որոնք շրջապատի նկատմամբ գերիշխող դիրք են ունեցել, երկրագործության և անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմաններ: Այս հուշարձանները մեծ մասամբ լեռնային և նախալեռնային բնույթի են:

Հայկական լեռնաշխարհում նման հուշարձանների թվին են պատկանում, ինչպես տեսանք Կիրովականի մերձակայքի, Աղստև գետի հովտի հուշարձանները, Գառնին, Էլարը, Ծովինարի ամրոցը և այլն:

---

1 **C. Burney,** *նշվ. աշխ.:*

2 **T. Burton—Brown,** Excavations in Azarbaijan, 1948, London 1951, էջ 24—52:

3 **C. A. Burney,** Excavations at Janik Tepe. էջ 138—141:

4 **Б. А. Куфтин,** Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию. ИАН Груз. ССР, Тб. *1949, էջ 54—55:*

5 **Р. М. Мунчаев,** Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, № 100, *1961, էջ 32:*

Ուշագրավ է այն հանգամանքը, որ վերոհիշյալ բնական բլուրների և բարձունքների մեծ մասի վրա բրոնզի դարաշրջանից հետո էլ կյանքը չի դադարել։ Ուրարտական դարաշրջանում, անտիկ շրջանում և միջնադարում նրանք մեծ մասամբ վեր են ածվում պարսպապատ քաղաք-ամրոցների։

Բնական բարձունքների վրա են կառուցված Վրաստանում՝ Աքիլարի ամրոցը (Բեշտաշենի մոտ) և Խիզանաանթ-գորան (Ուրբնիսում)[1], Ամիրանիս-Գորան (Ախալցխայում)[2]։ Հյուսիս-արևելյան Կովկասում բնակատեղիները մեծ մասամբ գետափնյա բնական բլուրների կամ բլրաձև բարձունքների վրա են կառուցված[3]։

Ինչպես վերը տեսանք, Շենգավիթի, Շրեշ-բլուրի, Աղթամիրի, Գառնիի և Մուխաննաթ-Թափայի պեղումների միջոցով պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիներն իրենցից ներկայացնում են պաշտպանական ամրոցներ, շրջափակված կիկլոպյան պարիսպով, որոնք ունեցել են աշտարակներ և ստորերկրյա գաղտնի մուտք։

Թռեղքում (Թրիալեթի) ևս մ.թ.ա. III հազարամյակի մշակույթը հայտնաբերվել է կիկլոպյան ամրոցներում[4]։ Նույն պատկերը մենք տեսնում ենք և Իրանական Ադրբեջանում, որտեղ Յանիկ-Թեփեի վաղ բրոնզեդարյան բնակատեղին շրջապատված է մեծ, անմշակ քարերով կառուցված կավածեփ պարիսպով[5]։

Գեոյ-Թեփեի «K» շերտում հայտնաբերվել է բլուրը շրջափակող մի հաստ պաշտպանական պարիսպ, որը շարված է հում աղյուսով, ներսից լցված քարերով[6]։

Ջնայած Հայկական լեռնաշխարհում բնակատեղիների պարսպապատման սկիզբը այժմ վերագրվում է մ.թ.ա. III հազարամյակին, սակայն այդ սովորույթի գոյությունը հարևան երկրներում դեռևս մ.թ.ա. VI—IV հազարամյակներում (Մերսինում, Հաջիլարում, Յերիխոնում)[7], ենթադրել է տալիս, որ Հայկական լեռնաշխարհում ևս այն պետք է սկիզբ առած լինի հնագույն ժամանակներից և ապագա պեղումները հավանաբար այդ կապացուցեն։

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան այս ամրոց-բնակատեղիները բաղկացած են կենտրոնական կլոր կացարանի, նրան կից քառանկյուն մեծ ու փոքր սենյակների ու տնտեսական նշանակություն ունեցող շինությունների բազմաթիվ կոմպլեքսներից, որոնք պատկանել են ըստ երևույթին առանձին մեծ գերդաստանների կամ ընտանեկան համայնքների։

Հ. Մարտիրոսյանի կարծիքով տոհմական այդ բնակարանների կոմպլեքսը Հայկական լեռնաշխարհում տրադիցիոն կերպով պահպանվել է ամբողջ բրոնզի դարաշրջանում, որն ապացուցվում է Թեյշեբաինի քաղաքի ստորին շերտի պեղումներով[8]։

---

1 **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 107—110։ Նույնի, Урартский „колумбарий"..., էջ 107—114։

2 **Т. Н. Чубинишвили**, Амиранис-Гора, Тб., 1962, էջ 94.

3 **Р. Мунчаев**, նշվ. աշխ., էջ 13։

4 **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 108։

5 **C. A. Burney**, Excavations at Yanik Tepe, north-west Iran, էջ 141—142։

6 **T. Burton Brown**, Excavations in Azarbaijan, էջ 35։

7 **К. Х. Кушнарева**, Новые данные о поселении Узерлик-тепе, около Агдама, МИА, № 125, М.—Л., 1965, էջ 78։

8 **А. А. Мартиросян**, Город Тейшебаини, էջ 29։

Հայկական լեռնաշխարհում կլոր կացարանները և շինարարության մեջ հում աղյուսի օգտագործումը հատկանշական են դեռևս V—IV հազարամյակների էնեոլիթյան հուշարձաններին (Արարատյան դաշտավայրում՝ Շենգավիթի I շերտին, Թեղուտին, Մխլու-Թափային[1], Նախիջևանի Քյուլ-Թափայի I շերտին, Աղստև գետի հովտում՝ Բաբա-դերվիշի II շերտին, Շոմու-Թեփեին և Թոյրա-Թեփեին), որը մեկ անգամ ևս հավաստում է կլոր կացարանների կառուցման տեղային սովորույթը:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան ճարտարապետական կառույցներն իրենց զուգահեռներն ունեն հատկապես հարավում՝ Իրանական Ադրբեջանում: Կլոր կացարաններ քարե հիմքով և հում աղյուսե պատերով բնորոշ են Գեոյ-Թեփեի «K» շերտին[2], Յանիկ-Թեփեին, որը յոթ կառուցողական շերտ ունի և բացի վերին շերտից մնացած բոլորում հայտնաբերվել են կացարաններ՝ հարակից քառանկյան շենքերով և հում աղյուսե պատերով (ամենամեծի տրամագիծը 6,9 մ, իսկ փոքրինը՝ 4,75 մ (նկ. 3)[3]. Շենգավիթի և Գառնիի նման Յանիկ-Թեփեին ևս բնորոշ է կլոր պատին կից նստարան կամ մահիճ[4]: Յանիկ-Թեփեի 2-րդ շերտի № 7 կլոր կացարանի կենտրոնում հայտնաբերվել են օջախի երկու պայտաձև հենակներ և կենտրոնում կավից անցք՝ ծածկի սյան համար[5]:



Նկ. 3. Յանիկ-Թեփեի 4B շերտի բնակարանների պլանը, ըստ Չ. Բարնեյի:

---

[1] Թեղուտը և Մխլու-Թափան պեղվել են Հնագիտության ինստիտուտի աշխատակից՝ Ռ. Տորոսյանի կողմից:

[2] T. Burton—Зrown. Նշվ. աշխ., էջ 34:

[3] C. A. Burney. Նշվ. աշխ., էջ 144:

[4] Նույն տեղում, էջ 142, 145, 146:

[5] Նույն տեղում, էջ 147:

Կլոր կացարաններ հարակից քառանկյունի շենքերով բնորոշ են նաև վերին Միջագետքի և Արևելյան Միջերկրածովի վաղ մշակույթի համար[1]։

Վրաստանում նույն դարաշրջանի կացարաններն այլ կառուցվածք ունեն։ Կվացխելեբիում հայտնաբերվել են քառակուսի շենքեր՝ կլորացող անկյուններով, կենտրոնական սյունով և կլոր օջախով, բազմաշերտ կավե հատակով, պատերը հում աղյուսից կամ հյուսված կարկասից երկկողմանի կավե հաստ շերտով պատած, ծածկը տափակ[2]։ Նման կացարաններ հայտնաբերվել են Գուդաբերդկա-Ցիխիագորայում[3], Ամիրանիս-Գորայում[4] և այլուր։

Հայկական լեռնաշխարհի վեր.-հիշյալ դարաշրջանի բնակատեղիներին բնորոշ են նաև տնտեսական-կենցաղային տարբեր նպատակների համար օգտագործվող բազմաթիվ հորերը։ Ինչպես ուսումնասիրությունները պարզեցին, կլոր հատակագծով հորերն օգտագործվել են գերազանցապես որպես հացահատիկի պահեստատեղիներ։ Այս սովորույթը պահպանվել է մինչև մեր օրերը, այսինքն հավաստվում է նաև ազգագրական տվյալներով։ Նման հորեր հայտնաբերվել են նաև Կովկասի բազմաթիվ վաղ երկրագործական բնակատեղիներում։

Տնտեսական նպատակներին են ծառայել նաև կլոր և ձվաձև հորերը, որոնցում հայտնաբերվել են խեցու բեկորներ, աշխատանքային տարբեր գործիքներ, խոհանոցային մնացորդներ։ Կոնաձև կտրվածքով հորերը հավանաբար ծառայել են պաշտամունքային օջախներից հանված սրբազան մոխրին։

Ինչ վերաբերվում է դամբարանային մշակույթին, ապա հարկ է նշել, որ ըստ արտաքին հատկանիշների, նրանք երկու տիպի են՝ դամբանաբլուրներ և սալածածկ քառանկյուն դամբարաններ։

Դամբանաբլուրների տակ երկու տիպի թաղումներ են կատարվել՝ առանց դամբանափոսի (Խաչենագետի № 1, Ջրառատի և Ճաշենի № 120) և հիմնահողային (Խաչենագետի № 2, 3, 4, 5)։

Սալածածկ քառանկյուն դամբարանները երկու տիպի են՝ քարարկղային (մանր ու միջին մեծության անմշակ և կիսամշակ քարերով շարված, բնորոշ է Էլարին կամ սալանման քարերով կառուցված, բնորոշ է Արագածին, Էլարին, Արճեշին) և հիմնահողային (կավածեփ, բնորոշ է Էլարին)։

Եվ դամբանաբլուրներում, և սալածածկ քառանկյուն դամբարաններում կատարվել են երեք տիպի թաղումներ՝ կոլեկտիվ (Խաչենագետի № 1 և Ջրառատի, Ճաշենի № 120 դամբանաբլուրներում, Արագածի քարարկղում), զույգ (Խաչենագետի № 3 դամբանաբլուրում) և անհատական (Խաչենագետի № 2 դամբանաբլուրում և Էլարի հիմնահողային դամբարաններում)։

---

[1] **M. E. Mallowan and Rose Gruikshank,** Prehistorik Assyria тhe excevations at Tell Arphachiyah. Iraq II, London, 1935, էջ 29—30, նկ. 13. աղ. Id, էջ 32, նկ. 20. **Г. Чайлд,** Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, էջ 177։ **A. L. Wace and M. S. Thompson,** Prehistoire Thessaly, Cambridge, 1912, էջ 132, նկ. 80։ Բազմաթիվ զուգահեռներ բերված են նաև Հ. Ա. Մարտիրոսյանի մոտ, տե՛ս А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 29—31։

[2] **А. И. Джавахишвили, Л. И. Глонти,** Урбниси, 1, Тб., 1961, էջ 61.

[3] **С. И. Надимашвили,** Раскопки одного из древнейших поселений—городища «Гудабертка—Цихиагора» в 1956 г. на территории Внутренней Картлии. Զեկուցման թեզիսներ՝ կարդացված Մոսկվայի հնագիտության ինստիտուտում 1957 թ. մայիսին (ձեռագիրը պահվում են նույն ինստիտուտի արխիվում)։

[4] **Т. Чубинишвили,** նշվ. աշխ., էջ 94։

Ինչպես վերը տեսանք, թաղման երկու ձև է բնորոշ, սակայն հանդիպում է դիակիզման ձևը (Խաչենագետի № 4, 5 դամբանաբլուրներում) և դիաթաղումը, որը գերազանց մեծամասնություն է կազմում: Վերջինիս դեպքում դիակը դամբարան է դրվել երեք ձևով՝ նստեցրած (Խաչենագետի № 1 դամբանաբլուր), կողքի պառկեցրած (ոտքերը կծկված վիճակում, ձեռքերը ծալած ծնոտի առջև, բնորոշ է մեծամասնությանը) և մեջքի վրա պառկեցրած, ձեռքերը կողքերին ձգված (Խաչենագետի № 2, 3 դամբանաբլուրներում):

Ըստ ունեցվածքի վերոհիշյալ թաղումները կարելի է երկու խմբի բաժանել՝ չքավոր, հասարակ աղքատիկ դամբարաններ (որոնցում հանդիպում են չորսից ոչ ավելի կճուճներ, երբեմն պաստայից ուլունքներ կամ որևէ զենք) և հարուստ թաղումներ (ոսկե և բրոնզե զարդերով, զենքերով, նրբագեղ կճուճներով և այլն): Այս փաստը վկայում է արդեն գույքային անհավասարության գոյությունը, որը թելադրված էր տոհմացեղային ավագանու բարձրացումով, հզորացումով:

Ամփոփելով հարկավոր է նշել, որ վերոհիշյալ թաղման ձևերը Հայկական լեռնաշխարհում ունեն խոր արմատներ: Դամբանաբլուրային տիպի թաղումները սկիզբ են առել դեռևս մթա V հազարամյակում, որի լավագույն օրինակներից մեկը Ստեփանակերտի № 119 և 125 դամբանաբլուրներն են: Այստեղ ըստ Յա. Գումելի դամբանաբլուրների ստորին շերտը տալիս է նեոլիթյան ժամանակաշրջանի մշակույթ: Իսկ նրան ծածկող շերտը (2-րդ)՝ կոլեկտիվ թաղումներ (№ 119-ում 36 կմախք) կծկված կմախքներով[1]: Այս շերտում հայտնաբերված տեքստիլային հասարակ, բաց դեղնավուն և գորշագույն խեցեղենն իր զուգահեռներն ունի մթա IV հազարամյակի մշակույթում: Նույն ժամանակաշրջանով է թվագրվում Ստեփանակերտի նաև № 103 դամբանաբլուրը 48 կմախքով և հասարակ տեքստիլային խեցեղենով[2]:

Կավածեփ հատակով հիմնահողային դամբարանները նույնպես սկիզբ են առել դեռևս մթա IV հազարամյակում (Նախիջևանի Քյուլ-թափայի 1-ին շերտում հայտնաբերվածները)[3]:

Հայկական լեռնաշխարհի դամբարանները և՛ թաղման ձևով, և՛ ինվենտարով իրենց զուգահեռներն ունեն Վրաստանում, Ադրբեջանում: Քարարկղային թաղումների զուգահեռները կարելի է տեսնել Ծալկայի բարձրավանդակում 1936 թ. պեղված Բարմակսիզի խճուղու և Տաղ-բաշ գյուղի դամբարաններում, Մանգլիսի կողմից դեպի Բարմակսիզ իջնող ճանապարհին պեղված փոքր քարարկղային դամբարանում[4], Օղնի գյուղում և Կիկետում[5]: Քարարկղեր պեղվել են Ամիրանիս-Գորայում[6]: Հիմնահողային դամբարաններ, կավածեփ, թրծման հետքերով գտնվել է Կիկետում, որին Բ. Կուֆտինը անվանում է կավածեփ սարկոֆագ հատուկ ձևի[7]: Հիմնահողային քառանկյունաձև դամբա-

---

[1] **Я. И. Гуммель**, Некоторые памятники ранне-бронзовой эпохи Азербайджана, КСИИМК, XX, 1948, էջ 15—21:

[2] Նույն տեղում, էջ 15—16:

[3] **О. А. Абибуллаев**, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, էջ 158:

[4] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 117:

[5] Վրաստանի պետական թանգարան, Բ. Ա. Կուֆտինի օրագիրը:

[6] **Т. Чубинишвили**, նշվ. աշխ., էջ 96—97:

[7] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 118:

րաններ մենավոր կամ զույգ թաղումով բնորոշ են նաև Կվացխելեբիին[1]: Դամբանաբլուրները դիակիզման սովորույթով հանդերձ իրենց զուգահեռներն ունեն Տկվիավիում[2], Խանլարում[3]:

Հիշյալ դամբանաձևերը հանդիպում են նաև Հյուսիսային Կովկասում[4]:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձանների միջոցով մենք պատկերացում ենք կազմում նրանց բնակատեղիների, ճարտարապետական կառուցվածքների և թաղման ձևերի վերաբերյալ, որոնք սակայն դեռևս լույս և բազմակողմանի ուսումնասիրության կարոտ են և կճշտվեն ու կլրացվեն ապագայում ձեռք բերված նյութերի միջոցով: Հատկանշական է, որ ուսումնասիրվող դարաշրջանի մշակույթը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի դաշտավայրային, երկրագործական շրջաններին, որոնց զուգընթաց նրանք որոշ տարածում են գտել նաև լեռնային շրջաններում:

---

[1] **А. И. Джавахишвили, Л. И. Глонти,** *նշվ. աշխ., էջ 61:*

[2] **С. И. Макалатия,** Археологические раскопки курганных погребений в сел. Тквиави (*վրաց. լեզվով*). (Тр. Горийского историко-этнографического музея, Тб., 1943, էջ *9—55:*

[3] **Я. И. Гуммель,** *նշվ. աշխ., էջ 21—28.*

[4] **Р. М. Мунчаев и К. Ф. Смирнов,** Археологические памятники близ Карабудахкента, МИА, № 68, 1958, М.—Л., էջ *147—169:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վաղ բրոնզեդարյան մշակույթի ուսումնասիրությունից պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակում տեղաբնիկ ցեղերի հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունն ու անասնապահությունը: Միաժամանակ տնտեսության օժանդակ ճյուղերից են եղել որսորդությունը և ձկնորսությունը:

1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հողը դարեր շարունակ հանդիսացել է մարդկության անհրաժեշտ գոյամիջոցների հիմնական աղբյուրը: Մարքսի բնորոշմամբ «հողը, ինչպես որ նրա պաշարների սկզբնական մառանն է, այնպես էլ նրա աշխատամիջոցների սկզբնական զինարանն է»[1]:

Մարդու կողմից ուտելու հատիկների, տարբեր պտուղների և արմատիքների հավաքումը և օգտագործումը երկրագնդի տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում վերջ ի վերջո հանգեցրեց երկրագործության առաջացմանը:

Երկրագործությունն անմիջականորեն զարգացել է հավաքչությունից: Բազմաթիվ հնագիտական և ազգագրական աղբյուրներ վկայում են, որ երկրագործությունը հաստատվել է դեռևս նեոլիթյան դարաշրջանի սկզբում, սակայն այն իր հետագա զարգացումն է ստանում էնեոլիթյան և հատկապես վաղ բրոնզի դարաշրջանում:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիների պեղումները հետաքրքիր և արժեքավոր նյութեր են տվել մեր երկրի հնագույն երկրագործության մշակույթի պատմության մի շարք հարցերի լուսաբանման համար:

Այդ պեղումների ժամանակ հայտնաբերվել են ածխացած հացահատիկի և նրանց ուղեկցող մոլախոտերի սերմերի մնացորդներ, հացահատիկի հորեր և երկրագործության հետ կապված տարատեսակ աշխատանքային գործիքներ:

Շենգավթի 1936 թ. պեղումների ժամանակ № 2 կլոր կացարանում տարբեր հորիզոնների վրա հայտնաբերվել են մեծ քանակությամբ հնագույն ցորե-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, 1933, էջ 145:

նի, գարու և վայրի մոլախոտերի խանձված հատիկներ։ Հացաբույսերի մնացորդները գտնվել են առանձին նրբախավերում։ Ըստ Ե. Բայբուրթյանի, այս հանգամանքը ցույց է տալիս, որ հասկերն ամբողջ խուրձերով բերվել են կացարան և այնտեղ ենթարկվել հետագա մշակման[1]։ Չնայած հացահատիկը հայտնաբերվել է ածխացած վիճակում, սակայն ամբողջությամբ պահպանվել է հատիկի, հասկի և ցողունի կառուցվածքը[2]։

Պրոֆեսոր Մ. Թումանյանի ուսումնասիրությունները պարզել են, որ Շենգավիթում հայտնաբերված հացահատիկը հնագույն կլորահատիկ ցորենի մնացորդ է[3]։

Նույն տեղում հայտնաբերվել են նաև վեցշարք կլորահատիկ գարու հաց-վացեղ հատիկներ և հասկեր, նաև մոլախոտերի մոտ ութ տեսակի սերմեր[4]։ Մ. Թումանյանի կողմից Շենգավիթում հայտնաբերվել են այդ դարաշրջանի փափուկ հացաբույսերի վայրի տեսակների հատիկների և հասկերի եզակի օրինակներ[5]։ Շենգավիթում շատ են եղել թեփուկավոր ցորենների տեսակներ, օրինակ՝ հաճար (Tr. dicoccum)[6]։ Հնագույն ցորեն և գարի հասկերով հայտնաբերվեցին այս տարի նաև Մոխրաբլուրի (Արմավիրի մոտ) կացարաններից մեկում։ Այն բավական մեծ քանակություն է կազմում և ինչպես Շենգավիթում, այստեղ ևս հասկերը խուրձերով բերվել են կացարան։ Մոխրաբլուրում հասկերի խուրձերը հայտնաբերվեցին օջախի մոտ։

Շենգավիթում այս հացաբույսերը հայտնաբերվել են օջախների մոտ, մեծ կավամաններում[7], նաև հացահատիկի հորերում[8]։ Կիսով չափ փտած հացահատիկով լցված հորեր հայտնաբերվել են Էլարում[9], նաև Նախիջևանի Կյուլ-Թափայում՝ 1904 թ. Ե. Լալայանի պեղումների ժամանակ[10]։ Երկրորդ շերտում հասկերով ածխացած հացահատիկներ հայտնաբերել է Օ. Աբիբուլաևը[11]։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք ցորենի և գարու հատիկներ են։ Ցորենը պատկանում է փափուկ և թզուկ, իսկ գարին մերկահատիկ և թեփուկավոր տեսակին[12]։

Ինչպես փափուկ, այնպես էլ ամուր հացաբույսերի տեսակներ հայտնաբերվել են նաև Աղստև գետի հովտի Բաբա-դերվիշ բնակատեղիում[13]։

---

1 Ե. Բայբուրթյան, Ձեռագիր աշխատություն, էջ 35։

2 Նույն տեղում, էջ 36։

3 **М. Г. Туманян**, Культурные растения урартского периода в Арм. ССР. «Տեղեկագիր», № 1—2, 1944, Երևան, էջ 75, 76, 79։

4 Նույն տեղում, էջ 76։

6 Նույն տեղում, էջ 80։

5 Նույն տեղում։

7 **Б. Б. Пиотровский**, Археология Закавказья, էջ 32։

8 Նույն տեղում։

9 **Е. Байбуртян**, Псевдонеолитическое поселение Армении, Проблемы материальной культуры, вып. № 1—2, Л., 1933, էջ 39. **Б. Б. Пиотровский**, Поселения медного века в Армении, СА, в. XI, М.—Л., էէջ 176։

10 **Б. Б. Пиотровский**, Նշվ. աշխ., էջ 178։

11 **О. А. Абибуллаев**, Остатки жилищ поселения Кюль-тепе, էջ 44։

12 **О. А. Абибуллаев**, Первые итоги раскопок Кюль-тепе. Труды Музея истории Азербайджана, Б., 1957, т. II, էջ 86—87։ Նույնի, Археологические раскопки холма Кюль-тепе, Автореферат, Б., 1959, էջ 6.

13 **Г. С. Исмайлов**, Из истории культуры Западного Азербайджана, Автореферат, Тб., 1963, էջ 20—21։

Վաղ բրոնզեդարում ցորենի և գարու կուլտուրաները դեռևս դիֆերենցված չեն եղել: Նրանք հավաքվել են երկու հացաբույսերի խառը ցանքսից, որը հանդիսանում է վաղ երկրագործության բնորոշ գիծը և ունի հնագիտական ու ազգագրական զուգահեռներ:

Կլորահատիկ հացաբույսերը հարմարված են ավելի խոնավ բնակլիմայական պայմաններին, այդ իսկ պատճառով արդեն ուրարտական շրջանում անհետացել, վերացել են[1]:

Այսպիսով, վաղ բրոնզեդարում՝ Հայկական լեռնաշխարհում, ընդհանրապես Անդրկովկասում և այլուր վայրի հացահատիկների կողքին մշակել, ցանել և օգտագործել են արդեն կուլտուրական հացահատիկների տեսակներ: Հացահատիկն իր արտացոլումն է գտել նաև վաղ բրոնզեդարյան արվեստում: Ցորենի կամ գարու հասկով են զարդարված էջմիածնի մոխրաբլուրների գավաթ-կճուճները (№ 607/17), նաև Շենգավթի կավամանները (№ 1442/6):

Երկրագործության առկայության են վկայում բերքահավաքի գործիքները՝ մանգաղները: Հայտնաբերված մանգաղները երկու տիպի են՝ կայծքարե ու օբսիդաքարե տարատեսակ ներդիրներով կազմված մանգաղներ և մետաղե մանգաղներ:

Հայտնաբերված ներդիրներն ունեն գոգավոր բանող եզր և սասամբ ուռուցիկ մեջք (նկ. 4): Կտրվածքում նման են ձգված շեղանկյան կամ էլիպսի: Բանող եզրը երկու երեսից մշակված է ռետուշով: Ունեն հստակ մշակված ատամնաշար: Մեծ մասի ընդհանուր մակերեսը մշակված է պոկելու եղանակով. Երկու կարճ եզրերը կոր են, բավական սուր և մի փոքր ցած թեքված, երբեմն նույնպես ատամնավոր: Նման մասսիվ ներդիրներ հայտնաբերվել են Շենգավթում (№ 1330/247, 356, 359, 370), մի փոքր ավելի նեղ իրանով՝ Էլարում (№ 127/381ա), Գառնիում (№ 1964/37, 2244/111), Քոսի-Ճոթերում[2] և Մոխրաբլուրում (1965 թ. պեղումներ):

Նման հավաքչական ներդիրներ հայտնի են եղել երկրագործական բազմաթիվ ժողովուրդների և օգտագործվել են սկսած նեոլիթից մինչև ուշ բրոնզի դարաշրջանը:

Պահանգավոր ներդիրների վերականգնումն առաջին անգամ տվել է Ֆ. Պետրին, որը Եգիպտոսում հայտնաբերել է մանգաղի փայտե պահանգ՝ նրա մեջ ձյութով ամրացված քարե ներդիրներով[3]:

Վերջերս փայտե պահանգի մեջ ամրացված կայծքարե և օբսիդաքարե ներդիրներով մանգաղ հայտնաբերվել է Աղստև գետի հովտում՝ Շոմու-թեփե էնեոլիթյան բնակատեղիում[4]: Մոտ քսան մանգաղի ներդիրներ հայտնաբերվել են նույն հովտի՝ Բաբա-դերվիշ բնակատեղիում[5]:

---

[1] **Б. Б. Пиотровский**, Археология Закавказья, էջ 32: Նույնի, Поселения медного века в Армении, էջ 173:

[2] **Է. Խանզադյան**, *Հնագիտական պեղումներ Կիրովականի մերձակայքում*, էջ 81, 82, նկ. 3, ձախից III:

[3] **Ж. де Морган**, Доисторическое человечество, М.—Л., 1926, էջ 173: Նույնի, Recherches sur les origines de l'Egypte, p. 1896, էջ 132—134, նկ. 139—246, 247. W. M. Flinders Petrie. Hlahum und gurub. L. vol. III, 1891, աղ. VIII:

[4] **И. Нариманов**, Древнейшие серпы Азербайджана, СА, № 1, 1964.

[5] **Г. С. Исмайлов**, Новый археологический материал о земледелии в древнем Азербайджане. Доклады АН Азерб. ССР, XVIII, № 3, 1962, էջ 80, նկ. 4—8; **И. Г. Нариманов, Г. С. Исмайлов**, Акстафачайское поселение близ г. Казаха, СА, № 4, 1962, էջ 154, նկ. 38:

Հայկական լեռնաշխարհում մետաղե դեռևս երկու մանգաղ է հայտնաբերվել, մեկը Գառնիում (№ 1964/35, նկ. 4)[1], մյուսը՝ Նախիջևանի Քյուլ-Թափայում[2]: Երկուսն էլ ունեն աղեղնաձև իրան և կարճ պոչ՝ փայտե (գուցե և ոսկ-



Նկ. 4. Մանգաղի ներդիրներ Շենգավիթից և բրոնզե մանգաղ Գառնիից:

րե) կոթառ ամրացնելու համար: Գառնիի մանգաղը հայտնաբերվել է 1950 թ. 2,15 մ խորության մեջ մակույկաձև աղորիքի, ներծծված փոսիկներով սև փայլեցրած խեցեղենի և օջախի պայտաձև հենակի բեկորների հետ միասին: Քյուլ-Թափայի մանգաղը հայտնաբերվել է 10,75 մ խորության մեջ սև փայլեցրած խեցեղենի հետ, որն իր ձևով հար և նման է Գառնիին: Նման մի մանգաղ հայտնաբերվել է նաև Վրաստանում՝ Ամիրանիս-Գորայի դամբարաններից մեկում[3]: Մետաղե մանգաղի ներդրումը մի նոր առաջընթաց էր երկրագործության ասպարեզում:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են աշխատանքային բազմաթիվ գործիքներ, որոնք ծառայել են երկրագործության մթերքների մշակմանը: Օրինակ՝ հացահատիկի և չորացած պտուղների մանրացմանն են ծառայել սանդերը, սանդկոթերը, աղորիքները, որոնց բազմաթիվ տեսակներն են հայտնաբերվել: Նրանց միջոցով կարելի էր հացահատիկից ձավար ստանալ, զանազան ճաշեր պատրաստելու համար տարատեսակ հատապտուղներ մանրել: Այս գոր-

[1] Б. Н. Аракелян, Гарни, I, էջ 25, նկ. 12: Է. Խանզադյան, Մետաղագործության առաջին փուլերը Հայկական լեռնաշխարհում՝ հնագույն բրոնզի դարաշրջանում, էջ 93, նկ. 1:

[2] К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Историческое значение Южного Кавказа в III тысячелетии до н. э., СА № 3, 1963, էջ 15, նկ. 2_5:

[3] Նույն տեղում, նկ. 2_6, էջ 17, 19: Т. Н. Чубинишвили, Амиранис-Гора, էջ 73, նկ. 14_5, էջ 99:

ծիրներով կարելի էր ստանալ և այլուր, ոչ մեծ կարիքներ բավարարելու համար: Նրանցում երբեմն մանրել ու տրորել են նաև ներկեր: Տարբեր մեծության քարե սանդեր կիսագնդաձև կամ թասի ձևի խորություններով հայտնաբերվել են Շենգավիթում (№ 1330/6), Շրեշ-բլուրում (№ 121/20), Մուխաննաթ-Թափայում և Ախթամիրի (Ոսկեվազ) ստորին շերտում (№ 2847/3, աղ. II): Վերահիշյալ թեփուկավոր ցորենի և գարու ծեծելու և թեփահան անելու համար օգտագործվել են ավելի շատ փայտե սանդեր և սանդկոթեր, որոնք փտել են և մեզ չեն հասել:

Քարե սանդկոթեր. բավական մեծ քանակությամբ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի հնավայրերում: Բոլորը գերազանցապես բնական գետաքարից են: Ընդհանրապես գործիքներ պատրաստելը մեծ աշխատանք էր պահանջում, որից խուսափելու համար մարդիկ գետաքարերից ընտրում էին այնպիսիները, որոնք իրենց ձևով հարմար էին տվյալ գործիքի համար:

Սանդկոթերն ըստ ձևի կարելի է բաժանել հետևյալ խմբերի. տանձաձև (Շենգավիթ՝ № 1330/331, 368б, Շրեշ-բլուր՝ № 121/8, 14, Էլար՝ № 161/5, Գառնի՝ № 2234/104, Քոսի-ճոթեր՝ ԿԳԹ № 61 և այլն), գլանաձև (Շրեշ-բլուր № 121/1, 3, № 1233, Էլար № 161/6, Գառնի 2234/76; Շենգավիթ № 1330/365) մեկ ծայրը լայն, մյուսը նեղ (Շրեշ-բլուր № 121/29, Շենգավիթ № 1442/29, Գառնի № 2176/32, 53) և բազմաթիվ այլ սանդկոթեր (աղ. III):

Սանդերը և սանդկոթերը շատ երկար ժամանակ են ապրել և ոչ մեծ փոփոխություններով հասել են մինչև մեր օրերը:

Հացահատիկն աղալու, ալյուր ու ձավար դարձնելու ամենանախնական գործիքներն աղորիքներն են, որոնք պեղումների ժամանակ հայտնաբերվում են ամենուրեք: Վաղ բրոնզեդարյան բնակատեղիներից գտնված բազմաթիվ ձևերի ու մեծության աղորիքները պատրաստված են ծակոտկեն բազալտից, հրաբխային տուֆից, գլաքարից և այլն:

Աղորիքները բաղկացած են ստորին հիմնական և վերին տրորիչ քարերից:

Ստորին հիմնական քարերն ըստ ձևի կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Գնդաձև բարձր գլխամասով և գոգավոր աշխատող մակերեսով աղորիքներ. (Գառնիից, Շենգավիթից, աղ. IV, վերևինը):

2. Երկարավուն ձվաձև մակերեսով և ուռուցիկ ներքնամասով աղորիքներ. (Արմավիրի մոխրաբլուրից № 2248/58, 59, երկու օրինակ Գառնիից և Նախիջևանի Քյուլ-Թափայից[1], աղ. IV, վերևից II-ը):

3. Քառանկյունաձև գոգավոր կամ տափակ մակերեսով աղորիքներ. (Շրեշ-բլուրից № 779/16, Ցրանկանոցից և Կոշից № 780/1, 17. Գառնիից, Մուխաննաթ-Թափայից № 1439/408 և այլն):

Աղորիքների մյուս մեծ խումբը կազմում են վերին տրորիչ քարերը, որոնք ըստ գործածության բաժանվում են երկու խմբի:

1. Մեկ ձեռքով աշխատեցնելու համար, փոքր ծավալի աղորիք-տրորիչներ. շրջանաձև (Շրեշ-բլուր № 121/19, 25, 27, Գառնի № 2176/98, Շենգավիթ № 1618/188), ձվաձև (Շրեշ-բլուր № 121/4, 5, 6, 20, 23 և այլն):

2. Երկու ձեռքով աշխատեցնելու աղորիքներ ձվաձև (Մոխրաբլուր № 2248/66, Էլար № 127/471, Շրեշ-բլուր № 121/120 և այլուր), երկարավուն (հայտնաբերվել են համարյա բոլոր բնակատեղիներում), մակույկաձև (Գառ-

[1] О. А. Абибуллаев, К изучению холма Кюль-тепе, Тр. Института истории и философии АН Аз. ССР, IX, 1956, էջ 10, աղ. II, նկ. 8: Т. А. Бунятов, Земледелие и скотоводство в Азербайджане в эпоху бронзы, Б., 1937, էջ 37, աղ. 14:

նի № 1964/28, 2235/148, Էլար № 161/70, Շենգավիթ № 1330/254, 1442/168, Կառնուտ № 1478/20 Մալաքլույում)[1] և այլուր (աղ. IV, վերևից III, IV, V)։

Աղորիքների տարածման սահմանները շատ մեծ են և նրանք բազմաթիվ զուգահեռներ ունեն վաղ երկրագործական համաժամանակյա հուշարձաններում։ Հայտնաբերված աղորիքների համեմատական անալիզից պարզվում է, որ հնագույն բրոնզի դարաշրջանում կատարվել է աղորիքների աստիճանական զարգացում, կատարելագործում և չի կարելի համաձայնվել որոշ ուսումնասիրողների այն կարծիքի հետ, որ աղորիքների մեջ ամենահինը և պարզը մակույկաձև աղորիքն է։

Պեղումների ժամանակ աղորիքները մեծ մասամբ հայտնաբերվել են բնակարանների կենտրոնում, օջախի մոտ, հացահատիկի կամ ընդհանրապես պաշարների համար մեծ կավամանների կողքին։

Աշխատանքի ընթացքում մարդը կարիք է զգացել ալյուրից անջատել ավելորդ, կոշտ մասերը, կեղևը, թեփը, որի համար հավանաբար օգտագործվել է մաղը, սակայն այն պատրաստված լինելով բուսական թելերից և ընդհանրապես անկայուն նյութերից, մեզ չի հասել։

Հայտնաբերվել են մի շարք կավե շրջանաձև, տափակ մակերեսով տապականներ—սաջեր (թավա), որոնց վրա ամենայն հավանականությամբ հացահատիկ են բովել կամ բլիթներ պատրաստել (աղ. XIII)։ Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև մեծ կավամաններ, որոնց մեջ այլ մթերքների պաշարների կողքին պահել են նաև հացահատիկ։

Այսպիսով վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Անդրկովկասում երկրագործությունը թևակոխում է զարգացման մի նոր փուլ, որին բնորոշ է տարատեսակ կուլտուրական հացաբույսերի խառը ցանքսը։

Որպես ցանքատարածություններ օգտագործվել են հավանաբար բնակատեղիներին մոտ գտնվող ոչ մեծ հրապարակները։

Վերոհիշյալ ժամանակաշրջանում ցանքատարածությունները ավելանում են նաև անտառներից մաքրված տարածությունների հաշվին։

Վաղ բրոնզի դարաշրջանում տարատեսակ բրոնզե կացինների և մանգաղի հայտնագործությունները մի նոր առաջընթաց էին տեխնիկայի զարգացման տեսակետից և իրենց հերթին խթանեցին նաև երկրագործության վերելքին։

Որոշ զարգացում նկատվում է նաև աղորիքների ձևերի մեջ։

Հետևաբար երկրագործության զարգացման հետ փոխվում էին նաև աշխատանքային գործիքները, որոնք իրենց հերթին նպաստեցին երկրագործության առաջընթացին։

Այսպիսով արտադրողական ուժերի աճի հետ, որը թելադրված էր մետաղամշակման և անասնապահության զարգացմամբ, պայմաններ էին ստեղծվում բրչային հողագործությունից անցնելու պրիմիտիվ արորով հողի մշակմանը, որը հենված էր խոշոր եղջերավոր կենդանիների՝ որպես քարշող ուժի օգտագործման վրա։ Որպես ապացույց կարող են ծառայել ինչպես եզան կավե արձանիկների վզի վրա լծի համար արված անցքը, այնպես էլ սայլերի մոդելների անիվները[2]։

---

3 Б. А. Куфтин, Урартский «колумбарий»..., աղ. XIX։

2 Б. Б. Пиотровский, Развитие скотоводства в древнейшем Закавказье, СА, XXIII. 1955, էջ 6. О. А. Абибуллаев, Археологические раскопки холма Кюль-тепе. Автореферат, էջ 14։

Նման սկավառակաձև անիվներ կավից, անցքի մոտ խողովակաձև շեշտված եզրաններով հայտնաբերվել են Շրեշ-բլուրում (աղ. V, № 766/138, № 779/14), Գառնիում (№ 2234/173ա), փոքր անիվներ խողովակաձև անցքով՝ Շենգավիթում (№ 1330/166, 1442/163, 1618/279), Դվինում (№ 1917/114) և այլուր: Կան և քարից անիվներ (Քոսի-Ճոթեր, Շենգավիթ № 1618/149, 1330/164, 165, Դվին № 1617/203 և այլուր):

Նման անիվներ հայտնաբերվել են Վրաստանում՝ Կվացխելեբիում[1], Դաղստանում՝ Ջեմիքենտի բնակատեղիում[2], Իրանում՝ Գեոյ-Թեփեում[3], Յանիկ-Թեփեում[4], Առաջավոր Ասիայում՝ Կիշում[5], Ուրի թագավորական դամբարանում[6]: Սիրիայում հայտնաբերվել է նաև քառանիվ սայլի բրոնզե մոդելը (պահվում է Ստոկհոլմում), թվագրվում է 2000 թ. մթա[7]:

Այսպիսով, սայլերի մոդելների քարե և կավե անիվների լայն տարածումը հատկապես Անդրկովկասում և Հին Արևելքի վաղ բրոնզեդարյան հուշարձաններում պատահականություն չէ և ապացուցում է նշված ժամանակաշրջանում փայտե մասսիվ անիվներով ծանր սայլերի գոյությունը: Նման սայլերի գոյության վառ ապացույց է նաև մի փոքր ավելի ուշ՝ միջին բրոնզի դարաշրջանի Թրիալեթի XXIX դամբանաբլուրում հայտնաբերված փայտե մասսիվ անիվներով սայլը[8]:

Վերոհիշյալ վաղ բրոնզեդարյան անիվների ձևը պահպանվել է նաև ուշ բրոնզի շրջանում: Նման մասսիվ անիվներով սայլեր հայտնաբերվել են Լճաշենի[9], Մարտունու շրջանի Նոր Գետաշենի (Ադիաման) դամբանաբլուրներում[10], իսկ Ադրբեջանում՝ Մինգեչաուրում գտնվել են նման անիվներով ծածկասայլերի մոդելներ[11]: Այն ունի նաև ազգագրական զուգահեռներ:

Հնագույն բրոնզի դարաշրջանում սկիզբ է առնում նաև այգեգործությունը: Այդ մասին վկայում է Գառնիի ստորին շերտում հայտնաբերված ծիրանի կորիզը (Prunus Armeriaca)[12]:

2. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վաղ բրոնզի դարաշրջանում երկրագործության հետ միասին անասնապահությունը եղել է տնտեսության առաջատար բնագավառ և կարևոր դեր է կատարել տեղաբնիկների կյանքում: Այդ ապացուցվում է հայտնաբերված

---

[1] **А. Джавахишвили, Л. Глонти,** Урбниси, I, *աղ. 4, նկ. 109:*

[2] **А. П. Круглов,** Северо-восточный Кавказ во II—I тыс. до н. э., МИА № 68, 1958, М., *էջ 38, նկ. 86:*

[3] **T. Berton Brown,** *նշվ. աշխ., աղ. 13, նկ. 143², 1453:*

[4] **C. A. Burney,** Excavation at Janik-Tepe, north-west Iran, *աղ.* LXXIV, *նկ. 62:*

[5] **Mackay Ernest,** A. Sumerian palace and the „A“ cemetery at Kish, part II, Field Mus of Nat Hist., Anthr. Mem. v. 12, Chicago, 1929, *էջ 208—211 աղ.* XLVI *8, 9:*

[6] **Wooley, C. Leonard,** The royal cemetery (Ur excavations, vol. II) New-York, 1934, pp. 64. 108—109.

[7] **Б. А. Куфтин,** Археологические раскопки в Триалети, *էջ 95, 98, նկ. 103:*

[8] **Б. А. Куфтин,** *նշվ. աշխ., էջ 95, 97, նկ. 102.* **М. Джапаридзе,** Археологические раскопки в Триалети в 1957—1958 гг., Тб., 1960, *էջ 40:*

[9] **О. А. Мнацаканян,** Раскопки курганов на побережье Севана, СА, 1957, № 2, *էջ* 146—153: *Նույնի* Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, СА. 1960, № 2, *էջ* 139—152.

[10] **Ե. Լալայան,** *Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, էջ 192—196:*

[11] **Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе,** Древний Мингечаур, Баку, 1959, *էջ 128—131, նկ. 98—101:*

[12] **Б. Н. Аракелян,** *նշվ. աշխ., էջ 25:*

ոսկրաբանական մեծաքանակ նյութերով և տարբեր կենդանիների կավե ու քարե արձանիկներով:

Հայկական լեռնաշխարհի վերոհիշյալ դարաշրջանի հնավայրերում հայտնաբերվել են ընտանի խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, ինչպես նաև ձիու, խոզի և շան ոսկորներ:

Կիրովականի Քասի-Ճաթեր բնակատեղիից հայտնաբերվել են եզան (Bos primigenius տիպի), ձիու (Equus caballus տիպի), գոմեշի (Bubalus տիպի) և խոզի (sus serofa տիպի) ոսկորներ[1]:

Շենգավիթի պեղումների ժամանակ հայտնաբերվել են եզան, ձիու, խոզի, ձկի, ոչխարի և շան ոսկորներ[2]: Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև Շրեշ-բլուրում[3]: Ապարանի շրջանի Ջառջառիս գյուղի վաղ բրոնզի վերջին փուլին վերաբերող քարարկղե դամբարաններից մեկում՝ հայտնաբերվել է ընտանի եզան գանգ (Bos traurus primigenius): Ուսումնասիրությունից պարզվել է, որ այն քիչ է տարբերվում վայրի ցուլից (Bos primigenius Boj)[4]:

Անասնապահությամբ զբաղվելու ակնառու փաստերից են նաև բնակատեղիներում հայտնաբերված կենդանիների քարե և գերազանցապես կավե արձանիկները՝ եզան, ոչխարի, շան, ձիու (աղ. XXVII), ինչպես և եզան իրանով, խոյի գլխով օջախի հենակները (աղ. VII, XVI):

Ոսկրաբանական նյութերի տվյալներով ուսումնասիրվող դարաշրջանի հենց սկզբից աճել, բազմացել են մանր և խոշոր եղջերավոր կենդանիները, որոնք գերազանցապես եղել են ցածրահասակ և քիչ են տարբերվել վայրի տեսակներից:

Խոշոր եղջերավոր կենդանիները բնակչությանն ապահովել են մսով և կաթնամթերքներով: Անշուշտ վերոհիշյալ դարաշրջանում զարգացել է նաև կաթնատնտեսությունը: Պեղումների ժամանակ հայտնաբերվել է մեծ քանակությամբ խեցեղեն, որը ծառայել է կաթնամթերքների պահպանմանն ու մշակմանը, օրինակ խնոցիների նախատիպերը, լայնափոր իրանով գավերը, լայնաբերան կճուճները, որոնց նկարագիրը տրված է խեցեղենին վերաբերող ենթագլխում:

Ինչպես վերը տեսանք, խոշոր եղջերավոր կենդանիներն օգտագործվել են նաև որպես քաշող ուժ:

Եզը, որը խոշոր դեր է կատարել մարդու կյանքում և դիտվել է որպես ուժի մարմնացում, դարձել է պաշտամունքի առարկա: Այդ են ապացուցում հայտնաբերված եզան արձանիկները (աղ. XXVII): Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Կովկասում, ինչպես և Հին Արևելքում եղջերավոր հենակների բազմաթիվ տարբերակները ծառայել են եզան պաշտամունքին (աղ. VII): Շատ երկրագործական ցեղերի մոտ եզը ընդունվել է որպես սրբազան կենդանի[5]:

Սակայն պեղումների միջոցով հայտնաբերված նյութերը հնարավորություն են տալիս դիտելու ոչ միայն կենդանիների թվական աճը, տնտեսության

---

[1] Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը կատարել է Ս. Մեժլումյանը:

[2] **Б. Б. Пиотровский,** Поселения медного века в Армении, էջ 172.

[3] **Ե. Լալայան,** Դամբարանային պեղումները Խորհրդային Հայաստանում, էջ 62:

[4] **С. Даль,** Череп примитивного домашнего быка. Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հատ. V, Երևան, 1959, էջ 133—141: Դամբարանը պեղվել է Հ. Մնացականյանի կողմից, նյութերը հրատարակված չեն:

[5] **Heornes—Menghin,** Urgeschichte der bildender Kunst in Europa, Wien 1925, էջ 521.

մեջ նրա կատարած դերի ուժեղացումը, այլև գլխաքանակի որակական փոփոխությունները:

Վաղ բրոնզի դարաշրջանում մեծ թափով աճում են մանր եղջերավոր կենդանիները:

Էլարում 1927—1928 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ մանր եղջերավոր կենդանիների և աննշան քանակությամբ խոշոր եղջերավոր կենդանիների, նաև ձիու, էշի և խոզի ոսկորներ[1]: 1927 թ. Էլարի «Կարմիր կալ» կոչվող վայրում բացված, քարերով կազմված օջախի կողքին հայտնաբերվել է գառան ամբողջական կմախք[2]: Հորերում ևս գտնվել են ընտանի մանր եղջերավոր կենդանիների ամբողջական կմախքներ[3]:

Հետաքրքրականն այն է, որ Էլարի 1960—1961 թթ. պեղված համարյա բոլոր դամբարաններում, գանգից վեր, ուղղակի հողի վրա դրված էր այծի կամ ոչխարի երբեմն ամբողջ կրծքավանդակը: Որպես կանոն նման ոսկորներով են լցված դամբարանում դրված լայնաբերան բրեղանները: Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճ նկատվում է նաև Գառնիի ոսկրաբանական նյութերում: Չնայած հայտնաբերվել են նաև խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ (Bos taurus)՝ գոմեշի (Bos bubalus)[4], սակայն գերազանցում են մանր եղջերավոր կենդանիների ոսկորները՝ ոչխարի (Ovis ophion+aries) և այծի (Capra aegagrus+domestica)[5]: 1960—1962 թթ. պեղումների ընթացքում, ինչպես կլոր կացարանում և նրա մուտքի առջև, այնպես էլ կացարանից դուրս գտնվող հորում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ ոչխարի ու այծի գանգեր և այլ ոսկորներ: Գառնիում հայտնաբերվել են նաև ձիու (Equus caballus), էշի կամ կուլանի (Equus asinus կամ Hemianus), խոզի (sus comesticus) և շան (Canis familiaris) ոսկորներ[6]:

Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճը թելադրված էր հասարակության արտադրողական ուժերի զարգացմամբ, որը հանգեցրեց անասնապահության ձևի փոփոխությանը: Բնակատեղիների մոտ գտնվող արոտավայրերն այլևս անասնակերով չէին բավարարում և ստիպված անասուններին քշում էին հեռու արոտավայրեր, խոտով հարուստ լեռներ, որի պատճառով անասնապահությունը նոր ձև է ընդունում, դառնում կիսաքոչվոր: Պարզ է, որ անասնապահության այս սիստեմը պայմանավորվում էր հեշտ տեղաշարժվող և քիչ հոգատարություն պահանջող մանր եղջերավոր կենդանիներով[7]:

Քոչվոր անասնապահության գոյությունը վկայող բնորոշ փաստերից են նաև բնակատեղիներում հայտնաբերվող ձիու և էշի ոսկորները: Հոտի աճը վերոհիշյալ դարաշրջանում ավելի հեշտ ձևով էր տալիս հավելյալ մթերքներ քան երկրագործությունը[8]: Բացի մսից, կաթնամթերքներից, մորթուց, մանր

---

1 Е. Байбуртян, Псевдонеолитические поселения Армении, էջ 40.

2 Նույն տեղում:

3 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 62: Б. Б. Пиотровский, Поселения медного века в Армении, էջ 36:

4 Б. Н. Аракелян, նշվ. աշխ. էջ 26:

5 Նույն տեղում:

6 Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը բացի Ս. Դալից կատարել է նաև կենդանաբանության ինստիտուտի աշխատակից Ս. Մեժլումյանը:

7 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, էջ 40: Նույնի, Развитие скотоводства в древнейшем Закавказье, էջ 6: Նույնի, Основные итоги и проблемы археологического изучения Закавказья, Л., 1948, էջ 27—28:

8 Նույնի, Археология Закавказья, էջ 40:

եղջերավոր կենդանիները հումքի բազա են ծառայել նաև մանածագործության համար։

Այսպիսով վաղ բրոնզի դարաշրջանում անասնապահության զարգացումը պայմանավորված լինելով հասարակության արտադրողական ուժերի զարգացմամբ, իր հերթին մեծ նշանակություն է ունեցել և խթանել է այդ մշակույթի առաջընթացին։

3. ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարաշրջանի բնիկների կյանքում քիչ նշանակություն չեն ունեցել նաև որսորդությունն ու ձկնորսությունը։

Որսորդությունը վկայող փաստերից են բնակատեղիներում հայտնաբերված վայրի կենդանիների ոսկորները։

Կիրովականի Քոսի-ճոթեր բնակատեղի պեղումների ժամանակ հայտնաբերվել են ազնիվ եղջերուի (Cervus elaphus), *վայրի այծի* (Capriolus-capriolus), *կխտարի* (Capra acgagrus) *և վարազի ոսկորներ*[1], *Կիրովականում գեոմորֆոլոգների աշխատանքները և մեր պեղումների նյութերը ցույց են տալիս, որ բնակատեղիների շրջակայքը ծածկված է եղել լայնատերև անտառներով, որոնք որսի լայն ասպարեզ են տվել տեղաբնիկներին։*

Շենգավիթում հայտնաբերվել են մասնավորապես վայրի այծի և ձիու ոսկորներ[2]*։*

Որսորդության գոյության հետաքրքրական փաստերից են նաև Գառնիի ոսկրաբանական նյութերը։ Գառնիում հայտնաբերվել են վայրի այծի, ոչխարի, նապաստակի (Lepus europaeus), *եղջերուի* (Cervus elaphus), *լեռնային կաքավի* (Alectoris graeca) *ոսկորներ*[3]*։*

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ոսկրե, քարե և մետաղե մի շարք զենքեր, որոնք օգտագործվել են որսորդության ժամանակ, օրինակ՝ կայծքարե, օբսիդաքարե և ոսկրե նետասլաքները, բրոնզե տեգի ծայրերը, քարե գուրզերը և այլն։

Կայծքարե և օբսիդաքարե եռանկյունաձև նետասլաքները երեք տիպի են. ուռչակով (Էլարի դամբարաններից № 2246/55, Ջրառատի դամբանաբլուրից № 1939/1, Էջմիածնի Քյուլ-Թափայից[4]*, Գառնիից № 1965/215, 1966/1, Բաբա-դերվիշից*[5]*, Ստեփանակերտի № 119 դամբանաբլուրից*[6]*), ուղիղ կտրված հիմքով (Էջմիածնի Քյուլ-Թափայից, Ջրառատի դամբանաբլուրից № 1939/10, Դվինի 1959 թ. պեղումներից, Բաբա-դերվիշից*[8]*), փորված հիմքով (Էջմիածնի Քյուլ-Թափա*[9]*, Գառնի № 1964/42, Ջրառատի դամբանաբլուր № 1939/2, 3, Ստեփանակերտի № 119 դամբանաբլուր*[10]*, աղ. VI)։*

---

1 **Э. В. Ханзадян**, Энеолитическое поселение близ Кировакана, *էջ 155։*

2 **Б. Б. Пиотровский**, Поселения медного века в Армении, *էջ 172։*

3 **Б. Н. Аракелян**, *նշվ. աշխ., էջ 25։*

4 **Б. Б. Пиотровский**, *նշվ. աշխ., էջ 175, նկ. 2։*

5 **И. Г. Нариманов, Г. С. Исмайлов**, Акстафачайское поселение близ г. Казаха, *էջ 154, նկ. 39։*

6 **Я. И. Гуммель**, Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана, *էջ 19, նկ. 8։*

7 **Б. Б. Пиотровский**, *նշվ. աշխ., նկ. 2։*

8 **И. Г. Нариманов, Г. С. Исмайлов**, *նշվ. աշխ., էջ 154, նկ. 3։*

9 **Б. Б. Пиотровский**, *նշվ. աշխ., նկ. 2։*

10 **Я. И. Гуммель**, *նշվ. աշխ., էջ 19, նկ. 8։*

Վերոհիշյալ երեք տիպի նետասլաքներից հայտնաբերվել են Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի վաղ բրոնզեդարյան այլ հնավայրերում:

Ընդհանրապես կայծքարե և հատկապես օբսիդաքարե նետասլաքները չնչին ձևափոխումներով դարեր շարունակ պահպանվել են մետաղե նետասլաքների կողքին և երբեմն թվով գերազանցել նրանց:

Ոսկրից, կռնաձև գլխով, երկարավուն երեք նետասլաքներ են հայտնաբերվել Շենգավիթում (№ 1330/341, 3611, 1442/26): Նմանները գտնվել են Ալիշարի II շերտում[1]:

Հնագույն զենքի, հիմնական տեսակներից մեկն էլ գուրզն է, որը բավական երկար գոյություն է ունեցել բազմաթիվ երկրներում և տարածված է եղել դեռևս նեոլիթից:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից հայտնաբերված մարմարից, սև հեմատիտից, մոխրագույն քարից գուրզերը ըստ ձևի կարելի է բաժանել հետևյալ խմբերի. գնդաձև (Շրեշ-բլուրում և Քյուլ-Թափայում № 776/7, Շենգավիթում՝ № 1330/334, 389, 8, 9, Արմավիրում՝ № 776/7, Քոսի-Ճոթերում՝ № 2127/59, Դվինում՝ № 1641/59 և այլուր), տանձաձև (Շենգավիթում № 1442/114, էջմիածնի բլուրներից՝ № 779/169 աղ. VI): Քարե գուրզերը լայն տարածում են ունեցել Կովկասում, նաև Առաջավոր Ասիայում:

Հայտնաբերվել են զենքեր նաև բրոնզից, օրինակ՝ նետի ծայր Էլարի դամբարաններից (№ 2246/64, նկ. 7, աջից), նիզակի ծայրեր Կամոյից և Կիրովականից (աղ. VII վերին շարք աջից):

Որսը մարդուն տալիս էր առաջին հերթին միս, ապա ցրտից պաշտպանվելու համար մորթի, մուշտակ, տրեխների համար կաշի: Վայրի այծերի և եղջերուների եղջյուրներից պատրաստում էին աշխատանքային զանազան գործիքներ և զենքեր: Եղջյուրներից պատրաստված գործիքներն օգտագործելի են եղել հատկապես երկրագործության մեջ: Եղջերուի ոտքի մասի ոսկորներից պատրաստվել են զարդեր, հմայիլներ վզից կախելու, հագուստները զարդարելու համար և այլն (նկ. 13):

Ինչպես վերը տեսանք, բնակատեղիների գերազանց մեծամասնությունը կառուցվել են գետերի ափերին կամ գետային տերրասներում, որտեղ լայն հնարավորություններ կային ձկնորսությամբ զբաղվելու: Այդ երևույթը հատկապես դիտվում է Կիրովականում: Օրինակ՝ Քոսի-Ճոթեր բնակատեղին, որը երկու կողմերից շրջապատված է ջրերով: Խիտ բնակեցված են եղել նաև Տանձուտ գետի երկու ափերը, ինչպես և Աղստև գետի հովիտն սկսած նրա ակունքներից:

Գետափին է կառուցված Շենգավիթը, որի պեղումների ժամանակ առատորեն հայտնաբերվել են տարբեր տեսակների ձկան ոսկորներ: Ըստ մասնագետների, ձկան ողերից մեկը պատկանել է մոտ 1 մ երկարություն ունեցող սազանին[2]:

Ձկնորսությամբ զբաղվելու ապացույցներից են նաև պեղումների ժամանակ հայտնաբերված մի շարք աշխատանքային գործիքները, օրինակ՝ ուղանիվները, տարբեր տեսակի սուղաքարեր-ծանրոցները և այլն (աղ. II): Շատ հավանական է, որ ձկնորսության են ծառայել համարյա բոլոր բնակատեղիներում հայտնաբերվող կավե շրջանակները. մեծ քանակությամբ փայտից և անկայուն այլ նյութերից պատրաստված գործիքները մեզ չեն հասել:

---

[1] **Б. А. Куфтин**, Урартский «колумбарий»..., էջ 114, նկ. 68_9.

[2] Ե. Բայբուրդյան, Զենագիր աշխատություն, էջ 67:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում նոր վերելք են ապրում արհեստները, որոնք սկիզբ են առել դեռևս նախորդ դարաշրջաններում:

Զարգացման մի նոր փուլ են ապրում մետաղագործությունն ու խեցեգործությունը և արհեստների մի շարք այլ ճյուղեր, ինչպիսիք են մանածագործությունը, կաշեգործությունը, բնակարանաշինությունը, փայտամշակման գործն ու քարակոփությունը:

1. ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արտադրաուժերի զարգացման ամենահզորագույն գործոններից մեկը մետաղագործության առաջացումն էր, որն իր հերթին պայմանավորված էր հասարակական կյանքում եղած նշանակալից առաջընթացով: Ինչպես վերը տեսանք, Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Կովկասում, մ.թ.ա III հազարամյակում զգալի տեղաշարժեր են տեղի ունենում տնտեսության տարբեր բնագավառներում: Զարգացման նոր վերելք են ապրում երկրագործությունը և անասնապահությունը: Սկիզբ է դրվում նաև այգեգործությանը:

Մետաղամշակումը Հայկական լեռնաշխարհում բավական հին արմատներ ունի: Նրա զարգացման և առաջընթացի համար մեծ նշանակություն են ունեցել նախ և առաջ երկրի բնական պայմանները:

Հայկական լեռնաշխարհը շատ հնուց հայտնի է եղել իր բնական հարստություններով, օբսիդաքարով և մետաղի հանքերով:

Դեռևս պալեոլիթյան դարաշրջանից սկսած Հին Արևելքի մի շարք երկրներ այստեղից ներմուծել են օբսիդաքար[1], իսկ մի փոքր ուշ նաև պղինձ ու այլ մետաղներ:

Հույն պատմագիրները հետաքրքրական բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում իրենց ժամանակակից և ավելի հին շրջաններում Հայկական բարձ-

[1] **Morgan, J.,** La Prehistoire orientale, Paris, 1927. t. III, էջ 26:

բովանդակում հանրանյութերի հանույթի, մետաղի մշակման վերաբերյալ։ Ստրաբոնը հաղորդում է Սպերում գոյություն ունեցող ոսկու հանքերի և նրան հարևան Խաղտիքի երկաթով և արծաթով հարուստ հանքերի մասին ու նշում, որ այստեղ ապրող լեռնցիները հիմնականում զբաղվում են այդ հանքերի մշակությամբ[1]։

Հետաքրքրական տեղեկություններ են պահպանել նաև հայ մատենագիրները։

Փավստոսը գրում է, որ Հակոբ Մծբնեցին գալով Հայաստան «Գայր հասանէր ի լեառն երկաթահատացն և կապարահատացն և որ ընդ նմայն էին, ընդ Ըորշաունիս»[2]։ Կաղանկատվացին ևս վկայում է «Առաքեաց իշխանն հիւսիսոյ զօրծակալս ի վերայ ազգի, ազգի արուեստագործաց, որոնք զգիտութիւն ոսկէծրնութեան և արծաթահալութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին»[3]։

Հ. Մարտիրոսյանը նշում է, որ շումերացիներն օգտվել են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և Օմանի պղնձահանքերից և մթա II հազարամյակում Հին Արևելքի շրջանների մեջ պղնձի պաշարներով հատկապես աչքի է ընկել Մուսասիրը (Ջուլամերիկի լեռներում), որն առաջին տեղն է բռնել իր հանքերի մշակմամբ և արտահանումով։ Շուպրիան (Սասունի լեռները) առաջին տեղն է գրավել անագի պաշարներով[4]։

Սովետական նշանավոր հնագետ Ա. Իեսսենը խոսելով պղնձահանքերով հարուստ երկու կարևորագույն մետաղագործական կենտրոնների մասին, որոնցից մեկը նա տեսնում է Տրապիզոնից և Ճորոխից հարավ, իսկ մյուսը՝ Խարբերդից (Էլյազիգ) հարավ-արևելք՝ Արղանայում (Էրգանի—մադեն), այսինքն Հայկական Տավրոսում, գտնում է, որ մետաղագործության վաղ փուլերում նրանք պետք է, որ կարևոր դեր խաղային ինչպես Անդրկովկասին, այնպես էլ Հյուսիսային Սիրիային, Միջագետքին մետաղով մատակարարելու գործում[5]։ Նա միաժամանակ նշում է, որ մի շարք ժամանակակից օտարերկրյա գիտնականներ՝ Ա. Հյուբերը, Կ. Շեֆֆերը և Մ. Դյունանը նույնպես շեշտել են մետաղագործության վաղ փուլերում Սիրիային մետաղով մատակարարելու գործում Հայկական լեռնաշխարհի նշանակալից դերը[6]։

Ներկայումս միայն Սովետական Հայաստանի տերիտորիայում հայտնի են 60-ից ավելի պղնձահանքեր, բայց դժբախտաբար պարզված չէ, թե նրանցից որոնք են մշակվել հնագույն ժամանակներում։

Սակայն բոլոր փաստերը հավաստում են, որ դեռևս շատ հնուց, մետաղագործության վաղ փուլերում, Հայկական լեռնաշխարհը մետաղի հումքի բազա է ծառայել ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Հին Արևելքի մի շարք երկրների համար և, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները, ինչպես ճիշտ նկատել է նաև Հ. Մարտիրոսյանը, մասնագիտացած են եղել մետաղների հանույթի մշակման և արտահանման մեջ[7]։

---

1 Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. ԺԴ.—Հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 61։

2 Փ. Բուզանդ, Մատենագրութիւն նախնեաց, Վենետիկ, 1832, էջ 24։

3 «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 190։

4 А. А. Мартиросян, К предыстории древнейших этапов культуры Армении, էջ 95։ Նույնի, «Армения в эпоху бронзы и раннего железа», էջ 29։

5 А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV и III тысячелетиях до нашей эры. КСИА, вып. 93, 1963, М., էջ 6։

6 Նույն տեղում։

7 А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 29։

Հանքավայրերի օգտագործման մեջ հայտնի նյութական փաստերից մեկը մի շարք հնավայրերում հայտնաբերված մասսիվ, կոպիտ, ծանր կացիններ ու մուրճերն են, որոնցից հայտնաբերվել են Ջվարթնոցում (№ 1785/22, նկ. 5 աջից), Շրեշ-բլուրում (№ 121, նկ. 5, ձախից), էջմիածնում (№ 562), Շենգավիթում (№ 1618, աղ. V), Կողբի աղահանքում, Արմավիրում և այլուր: Նրանք ծառայել են հանքանյութի մանրացմանը, ունեցել են լայն տարածում և երկար կյանք: Հայտնաբերվել են նաև Թեյշեբաինի քաղաքում (1960 թ. № 33):



Նկ. 5. Քարե կացիններ-մուրճեր. Շրեշ-բլուր և Ջվարթնոց:

Հայկական լեռնաշխարհում մետաղամշակման ամենավաղ տվյալները երևան են գալիս դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում, էնեոլիթյան դարաշրջանում: Դրա լավագույն ապացույցներն են Արարատյան դաշտավայրի հնավայրերում՝ Թեղուտում (էջմիածնի շրջան)[1], Շենգավիթի և Նախիջևանի Քյուլ-Թափայի I շերտերում, ինչպես նաև Վանա լճի արևելյան ափին՝ Շամիրամալթիի (Տիլկի-Թեփե) I շերտում հայտնաբերված մետաղե իրերը: Նախիջևանի Քյուլ-Թափայի I շերտի մետաղե իրերի, սպեկտրալ քննությունից պարզվում է, որ այդ իրերից երկուսը պատրաստված են մաքուր պղնձից, իսկ մյուս երկուսը մկնդեղային բրոնզից[2]: Մկնդեղային բրոնզից պատրաստված իրեր հայտնաբերվել են նաև Շենգավիթի I շերտում և Թեղուտում[3]:

Ելնելով այս փաստերից կարելի է ասել, որ տեղաբնիկները մետաղի հալման գործին ծանոթ են եղել դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում:

Վերջին տարիների բազմաթիվ հայտնագործությունները ապացուցում են, որ մետաղագործությունը մ.թ.ա. III հազարամյակում թևակոխում է զարգացման մի նոր փուլ, որը բնորոշվում է մետաղի ոչ միայն հալման, այլև ձուլման բարդ պրոցեսով: Հայաստանում վաղ բրոնզի դարաշրջանում մետաղամշակման, մետաղաձուլության գոյությունը վկայող փաստերից են հայտնաբերված տարատեսակ կացիններն ու նրանց ձուլման կաղապարները, մանգաղները, դաշույնները, նիզակները, նետի ծայրերը և զարդարանքի առարկաները:

---

[1] Պեղումները կատարել է հնագիտության ինստիտուտի աշխատակից Ռ. Թորոսյանը:

[2] О. А. Абибуллаев, К вопросу о древней металлургии Азербайджана, МИА, 1965, т. II, М.—Л., էջ 67:

[3] Անալիզները կատարված են Ի. Սելիմխանովի կողմից:

Ա. ԿԱՑՆԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ ԵՎ ԿԱՑԻՆՆԵՐ

Կոթառով սեպաձև կացնի կաղապարներ Հայկական լեռնաշխարհում հայտնի են առայժմ երեքը՝ Շենգավիթից, Գառնիից և Նախիջևանի Քյուլ-Թափայի II շերտից:

Շենգավիթի կաղապարը (№ 1442/4, աղ. VII, վերևից I-ը) հայտնաբերվել է պեղվող հրապարակի կենտրոնում № 2 կլոր կացարանի հյուսիս-արևմտյան մասում[1]: Այն սպիտակ կրաքարից է, թերի: Կաղապարը շրջապատող մակերեսը հորիզոնական կտրվածքում տափակ է, հարթ, մի կողմը կոտրված, իսկ մյուսի վրա կա երկարավուն խողովակաձև փորվածք, որը ծառայել է կոթառի անցքն ստանալուն:

Գառնիում 1961 թ. հայտնաբերվեց կոթառով սեպաձև կացնի երկփեղկանի կաղապարի մեկ փեղկը (№ 2234/150) երկու կտորից (վերականգնված է, նկ. 6, աղ. VII վերևում, ձախից II-ը)[2]:



Նկ. 6. Կացնի կաղապար, Գառնիից:

Այն գտնվեց 2,5 մ խորության մեջ, կլոր կացարանի ներսում, մուտքից ձախ՝ մոտ 2,5 մ հեռավորության վրա, պատի տակ, կավից պատրաստված երկարավուն, մոտ կես մետր բարձրության, 40 սմ լայնություն ունեցող նստարանի վրա, մոխրաշերտում, բազմաթիվ այլ իրերի հետ: Նրա կողքին գտնվեցին ոսկրե հերուն և ասեղ, կավե թեշիկի գլուխ, մանկական սայլի անիվ, ներճկված փոսիկներով զարդարված սև փայլեցրած խեցեղեն:

Կաղապարը պատրաստված է հրաբխային կավից երկարությունը 0,17 մ, լայնությունը 0,07 մ): Նրա շրջապատող մակերեսը հորիզոնական կտրվածքում երեք կողմից տափակ է և հղկված, որպեսզի երկրորդ փեղկը լավ նստի վրան, իսկ չորրորդ կողմը ուժեղ թեքվում է դեպի կաղապարի ներսը և հարմարեցված է հալված մետաղը կաղապարի մեջ լցնելու և գազերը միջից դուրս գալու համար: Կաղապարի կոթառի և բերանի կողմերում, հորիզոնական հարթ մակերեսի վրա արված են մեկական կլոր, փոքր անցք, որոնք ծառայել են երկու փեղկերը սեպիկներով իրար միացնելուն, կապելուն: Այս կաղապարով

---

[1] Ե. Բայբուրդյան, *Ձեռագիր աշխատություն*, էջ 52: **Б. Б. Пиотровский**, Поселения медного века в Армении, էջ 172, **А. А. Мартиросян**, К предыстории древнейших этапов культуры Армении, էջ 98, նկ. 1:

[2] Է. Խանզադյան, *Մետաղագործության առաջին փուլերը Հայկական լեռնաշխարհում՝ հնագույն բրոնզի դարաշրջանում*, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1963, էջ 300, նկ. $2_{1,2}$: Նույնի. О металлургии древнебронзовой эпохи в Армении, СА, № 2, 1964, էջ 94, նկ. 2_1:

ձուլվել է մի փոքր արդեն կախ կոթառով սեպաձև կացին, որի գիպսե օրինակի երկարությունը 11 սմ է: Կացնի վերին եզրը կոր գծով դեպի դուրս է ձգվում, բայց ոչ շատ ուժեղ շեշտված: Այն կոթառի վերջում ավելի նեղ է (3 սմ), քան բերանի մոտ (4 սմ): Կոթառի վերին, ձախ մասում կաղապարի վրա 3/4 տրամագծով կիսաշրջանաձև փորվածք է արված, որի օգնությամբ ստացվել է կոթառի անցքը (2,8 սմ տրամագծով):

Գառնիի և Շենգավիթի կաղապարների համեմատությունից պարզվում է, որ Գառնիինը ավելի երիտասարդ է:

Շենգավիթի կաղապարի մի շարք հատկանիշներ, օրինակ երկու փեղկերն իրար միացնելու համար արված անցքերի բացակայությունը, կոթառի համար անցքի պրիմիտիվ փորվածքը, ապա հալված մետաղը կաղապարի մեջ լցնելու հարմարանքի բացակայությունը հավաստում են նրա արխայիկ լինելը:

Մյուս կողմից, ըստ Ե. Բայբուրթյանի, № 2 կլոր կացարանում (որտեղ հայտնաբերվել է կաղապարը), շերտը խորացվել է մակերեսից մոտ 3,34 մ[1], և հայտնի չէ թե կաղապարը ո՞ր հորիզոնից է: Սակայն նկատի ունենալով նրա արխայիկ ձևը, կարելի է համոզվել, որ նա վերին շերտից չէ:

Գառնիում մետաղաձուլության գոյությունն ապացուցող փաստերից մեկն էլ կավե կթխանների գյուտն է, որոնք հայտնաբերվեցին կլոր կացարանի դրսի պատի տակ, մոխրով և կենդանիների այրված ոսկորներով հարուստ շերտում: Այս կթխանները սովորական կավե լայնաբերան մեկկանթանի կճուճներ են ուռուցիկ փորով, դեպի ցած կոնաձև նեղացող ներքնամասով և ներճկված փոքր հատակով: Բոլորը ներսից ունեն մետաղե խարամի հետքեր: Որոշ բեկորների ներսի կողմում մետաղի մնացորդներ են պահպանվել՝ 1,5% մկնդեղի պարունակությամբ: Կավը կրակի ուժեղ ազդեցությունից այրվել, շորացել է, փայլը և գույնը կորցրել: Նման կթխանների մոտ ինը տարբեր բեկորներ են հայտնաբերվել, բոլորն էլ արտաքինից զարդանախշված (№ 2234/136, 137): Այնուամենայնիվ այս կավամաններն իրենց ձևով և զարդանախշումով տարբերվում են կաղապարի հետ գտնված խեցեղենից, դրանով իսկ շեշտելով նրանց միևնույն մշակույթի զարգացման տարբեր փուլերին վերաբերվելը:

Կավե հալոցների և նրանց հետ գտնված կրակի ուժեղ ազդեցությունից արդեն այրված, խարամի վերածված խեցեղենի կույտն անշուշտ, վկայում է նաև ձուլման վառարանների գոյության փաստը Գառնիում:

Այսպիսով, շնորհիվ վերահիշյալ հայտնագործությունների, Գառնին կարելի է դասել Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան այն բնակատեղիների շարքը, որտեղ բավական զարգացած է եղել մետաղաձուլությունը և մետաղամշակությունը, որը կարելի էր դիտել արդեն որպես մի առանձին արտադրաճյուղ: Նման բնակատեղիների շարքը կարելի է դասել նաև Նախիջևանի Քյուլ-Թափան, որի II շերտի ստորին խավերում հայտնաբերվել են կոթառով սեպաձև կացնի երկփեղկանի կաղապարը, երկու այլ իրերի կաղապարներ և փոքր կավամաններ մետաղի մնացորդներով և բրոնզե մի շարք իրեր[2]:

Քյուլ-Թափայի կացնի կաղապարի շերտում հայտնաբերվել է նման խեցեղեն, ինչ որ Գառնիի կաղապարի հետ, այսինքն նույն մեկկանթանի սև փայլեցրած գավաթները, երբեմն բոլորովին անզարդ[3]: Այս հանգամանքը նույնպես

---

[1] Ե. Բայբուրդյան, Ձեռագիր աշխատություն, էջ 33:

[2] **О. А. Абибуллаев**, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, էջ 162. նկ. 4, 16, 17, 18, էջ 161, 165

[3] Նույն տեղում:

հավաստում է Գառնիի և Քյուլ-Թափայի կաղապարների ժամանակակից լինելը:

Բացի կաղապարներից, Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են նաև կոթառով սեպաձև կացիններ, որոնցից դեռևս երկու օրինակ են հայտնի՝ Լենինականից և Մալաքլուի «կավե քաղաքից»:

Լենինականի կացինը պատահական գյուտ է (աղ. VII, վերևում ձախից III)[1]: Մալաքլուի կացինը[2] հայտնաբերվել է կուլտուրական շերտում պղնձե ձուլիչների (որոնց վրա երևում են կաման հետքեր) մակույկաձև աղորիքների ու սրոցիչների և որ ամենագլխավորն է Գառնիի ու Էլարի տիպի սև փայլեցրած զավաթների և սափորների հետ միասին[3]:

Այսպիսով Հայկական լեռնաշխարհի կոթառով սեպաձև կացնի կաղապարներն ու կացինները հիմնականում ուղեկցվում են համանման խեցեղենով, որն ապացուցում է նրանց զարգացման միևնույն փուլին վերաբերելը:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կոթառով սեպաձև կացիններն իրենց զուգահեռներն ունեն Վրաստանում: Հայաստանի և Վրաստանի միջև կապող օղակ է կազմում Բրդաձորի կացինը[4]: Նման կացիններ հայտնաբերվել են հատկապես Արևելյան Վրաստանում (Ջագեսում)[5] և Հարավային Օսեթիայում (Ցալբուղիում, Կուլբակեբիում)[6]:

Ջնայած Վրաստանի կացինները պատահական գյուտեր են և հիմնականում ուղեկցող նյութեր չունեն, սակայն նրանց ժամանակը որոշելու գործում հետաքրքիր կռահումներ է արել Բ. Կուֆտինը, նշելով, որ Ցալբուղիի տիպի կացնի հետ հետագայում կհայտնվի «էնեոլիթյան» խեցեղենի այն խումբը, որը հայտնաբերվել է Ս. Նադիմաշվիլու կողմից Զգուդրիս Գվերդայում (Հարավային Օսեթիայում)[7]:

Բ. Կուֆտինի կռահումներն իրենց հաստատումը գտան Հայկական լեռնաշխարհում վերջին տարիների պեղումների արդյունքներով: Զգուդրիս Գվերդայի խեցեղենը ձևով, կատարման եղանակով բավական նման է ինչպես Գառնիի կացնի կաղապարի հետ գտնված խեցեղենին, այնպես էլ Էլարի խեցեղենին: Օրինակ՝ Գառնիի կիսագնդաձև (№ 2234/162), ապա դեպի վեր լայնացող իրանով թասերն (№ 2234/162) իրենց զուգահեռներն ունեն Զգուդրիս Գվերդայի խեցեղենում[8]:

Բացի այդ Զգուդրիս Գվերդայում կրկնվում են Գառնիում. Մալաքլուում կոթառով սեպաձև կացնի հետ հայտնաբերված և հատկապես Էլարում հանդիպող ներճկված փոքր հատակով, ուռուցիկ իրանով խողովակաձև վզով զավաթները[9], զավաթատիպ մեծ կճուճները[10], միայն այն տարբերությամբ, որ Զգուդ-

---

1 **А. А. Мартиросян**, նշվ. աշխ., էջ 92, 93, նկ. 2:

2 **Б. А. Куфтин**, Урартский «колумбарий» ..., էջ 74, աղ. XIX_8:

3 Նույն տեղում, աղ. XIX_{1-7}, էջ 74, նկ. 34 և այլն:

4 **Д. Л. Коридзе**, Новые находки медных орудий в Квемо-Картли, СА, 1958, № 1 էջ 137, 138, նկ. 2_4:

5 **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 10, նկ. 5:

6 Նույնի, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, էջ 36, աղ. XXI, **В. П. Любин**, Археологическая разведка в окрестностях города Сталинира, КСИИМК № 60, 1955, էջ 15, 16, նկ. 1_4:

7 **Б. А. Куфтин**, նշվ. աշխ., էջ 3 6:

8 Նույնի, К проблеме энеолита внутренней Картли и Юго-Осетии, Вестник Гос. музея Грузии, вып. XIV, Тб., 1947, էջ 74, նկ. $7_{3,4}$:

9 Նույն տեղում, նկ. 7_2:

10 Նույն տեղում, նկ. 7_{1-7}:

րիս Գվերդայում նրանք անզարդ են և դրանով իսկ ավելի նման Նախիջևանի Քյուլ-Թափայի II շերտում հայտնաբերվածներին: Այս զուգահեռները ևս հաստատում են Յալբուզիի, Մալաքլուի, Գառնիի և Նախիջևանի Քյուլ-Թափայի կացինների կաղապարների ժամանակակից լինելը:

Բ. Կուֆտինը նշում է, որ Զգուդրիս Գվերդայի խեցեղենին նման է Ջեմո-Ավչալայինը, որտեղ 1928 թ. հիդրոկայանի շինարարության ժամանակ մոտ 16 մ խորությունից հայտնաբերվել է կոթառով սեպաձև կացին և արխայիկ տիպի նիզակի ծայր[1]:

Վերոհիշյալ զուգահեռներից պարզվում է, որ կոթառով սեպաձև կացինները Հայաստանում և Վրաստանում ուղեկցվել են համանման նյութերով, ժամանակակից են միմյանց և մասնագետների մեծամասնության կողմից թվագրվում են մթա III հազարամյակի II կեսով[2]:

Հենվելով Նախիջևանի Քյուլ-Թափայից և Կվացխելեբիից ստացված ռադիոածխածնային C_{14}-ի անալիզի վրա, վերջերս որոշ գիտնականների կողմից վերոհիշյալ կաղապարները և կացինները թվագրվում են մթա III հազարամյակի ոչ թե II, այլ I կեսով[3]:

Սակայն Հայկական լեռնաշխարհի տեղական նյութական մշակույթին չափազանց բնորոշ խեցեղենի էվոլյուցիան, ինչպես և այլ բնույթի հարցեր ապացուցում են Նախիջևանի Քյուլ-Թափայի և նրան զուգահեռ հուշարձանների վաղ բրոնզի ոչ թե սկզբին, այլ վերջին վերաբերվելը:

Այսպիսով վաղ բրոնզեդարյան մշակույթի հետ առնչվող ժամանակագրական հարցերը դեռևս լուծված համարել չի կարելի: Ռադիոածխածնային մեթոդով Անդրկովկասի հնագիտական իրերի տարիքը որոշելու դեռևս նախնական փորձերն են կատարված և ապագայում ինչպես հնագիտական նոր հայտնագործություններով, այնպես էլ գիտական նոր մեթոդներով, անշուշտ, վերոհիշյալ իրերին կտրվի իրենց իսկական տարիքը:

Փաստերը համոզում են, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կոթառով սեպաձև կացնի կաղապարներն ու կացիններն իրոք կարող են թվագրվել մթա III հազարամյակի II կեսով: Բացառություն կարող է կազմել Շենգավիթի կաղապարը: Ելնելով նրա արխայիկ ձևից, այն հավանաբար կարելի է թվագրել մթա III հազարամյակի սկզբով:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կոթառով սեպաձև կացնի կաղապարները, կացինները և Վրաստանի կացինները օրինաչափորեն իրենց զուգահեռներն ունեն ինչպես հարավում, այնպես էլ հյուսիսում[4]:

Սակայն Հայաստանում և Վրաստանում հայտնաբերվածների համեմատությունը պարզում է նրանց ինքնատիպությունը և որոշ նրբին տարբերությունները, այսինքն հավաստում է տեղական ծագումը:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են կոթառով սեպաձև կացին-

---

[1] **Б. А. Куфтин,** Археологические раскопки в Триалети, էջ 10:

[2] Նույն տեղում, էջ 12: **А. А. Мартиросян,** К предыстории древнейших этапов культуры Армении, էջ 96. **О. Джапаридзе.** Ранний этап древней металлургии в Грузии, Тб., 1955, էջ 264:

[3] **К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили,** Историческое значение южного Кавказа в III тысячелетии до н. э., էջ 10—23:

[4] **Б. А. Куфтин,** К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии. Вестник Гос. музея Грузии, XII B, Тб. 1944, էջ 297: Նույնի, Археологические раскопки в Триалети, էջ 10:

ների նաև քարե օրինակներ, որոնք նույնպես հավաստում են մետաղե կացինների տեղական լինելը:

Քարից սեպաձև կացիններ կոթառի համար անցքով հայտնաբերվել են Գեթիում (№ 1266, աղ. VIII, վերին շարք, ձախից), Այգեստանում (№ 1212, աղ. IX, ներքևինը), էջմիածնի շրջանում (№ 587, աղ. VIII, վերին շարք, աջից), Դանլիջայում (Ախուրյանի շրջան)[1]: Չնայած կոթառով սեպաձև քարե կացիններ հայտնաբերվել են նաև Վրաստանում՝ Խիզանաանթ-Գորայում[2], Հյուսիսային Օսեթիայում՝ Ձաուջիկաու քաղաքի մոտակայքում[3], Հյուսիսային Կովկասում՝ Նովի Արշտի խուտորի № 9 դամբանաբլրում[4], Լուկա-Վրուբլևեցկայայում[5], սակայն որանք ձևով մի փոքր տարբերվում են Հայկական լեռնաշխարհի քարե կացիններից: Հետաքրքրականն այն է, որ Հայաստանի կացիններն իրենց զուգահեռներն ունեն ավելի շատ Հին Արևելքի մթա III հազարամյակի մշակույթում, սկսած Տրոյա II-ից մինչև Ալիշար[6]: էջմիածնի դիորիտե կացինը (№ 587) նման է Ալիշարում հայտնաբերվածին, որի կողերը էջմիածնի կացնի նման կոթառի համար անցքի ուղղությամբ երկու կողմից ելուստաձև դուրս են շեշտված[7]:

Կոթառով, սեպաձև քարե կացինների երկու օրինակ էլ հայտնաբերվել են Պաղեստինում: Ռ. Ամիրանը նրանց վերագրում է վաղ բրոնզի III փուլին և գտնում, որ այդ կացինները Պաղեստինում միակ օրինակներն են, նման են մթա III հազարամյակի անատոլիական ձևերին ու նրանցից արևելք ընկած կացիններին, և որ միգրացիայի ճանապարհով են ընկել Պաղեստին[8]:

Հայկական լեռնաշխարհում հայտնի է քարից կոթառով սեպաձև կացնի մի այլ տարատեսակը՝ ձվաձև փոքրիկ կացիններ—մուրճեր Շենգավիթից (№ 1330/7, աղ. VIII, ներքևում, ձախից I)[9], Պեմզաշենից (Արթիկի շրջան, № 1615, աղ. VIII, միջին շարք, ձախից), Գնիշիկից (Եղեգնաձորի շրջան, № 1336, աղ. IX, վերևինը)[10] և Նախիջևանի Քյուլ-Թափայից[11]: Այս բոլորն ապացուցում է կոթառով սեպաձև կացինների տեղային տրադիցիան և հավաստում նրա ավելի վաղ ծագումը:

Բացի վերը նկարագրված կացիններից, Հայաստանում մետաղագործության զարգացման երկրորդ փուլին է վերաբերում նաև կացինների մի այլ տեսակը, այսպես կոչված **կոցավոր կացինը**: Այս ունիվերսալ գործիքի տա-

---

1 **Е. Байбуртян**, Новые находки каменного века в Армении, СА, № 3. 1937, էջ 208:

2 **О. Джапаридзе**, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, Тб., 1961, էջ 259:

3 **Е. И. Крупнов**, Материалы по археологии Северной Осетии докобанского периода. МИА, № 23, 1951, էջ 28, նկ. 3_9:

4 **Р. Мунчаев**, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, էջ 55—56, նկ. 11 աղ. III_7:

5 **С. Н. Бибиков**, Поселение Лука-Врублевецкая, МИА, № 38, էջ 53, 312, աղ. 20 а, в, г.

6 **Ruth B. K. Amiran**, Connections between Anatolia and Palestine in the Early, Bronze Age. Reprinted from the Exploration Journal, vol. 2. № 2, 1952, էջ 101, նկ. 5:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

9 **Б. Куфтин**, Урартский «колумбарий» . . . , էջ 116, նկ. 69:

10 **Ե. Բայբուրդյան**, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիր», I գ., 1938, էջ 197, նկ. 6:

11 **О. Абибуллаев**, Раскопки холма Кюльтепе близ Нахичевани в 1955 г., МИА, 1959. № 67, էջ 440, նկ. 7_8:

ջին հոյակապ օրինակը գտնվել է Ալավերդում 1931 թ. (№ 759/6, աղ. VII, վերևում, ձախից IV-ը)[1]*:*

Նման մի կացին գտնվում է Լենինականի գավառագիտական թանգարանում (աղ. VII, վերևում, ձախից V-ը)[2]*:*

Կոցավոր կացիններ հայտնաբերվել են նաև Վրաստանում՝ Դմանիսիի[3] *և Թրիալեթիայի շրջաններում*[4]*. երրորդ կացինը գտնվում է Վրաստանի պետական թանգարանում և առանց անձնագրի է*[5]*:*

Հայաստանում և Վրաստանում հայտնաբերված կոցավոր կացինների մետաղի քանակական սպեկտրալ անալիզից պարզվում է, որ նրանք պատրաստված են մկնդեղային բրոնզից: Օրինակ՝ Ալավերդու կոցավոր կացնում մկնդեղը կազմում է 3%[6]*, Վրաստանի կացիններում՝ 1,85—2,06%*[7]*:*

Բ. Կուֆտինը գտնում է, որ կոցավոր կացինները ծագումնաբանորեն մեկ կողմից կապվում են Աշուրում հայտնաբերվածների հետ[8]*, իսկ մյուս կողմից՝ ակկադական մարտական կացնի հետ, որը պատկերված է Նարամսինի բարձրաքանդակում*[9]*:*

Շատ հավանական է, որ վերոհիշյալ կացինները թվագրվեն Նարամսինի արշավանքների ժամանակով, այսինքն մթա XXIV դարով:

Վերը նկարագրած կոթառով սեպաձև կացինների զարգացումը վաղ բրոնզի վերջին փուլում հանգեցնում է կախակոթառ կացինների, որոնց ամենավաղ օրինակներից մեկը հայտնաբերվել է Արևմտյան Հայաստանում՝ Կարազ-Արծրնում[10]*: Իր ձևով այն մի կողմից նմանվում է կոթառով սեպաձև կացիններին, ունի երկարավուն, համաչափ, լայն սեպաձև իրան, մյուս կողմից կոթառը լրիվ կախ է: Վերը նկարագրված սեպաձև կացինների համեմատ ավելի մասիվ է (աղ. VII-ի վերջին կացինը): Կացինը հայտնաբերվել է գետնի մակերեսից մոտ 4—4,5 մ խորության մեջ, B/1 շերտում: Այս նույն շերտում և նույն խորության վրա հայտնաբերվել են նաև բրոնզե դաշույն, տեգի ծայր և սև փայլեցրած խեցեղեն, որն անզարդ է, ավելի կատարելագործված ձևեր ունի, քան էլարյան տիպինը:*

Կախակոթառ կացնի մեկ այլ օրինակ հայտնաբերվել է Արարատյան դաշտավայրում (№ 751, աղ. VII, վերևում, աջից V)[11]*: Այն իր արտաքին ձևով մի փոքր տարբերվում է Կարազի կացնից: Իրանը կոթառի մոտ նեղանում է, իսկ դեպի բերանը գնալով՝ լայնանում: Էջմիածնի կացինը երկար է Կարազ-*

---

1 Ե. Բայբուրդյան, *Աշխատանքի գործիքները հին Հայաստանում, էջ 230, նկ. 87:* **Б. А. Куфтин,** К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, Вестник Гос. музея Грузии, *էջ 300, նկ. 4,:* **А. А. Мартиросян,** *նշվ. աշխ., էջ 99—100:*

2 *Նույն տեղում, էջ 99, նկ. 7:*

3 **О. Джапаридзе,** Ранний этап древней металлургии в Грузии, *աղ.* XIV.

4 **Б. А. Куфтин,** *նշվ. աշխ., էջ 300:*

5 *Նույն տեղում:*

6 *Մետաղների բոլոր անալիզները կատարված են Լենինգրադի հնագիտության ինստիտուտի լաբորատորիայում՝ Դ. Նաումովի և Վ. Սիդորովի կողմից:*

7 **Д. Л. Коридзе,** Новые находки медных орудий в Квемо-Картли, *էջ 134—135:*

8 **Б. А. Куфтин,** *նշվ. աշխ., էջ 300—301:*

9 *Նույն տեղում, էջ 301:*

10 **H. Z. Koşay, K. F. Turfan,** Erzerum-Karas kazisi raporu, *էջ 363,* № a 21, 22, *էջ 388, նկ.* a 22, *էջ 403, նկ.* a 21.

11 **А. А. Мартиросян,** *նշվ. աշխ., էջ 102, նկ. 9:*

Արծնի կացնից, սակայն կոթառը նույնպես կախ է և համարյա նույն երկարությունն ունի, ինչ-որ Կարաղ-Արծնինը:

Շատ հավանական է, որ վերոհիշյալ տարբերությունները վերաբերվում են նրանց տեղային առանձնահատկություններին: Տ. Օզգյուչը Կարաղի կացինը համեմատում է Մահմուդլարում, Կայապինարում, Փոլաթլիում վերջերս հայտնաբերված կացինների հետ, նշում, որ նրանք տեղական առանձնահատկություններ ունեն և հանդես են բերում նմանություններ Յորդանի և Ահլաթլիբելի կացինների հետ[1]:

Այսպիսով, եթե ճիշտ են վերոհիշյալ համեմատությունները, ապա Կարաղ-Արծնի կացինն ավելի շատ կապվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան կացինների հետ:

Էջմիածնի կացինն իր ձևով ավելի նման է Հորոզ-Թեփեում (Էրբաայի մոտ գտնվող բարձրադիր վայր է, Եշիլ Իրմակ գետի վտակի մոտ) հայտնաբերված կացնին: Տ. Օզգյուչը գտնում է, որ Հորոզ-Թեփեի կացինն իր զուգահեռները Անատոլիայում չունի և այն համեմատում է Կիևում հայտնաբերվածի հետ[2], այսինքն Հորոզ-Թեփեինը ավելի շատ կապում է հյուսիսի կացինների հետ:

Էջմիածնի կացինը կապվում է նույնպես հյուսիսի հետ, հատկապես Աբխազական դոլմեններում և Հյուսիսային Օսեթիայում հայտնաբերվածների հետ, Կյուր-Դերեում՝ էշերիի դոլմեններում հայտնաբերված նյութերի, Արաձխյան ստանիցայի նյութերի[3] հետ, որոնց մանրամասն զուգահեռները բերված են Հ. Մարտիրոսյանի մոտ[4]:

Բ. Կուֆտինը գտնում է, որ աբխազական և ընդհանրապես կովկասյան դոլմենները կառուցվել են հնագույն բրոնզից միջին բրոնզի անցման շրջանում և թվագրում է III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով[5]:

Հ. Մարտիրոսյանը էջմիածնի կացինը համարում է խողովակակոթառ կացնի ամենաարխայիկ տիպը և գտնում է ժամանակակից Շենգավիթի վերին շերտին[6]:

Հորոզ-Թեփեում հայտնաբերված ամբողջ իրերի կոմպլեքսը, դրանց թվում և կացինը թվագրվում է մթա III հազարամյակի վերջին հարյուրամյակներով (2150—2050 կամ 2200—2100 թթ.)[7]: Պեղման ղեկավարները Հորոզ-Թեփեին ժամանակակից են համարում Կարաղ-Արծնի կացինը[8]:

Կարաղ-Արծնի կացնի հետ հայտնաբերված դաշույնը և տեգի ծայրն իրենց զուգահեռներն ունեն էլարի վաղ բրոնզեդարյան նույնատիպ զենքերում և բացի այդ Կարաղ-Արծնի կացնի հետ հայտնաբերված խեցեղենը առնչվում է էլարյան տիպի և նրան հաջորդող փուլերի հետ:

---

1 T. Özgüç—M. Akok. Objets from Horoz-tepe. Türk Tarih Kurumi. Belleten, 1957, № 82, Ankara, էջ 215, նկ. 20:

2 Նույն տեղում, էջ 216:

3 **М. М. Иващенко**, Исследование архаических памятников материальной культуры в Абхазии, Тифлис, 1935. **Б. А. Куфтин**, Материалы по археологии Колхиды. 1, 1949.

4 **А. А. Мартиросян**, նշվ. աշխ., էջ 102—103:

5 **Б. А. Куфтин**, К вопросу о древнейших корнях. . ., էջ 305:

6 **А. А. Мартиросян**, նշվ. աշխ., էջ 102:

7 **T. Özgüç—M. Akok**, նշվ. աշխ., էջ 215:

8 Նույն տեղում, էջ 215:

Այսպիսով, ելնելով վերոհիշյալ փաստերից և զուգահեռներից, Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կախակոթառ կացինները (Կարազ-Արծն, Էջմիածին) նույնպես կարելի է թվագրել մթա III հազարամյակի վերջին հարյուրամյակներով:

Վերը բերված փաստերը հավաստելով կացինների տիպերի զարգացման ժամանակագրական հաջորդականությունը ու մշակութային սերտ կապերի գոյությունը Հին Արևելքի, Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի միջև, միաժամանակ վկայում են վաղ բրոնզեդարում, Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Կովկասում ոչ միայն մետաղաձուլության գոյության փաստը, այլև նրա բավական զարգացած մակարդակը, որը հնարավորություն էր տալիս տարատեսակ կացիններ ստանալ:

Բ. ՆԻԶԱԿԻ ԾԱՅՐԵՐ

Հայաստանում հայտնաբերված հնագույն զենքերից են նաև նիզակի ծայրերը, որոնցից հայտնաբերվել են Կամոյում և Կիրովականում:

Կամոյի նիզակի ծայրը (աղ. VII, վերին շարք, աջից III-ը) բավական մեծ է (երկարությունը 32,5 սմ), ունի կարճ, փետրաձև ծայր, և երկար ցողուն (միջին մասում ունի շրջանաձև ելուստ), որի ստորին մասը քառակող է և դեպի ցած աստիճանաբար նեղանալով, ավարտվում է սուր ծայրով, փայտե կամ ոսկրե կոթառին ամրացնելու համար[1]:

Չնայած Կամոյի նիզակի ծայրը պատահական գյուտ է և ուղեկցող նյութեր չունի, սակայն իր զուգահեռներն ունի մետաղի վաղ շրջանի Հին Արևելքի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի նյութերում և թվագրվում է մթա III հազարամյակի II կեսով[2]:

Պետք է նշել, որ Կամոյի նիզակի ծայրին հատկապես նման է նաև Դյունդար-Թեփեում (Կենտրոնական Անատոլիա) հայտնաբերվածը[3]: Վերջինս նույնպես ունի փետրաձև ծայր, թեթևակի շեշտված միջքով, միայն ցողունով մի փոքր տարբերվում է Կամոյի նիզակի ծայրից և թվագրվում է մթա III հազարամյակի վերջին հարյուրամյակներով[4]:

Ձևով բավական արխայիկ մի նիզակի ծայր հայտնաբերվել է Կիրովականում (№ 1236/82), 1935 թ. Կ. Ղաֆադարյանի կողմից պեղված ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեկում (աղ. VII, վերին շարք, աջից II-ը)[5]: Ելնելով նրա արխայիկ ձևից Հ. Մարտիրոսյանը նշում է, որ այն վաղ շրջանին վերաբերվող քանդված դամբարաններից ընկել է ուշ շրջանի նյութերի հետ, նրա զուգահեռները տեսնում է Ուրում, Լագաշում, Սուզում, Սաչխերիում և թվագրում է մթա III հազարամյակի II կեսով[6]:

---

[1] **А. А. Мартиросян,** նշվ. աշխ., էջ 96, նկ. 5:

[2] **Б. А. Куфтин,** Археологические раскопки в Триалети, էջ 12, **А. А. Иессен,** К хронологии Больших кубанских курганов, СА, В. XII 1950, էջ 191: **А. А. Мартиросян,** նշվ. աշխ., էջ 95—97: Նույնի, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 29—31: **О. Джапаридзе,** К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, էջ 264:

[3] **T. Özgüç, M. Akok,** նշվ. աշխ., էջ 217—219, նկ. 23:

[4] Նույն տեղում:

[5] **А. А. Мартиросян,** նշվ. աշխ., էջ 97, նկ. 6:

[6] Նույն տեղում:

Կիրովականի նիզակի ծայրի մետաղի քանակական սպեկտրալ անալիզից պարզվում է, որ այն իր մեջ 90% պղնձի հետ պարունակում է չնչին քանակությամբ մկնդեղ (0,3%), կապար (1,5%) և մեծ քանակությամբ անագ (7%)։ Հետաքրքրական տվյալներ են տալիս նաև վերջերս հայտնաբերված մի շարք այլ իրերի սպեկտրալ անալիզները։ Պարզվում է, որ Գառնիում 1965 թ. հայտնաբերված խխունջաղարդ օղակը (№ 24) պատրաստված է կապարից, իսկ քառակող հերունը (№ 27) պղնձի, 14,7% կապարի և 5% մկնդեղի խառնուրդից[2]։ Կապարից է պատրաստված նաև Նախիջևանի Քյուլ-Թափայի II շերտում հայտնաբերված գլանաձև իրը[3]։

Այսպիսով մետաղե իրերի նման կազմը ապացուցում է, որ մթա III հազարամյակի վերջում բացի մկնդեղային բրոնզից Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին ծանոթ են եղել նաև այլ տիպի ձուլվածքների ստացման եղանակը և որ վաղ բրոնզի վերջին փուլերում արդեն կիրառելի է եղել համանաբար նաև անագի ու կապարի խառնուրդով բրոնզ ստանալը, որը բնորոշ է դառնում մի փոքր ավելի ուշ՝ միջին բրոնզի դարաշրջանում։

Գ. ԴԱՇՈՒՅՆՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՏԵԳԻ ԾԱՅՐԵՐ

Այս զենքերը Հայկական լեռնաշխարհում դեռևս սակավաթիվ օրինակներով են հայտնի։

Էլարում 1961 թ. հայտնաբերվել են քարարկղներում և կավածեփ հիմնահողային դամբարաններում, աջ կողքի պառկած, կծկած ոտքերով կմախքի, սև փայլեցրած կլոր և ձվաձև փոսիկներով, կիսաշրջանաձև ու խուլ կանթերով զարդարված խեցեղենի հետ։

Հայտնաբերված դաշույններից մեկը (№ 2246/30 նկ. 7, ձախից II-ը), թերի է, տափակ, եռանկյունաձև իրանով, թեք ուսերով և նեղ երկար պոչով։ Ուսերին պահպանվել են փայտե կոթառի հետքերը։ Երկրորդ դաշույնը (№ 2246/73, նկ. 7, ձախից I-ը) ամբողջական է և չափերով մեծ նախորդից։ Ունի տափակ, ձգված իրան, թեք ուսեր և լայն տափակ պոչ։

Փոքրիկ դաշույնը կամ տեգի ծայրը (նկ. 7, աջից I-ը) տերևաձև է, ամբողջական (№ 2246/64,), կարճ և տափակ պոչով։

Էլարի դամբարաններում հայտնաբերվել է նաև մեկ դանակ (№ 2246/35, նկ. 7, աջից II-ը), որը փետուրի ձև ունի, առանց պոչուկի, հազիվ նկատելի մեջքով։ Այս դանակից մի փոքր հեռու, հայտնաբերվեց ճիշտ նման դանակ հատվածից (նկ. 8)[4]։

Վերահիշյալ բոլոր զենքերը տափակ են, երկկողմանի սուր եզրերով, պատրաստված են մկնդեղային բրոնզից։

Մետաղագրական անալիզից պարզվում է, որ նրանք ձուլվել են և ապա ենթարկվել սառը կռման, ընդորում սառը կռման ենթարկվել է իրն ամբողջությամբ։ Սակայն իրերն հաջորդական սառեցման (ներքին լարվածությունը հանելու համար) չեն ենթարկվել (նկ. 9)[5]։

---

[1] Անալիզները կատարված են Լենինգրադի հնագիտության ինստիտուտի լաբորատորիայում։

[2] Անալիզները Ի. Ռ. Սելիմխանովի։

[3] О. А. Абибуллаев, К вопросу о древней металлургии Азербайджана, էջ 68։

[4] Է. Խանզադյան, Մետաղաձուլության առաջին փաստերը..., էջ 300։ Նկ. 2 աջից I և II, նկ. 3 վերին շարքը, էջ 305։

[5] Անալիզները կատարվել են Լենինգրադի հնագիտության ինստիտուտի լաբորատորիայում։



Նկ. 7. Դաշույններ, դանակ և տեգի ծայր Էլարից։



Նկ. 8. Դանակ օբսիդիանից. Էլար։

Էլարի (նկ. 7, ձախից II-ը) դաշույնի նմանը հայտնաբերվել է Արարատյան դաշտավայրում (№ 712/1)։

Մեծ նմանություն է նկատվում Էլարի և Կարազ-Արծնի զենքերը համեմատելիս։

Ինչպես վերը տեսանք Կարազ-Արծնի B/ı շերտում 4—4,5 մ խորության մեջ հայտնաբերվել են բրոնզե դաշույն, տեգի ծայր, կախակոթառ կացին և փայլեցրած խեցեղեն[1]։ Կարազ-Արծնի դաշույնը նման է Էլարի № 30 դաշույնին, միայն չափերով մի քիչ մեծ է[2]։ Արտակարգ նման են նաև տեգի ծայրերը[3]։

Քանի որ Կարազ-Արծնի տիպի կախակոթառ կացինները, ինչպես վերը տեսանք, հաջորդում են կոթառով սեպաձև կացիններին (որոնք ժամանակակից են Էլարյան մշակույթին) և թվագրվում են մ.թ.ա III հազարամյակի վերջին հարյուրամյակներով և բացի այդ Կարազ-Արծնի B/ı շերտի խեցեղենն ունի ավելի զարգացած ձևեր, քան Էլարինը, ուստի Էլարյան մշակույթը, դրանց թվում նաև վերոհիշյալ զենքերը նախորդել են Կարազ-Արծնի B/ı շերտին։

[1] **H. Z. Koşay, K. Turfan,** նշվ. աշխ., տե՛ս աղյուսակ վերջում։

[2] Նույն տեղում, էջ 377, 409, նկ. 177։

[3] Նույն տեղում, էջ 377, 409, նկ. 178։

Էլարի զենքերն իրենց զուգահեռներն ունեն նաև Վրաստանում և Հյուսիսային Կովկասում։ Վրաստանում նրանց զուգահեռները կարելի է տեսնել Ամիրանիս-Գորայի դամբարանային նյութերում, հատկապես դաշույններում։ Նրանց տիպային համեմատությունները Էլարի զենքերի հետ ենթադրել են տալիս նրանց մի փոքր ավելի զարգացած լինելը, սակայն Տ. Չուբինիշվիլին ելնելով C14-ի անալիզներից, նրանք թվագրում է մթա III հազարամյակի I կեսով[1]։



Նկ. 9. Էլարի դաշույնի մետաղագրական կազմը։

Էլարի դաշույններին նման են Վրաստանում՝ Սաչխերի շրջանում Նաչերկազևիի[2] և Հյուսիսային Կովկասում՝ Կարաբուդախքենդի դամբարաններից հայտնաբերված դաշույնները[3]։

Էլարի դանակն (№ 2246/35) իր զուգահեռներն ունի Հյուսիսային Կովկասում՝ Կաբարդինո Բալկարիայում, Նալչիկի շրջանում 1928 թ. պեղված «Սադկա» դամբանաբլուրում, որը Ա. Իեսսենը վերագրում է կուբանյան մեծ դամբանաբլուրների մայկոպյան փուլին և թվագրում մթա 2300—1900 թվականներին[4]։

Էլարի անգի ծայրը (№ 2246/64) իր զուգահեռներն ունի ինչպես էշերիի դոլմեններում[5], այնպես էլ Փարավանյան № XI դամբանաբլուրում, որը Բ. Կուֆտինը վերագրում է «Հնագույն բրոնզի» դարաշրջանին և թվագրում մթա III հազարամյակի վերջերով[6]։ Սակայն Փարավանյան դամբանաբլուրի զենքերը և ընդհանրապես Թրիալեթի «Հնագույն բրոնզի», դարաշրջանի դամբանաբլուրային խեցեղենն ունեն ավելի զարգացած ձևեր, քան Էլարինը,

---

[1] **Т. Чубинишвили**, Амиранис-Гора. Тб., 1963, *էջ 73, նկ. 14, 27, 28, 31, էջ 96—97, 99—103։*

[2] **Б. А. Куфтин**, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, *աղ.* XV։

[3] **Р. М. Мунчаев** и **К. Ф. Смирнов**, Археологические памятники близ сел. Карабудахкент, *էջ 3, 5, 7, 12, 13*։

[4] **А. А. Иессен**, Археологические памятники Кабардино-Балкарии, МИА, № 3, 1941. М.—Л., *էջ 17, նկ. 2, նույնի*, К хронологии Больших кубанских курганов, *էջ 163, 193։*

[5] **Б. А. Куфтин**, Материалы к археологии Колхиды, *հատ.* II, *աղ.* XXXII, *նկ. 5։*

[6] *Նույնի*, Археологические раскопки в Триалети, *էջ 101, 167, աղ.* CXV։

Թաղման ձևերն էլ այլ են։ Հետևաբար էլարի դամբարանները նախորդել են Թրիալեթի «հնագույն բրոնզի» դամբանաբլրային թաղումներին։

Ընդհանրապես էլարի զենքերն ունեն կատարելագործված ձևեր և հանդիսանում են մթա III հազարամյակի I կեսի մի շարք դաշույնների նախատիպը, օրինակ՝ Ջանգեզուրի (№ 962/12), Մեղրիի (№ 124/2), և Կարմիր Վանքի (կծկված կմախքով և ռունազարդ խեցեղենով) դամբարաններից[1], ինչպես նաև Կիրովականի դամբանաբլուրից (№ 1899/56) և Թրիալեթի № 15 և 17 դամբարաններում հայտնաբերված ավելի կատարելագործված դաշույնների[2]։

Ինչպես վերը տեսանք, էլարյան մշակույթն իր խեցեղենով ժամանակագրորեն առնչվում է կոթառով սեպաձև կացինների հետ, որի լավագույն ապացույցն է նրա համեմատությունը Գառնիի, Նախիջևանի՝ Քյուլ-Թափայի կացնի կաղապարների և Մալաքլուի սեպաձև կացնի հետ հայտնաբերված խեցեղենի հետ։

Դամբարանային կառուցվածքով, թաղման ձևով և նյութերով, հատկապես խեցեղենով էլարին շատ նման են՝ Ծալկայի շրջանի Բարմաքսիզի խճուղում սալարկղային դամբարանները[3], որոնք ըստ Բ. Կուֆտինի նախորդել են վերը նշված Փարավանյան[4] և ընդհանրապես Թրիալեթի «հնագույն բրոնզի» դարաշրջանի դամբանաբլուրներին, նրա կողմից թվագրվում են մթա III հազարամյակի վերջերով[5]։ Մյուս կողմից՝ էլարի դամբարանային մշակույթն իր թաղման ձևով, խեցեղենով, պարուրաձև ապարանջաններով և սպիտակ պաստայից խողովակաձև ուլունքներով առնչվում է Բ. Կուֆտինի կողմից պեղված Օզնիի մանկական սալարկղային դամբարանների[6] և Կիկեթի Ոչխարի ճանապարհի № 5 դամբարանի նյութերի հետ[7]։ Օզնիի մշակույթը Բ. Կուֆտինի կողմից վերագրվում է «ուշ էնեոլիթին»[8], այսինքն համարվում է նույնպես Թրիալեթի հնագույն բրոնզի դարաշրջանի նախորդող փուլը։

Բացի այդ, համեմատությունները Կարաղ-Արծնի B/I շերտի և Փարավանյան դամբանաբլուրի զենքերի և ընդհանրապես ամբողջ մշակույթի հետ պարզեցին, որ էլարյանը նախորդել է վերջիններիս։ Ուստի, ելնելով վերոհիշյալ փաստերից, էլարի դամբարանային մշակույթը, այդ թվում և վերոհիշյալ դաշույնները, դանակները և տեգի ծայրը կարելի է թվագրել կոթառով սեպաձև կացինների մշակույթի ժամանակաշրջանով, այսինքն մթա XXIV—XXII դդ.։

Դ. ՄԱՆԳԱՂՆԵՐ ԵՎ ԶԱՐԴԵՐ

Բացի վերոհիշյալ զենքերից հայտնաբերվել են նաև **մանգաղներ** և զարդեր՝ **ապարանջաններ, քորոցներ, հերուններ, ուլունքներ** և այլն։

---

1 **А. А. Спицын,** Некоторые Закавказские могильники, ИАК. вып. 29. СПБ., 1908, էջ 4, նկ. 38, 39, 41, 42։

2 **Б. А. Куфтин,** նշվ. աշխ., էջ 145։

3 Նույնի, նշվ. աշխ., էջ 116, նկ. 125, էջ 117։

4 Նույն տեղում, էջ 118։

5 Նույն տեղում, էջ 101։

6 **Б. А. Куфтин,** Дневник. Триалетская археологическая экспедиция, 1948, էջ 21, նյութերը հրատարակված չեն, տե՛ս Վրաստանի պետական թանգարան, ինվ. 248—258։

7 Նույն տեղում, էջ 30, Վրաստանի պետական թանգարան, ինվ. 40—58, 13, 14, 15։ Նյութերին ծանոթանալու համար շնորհակալություն եմ հայտնում Վրաստանի թանգարանի աշխատակիցներին։

8 **Б. А. Куфтин,** Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, Тб., 1948. էջ 26։

Ինչպես II գլխում նշվեց, Գառնիի և Նախիջևանի Քյուլ-Թափայի բրոնզե մանգաղները հայտնաբերվել են համանման խեցեղենի հետ, ժամանակակից են և կարող են թվագրվել մթա III հազարամյակի II կեսով։ Գառնիի մանգաղը (նկ. 4) ձուլելուց հետո ենթարկվել է սառը կռման, որի հետքերն ակնառու են։

Երկու ապարանջաններ, որոնք հայտնաբերվել են Էլարի № 11 դամբարանում, պատրաստված են տափակեցրած մետաղե ժապավենից և ունեն պարուրաձև փաթաթվածք (նկ. 10 № 2246/39, 40)[1]։ Էլարի դամբարանային մյուս նյութերի հետ ապարանջանները ևս թվագրվում են մթա III հազարամյակի II կեսով։ Նման ապարանջաններ հայտնաբերվել են նաև Վրաստանում՝ Օզնիում 1948 թ., № 1 մանկական դամբարանում[2], Կվացխելեբիի[3] և Սաչխերիի դամբարաններում[4] և այլն։

Մեկ այլ ապարանջանի կտոր հայտնաբերվել է Շենգավիթի քառանկյուն զետեղարաններից մեկում՝ 2 մ խորությունից[5] և հավանաբար վերաբերում է մթա III հազարամյակի I կեսին։



Նկ. 10. Մետաղե իրեր Շենգավիթից և բրոնզե ապարանջան Էլարից։

Ե. Բայբուրթյանը նշում է, որ Շենգավիթի բոլոր շերտերին էլ բնորոշ են բրոնզե իրեր։ Հայտնաբերված որոշ իրեր՝ քառակող հերուններ (1330/89), գնդաձև գլխիկով քորոցներ (1330/91), կարթեր, պտուտակաձև փորվածքով ձողիկներ, ուլունքներ (նկ. 10)[6], հայտնի չէ, թե ո՞ր շերտից են, սակայն անշուշտ նրանց մի մասը վերաբերվում է մթա III հազարամյակի I, իսկ մյուս մասը II կեսին։

Քորոցներ, ուլունքներ և հերուններ բրոնզից հայտնաբերվել են նաև Նախիջևանի Քյուլ-Թափայում[7]։

Այսպիսով Հայկական լեռնաշխարհում մետաղագործությունը մթա III հազարամյակում հենց սկզբից թևակոխում է զարգացման մի նոր փուլ, որը գիտության մեջ ընդունված է անվանել «գիտակցված» մետաղագործություն։ Զարգացման այս նոր փուլը նշանավորվում է նախ և առաջ մետաղաձուլությամբ, որի լավագույն ապացույցներ են ձուլման կաղապարների և կթխանների հայտնագործությունները, ինչպես նաև որոշ իրերի մետաղագրական

---

1 Է. Խանզադյան, *Մետաղաձուլության առաջին փաստերը*, ..., էջ 302, նկ. 3, ներքևի շարք։

2 Նյութերը հրատարակված չեն, տե՛ս Վրաստանի պետական թանգարան, ինվ. 255—258։

3 **А. И. Джавахишвили, Л. Глонти**, նշվ. աշխ., աղ. XXXVI։

4 **О. Джапаридзе**, նշվ. աշխ., էջ 265։

5 Ե. Բայբուրդյան, *Ձեռագիր աշխատություն*, էջ 38։

6 Նույնի, *Աշխատանքի գործիքները հին Հայաստանում*, էջ 202, 223, նկ. 63—69։

7 **О. Абибуллаев**, К вопросу о древней металлургии Азербайджана, էջ 67, նկ. 1.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԹԱ. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՀՆԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԵ ԻՐԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ-ՍՊԵԿՏՐԱԼ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

№№	Իրի անունը	Հայտնաբերման վայրը	Ինվենտար համարը	Պարունակությունը տոկոսներով																					
				Cu	Sn	Pb	Zn	Bi	Sb	As	Ag	Au	Ni	Co	Fe	Mn	Si	Ca	Mg	Al	K	Na	Ti	Sn	Ge
1	Կացավոր կացին	Ալավերդի	759/6	96	0.03	0.64	+	—	—	3	+	—	0.01	—	0.01	+	+	+	+	+	—		—	—	—
2	Կախակոթառ կացին	Արարատյան դաշտավայր	751	96	+	0.01	0.02	—	0.05	3	+	—	+	—	0.1	+	+	+	+	+			—	—	—
3	Նիզակի ծայր	Կիրովական	1236/82	90	7	1.5	0.05	+	0.2	0.3	+	—	0.02	—	0.04	+	+	+	+	+			—	—	—
4	Մանգաղ	Գառնի	1964/35	94	+	+	+	—	0.02	5	+	—	0.01	—	0.02	+	+	+	+	+			—	—	—
5	Կեռիկ	Գառնի	25	հիմն.	0.02	0.02	—	—	0.15	1.2	0.022	—	0.02	—	0.7	—									
6	Բառակող հերուն	Գառնի	27	հիմն.	0.05	14.7	—	0.004	—	5	0.11	—	0.005	—	0.07	—	—								
7	Խխունջազարդ օղ	Գառնի	24	քիչ	—	հիմն.	—	0.01	—	—	0.05	—	—	—	0.002	—									
8	Մետաղի մնացորդ, կթխաններից	Գառնի		շատ	0.02	0.01	—	—	0.5	1.5	0.01	—	0.007	—	շատ	—	—								
9	Դանակ	Էլար	2246/35	95	0.01	0.01	—	+	—	4	+	+	0.1	—	—	—	+	+	+	+					
10	Դաշույն	Էլար	2246/73	98	+	+	—	—	0.01	1.5	+	+	0.15	—	—	—	+	+	+	+					
11	Դաշույն	Էլար	2246/30	96	+	+	0.1	—	—	3	+	0.01	+	—	—	—	+	+	+	+					
12	Տեգի ծայր	Էլար	2246/64	96	+	+	0.02	—	+	3	+	0.01	0.07	—	—	—	+	+	+	+					
13	Ապարանջան	Էլար	2246/39	98	+	0.01	—	—	0.03	1.5	+	0.01	+	—	—	—	+	+	+	+					
14	Ապարանջան	Էլար	2246/40	96	+	0.1	—	—	0.02	3	+	0.01	0.08	—	—	—	+	+	+	+					
15	Դաշույն	Զանգեզուր	962/12	95	0.2	0.4	0.6	+	0.2	3	+	—	0.08	—	0.4	+	+	+	+	+					
16	Դաշույն	Մեղրի	124/2	96	0.9	0.3	—	+	0.3	2	+	—	0.1	—	0.01	+	+	+	+	+					

անալիզը, որից պարզվում է, որ նրանք նախ ձուլվել են և ապա ենթարկվել սառը կռման։ Ի տարբերություն մետաղամշակման նախնական փուլի, զարգացման այս նոր շրջանին բնորոշ է մետաղե իրերի բազմազանություն, մկնդեղային բրոնզի լայն կիրառում, որի պատճառով այդ մշակույթը, որը մինչ այդ կրում էր «Քուռ-արաքսյան էնեոլիթ» անունը, վերանվանվում է վաղ բրոնզեդարյան[1]։

Դարավերջում երևան են գալիս նաև նոր տիպի ձուլվածքներ՝ ստացված պղնձի և կապարի, մկնդեղի, կապարի և պղնձի միացությունից, մաքուր կապարից և վերջապես անագի և կապարի միացությունից։

Վերոհիշյալ բրոնզե իրերի զուգահեռների միջոցով պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները մետաղագործության զարգացման այս նոր փուլում փոխանակային սերտ կապերի մեջ են եղել Հին Արևելքի մի շարք երկրների ինչպես և Կովկասի հետ, ազդվել են նրանցից և փոխազդել նրանց վրա։

2. ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթն աչքի է ընկնում հատկապես իր ինքնատիպ և հարուստ խեցեղենով, որը տարածման բավական լայն շառավիղ է ունեցել. ընդգրկել է ոչ միայն Սովետական, այլ ընդհանրապես պատմական Հայաստանը, Վրաստանի մի մասը։ Նրա տարրերից ներթափանցել են Հյուսիսային Կովկաս, իսկ հարավում՝ Սիրիա, Պաղեստին և Իրանական Ադրբեջան։

Այդ մշակույթի յուրօրինակությունն ու ինքնատիպությունը երևան է գալիս հատկապես խեցեղենի առանձնահատկություններով, որով և այն հիմնականում տարբերվում է հին արևելյան, կովկասյան համաժամանակյա այլ մշակույթներից։

Վերջին տասնամյակում հայտնաբերված բազմաթիվ նոր հուշարձաններից ձեռք բերված և տարիների ընթացքում թանգարաններում կուտակված նյութերը, ինչպես և այդ մշակույթին նվիրված նոր հրատարակությունները հնարավորություն են ստեղծում այդ խեցեղենի ավելի լայնորեն և բազմակողմանի ուսումնասիրության։

Խեցեղենի համեմատությունների միջոցով հնարավոր է դառնում ի հայտ բերել լոկալ խմբեր և հետևելով նրանց զարգացմանը ժամանակագրական որոշ հաջորդականություն սահմանել, որը կճշտվի բազմաշերտ հուշարձանների և նրանց խեցեղենի ձևերի ու զարդանախշերի շերտագրական համեմատական աղյուսակները կազմելուց հետո։

Խեցեղենը ծառայել է հնագույն մարդու տնտեսության տարբեր ճյուղերում, ինչպես երկրագործական և անասնապահական մթերքների, այնպես էլ օժանդակ որոշ տնտեսությունների՝ ձկնորսության, որսորդության և հավաքչության ձեռք բերված սննդամթերքների մշակմանն ու պահպանմանը։ Դրանով է բացատրվում կավամանների ձևերի և չափերի բազմազանությունը։

---

[1] **А. А. Иессен**, Кавказ и Древний Восток в IV и III тысячелетиях до н. э., էջ 3—14։

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզեդարյան խեցեղենն ըստ ձևի և գործածության կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի. կարասներ, թաղարներ, գավաթներ, կճուճներ. բաժակներ, թասեր. բրեզաններ, գավեր, տապակարաններ-սաջեր, ձագարներ և քամիչներ, մինիատյուր կավամաններ, օջախներ, օջախների հենակներ—պատվանդաններ։

Նկ. 11. Կարաս Շենգավիթից և թաղար Ցրանկանոցից։



Նկ. 12. Գավաթներ Շրեշ-բլուրից և Արծն-Կարայից։

Կարասներ *կամ կարասների բեկորներ հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան համարյա բոլոր բնակատեղիներում (նկ. 11 վերևինը)։*

Ինչպես հնագիտական հետազոտություններն են ապացուցում, կարասները գերազանցապես օգտագործվել են հացահատիկներ պահելու համար։ Սակայն բացառված չէ նրանցում նաև այլ մթերքների պաշարներ պահելը։

Թաղարները *միմյանցից զանազանվում են զարդանախշումով և կառուցվածքային որոշ նրբին տարբերություններ ունեն։ Մի մասի անցումներն ուժեղ են շեշտված, որի պատճառով ստացվում է եռամասնություն՝ վիզ, փոր և ներքնամաս (նկ. 11 ներքևինը և աղ. X-ի վերևինը, Ցրանկանոց՝ № 588, 589, Շրեշ-բլուր և Քյուլ-թափա՝ № 607/1, 1227/2, Շենգավիթ՝ № 1330/35, 133, 237, 239, 240, 618/190, Կառնուտ՝ № 1478/3, 7, 8, 12բ, Քոսի-ճոթեր՝ № 2127/29, Գառնի՝ № 2235/66, 136, 140), մյուս մասն ունի սահուն անցում-*

ներ (աղ. X մեջտեղի շարք, և աղ. XXIV-ի վերին երեք շարքերը, Էլար՝ № 127/472, 166, № 2245/30, 32, Գառնի՝ № 1964/11, № 1965/8, Ակունք՝ № 2258/632, Մալաքլու[1] և Արճեշ)[2]: Որոշ թաղարների ուռուցիկ փորն ավարտվում է լայնագիր հատակով (Քոսի-Ճոթեր՝ № 2127/54, զուգահեռները Գեոյ-Թեփեի «K» շերտի խեցեղենում[3], աղ. X, ներքևի շարք):

Թաղարները նույնպես կարող էին ծառայել պաշարներ պահելու համար, իսկ Քոսի-Ճոթերի և Գառնիի խոհանոցային թաղարներում հավանաբար կերակուր են եփել, ջուր և կաթ տաքացրել:

Գավաթներ, միջին մեծության և փոքր, նրբախեցի, մեծ մասամբ սև փայլեցրած, երբեմն վարդագույն, մոխրագույն կամ դեղնագույն մակերեսով: Ձևով կրկնում են նկարագրված թաղարները, միայն ծավալով փոքր են: Բոլորը կատարված են մեծ ճաշակով և բարձրարվեստ են: Հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի համարյա բոլոր հնավայրերում, արտակարգ լայն տարածում ունեն, հյուսիսում հասել են մինչև Թրիալեթի[4], հարավում՝ Գեոյ-Թեփե («K» շերտ)[5] և Կիրբեթ-Կերակ[6] (նկ. 12—14, աղ. XIX. XXI, XXII):



Նկ. 13. Գավաթներ Մոխրաբլուրից:

Կճուճներ ուղղահայաց խողովակաձև վզով, ձգված ուռուցիկ իրանով և աղեղնաձև դուրս ճկված կանթով (նկ. 15, աղ. XXV-ի II սյունակ, նախավերջին և վերջին կճուճները): Հայտնաբերվել են Շամուղում (2074), Արագածում[7], Էլարում (№ 127/103), Քաղսիում (№ 1900/25), Արմավիրում[8], Արճեշում[9],

[1] **Б. А. Куфтин.** Урартский «колумбарий»..., էջ 74, նկ. 34:

[2] **C. A. Burney.** Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age. էջ 185, նկ. 88—91, 101, 103:

[3] **Burton—Brown,** նշվ. աշխ., նկ. $12/_{538}$ և աղ. VII_{538}:

[4] **Б. А. Куфтин,** Археологические раскопки в Триалети. էջ 116—117, նկ. 126: Նույնի, К проблеме энеолита внутренней Картлии и Юго-Осетии. էջ 74, նկ. 72:

[5] **Burton—Brown,** նշվ. աշխ., աղ. III, № 958—959 և աղ. IV № 449: **W. Lamb.** The Culture of North East Anatolia and its Neighbours աղ. II նկ. 1:

[6] **Sincleir Hood,** Excavations at Tabara el Akrad 1948—1949. Anatolian Studies vol. I, 1951, աղ. XII նկ. 1:

[7] **А. А. Мартиросян,** Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 44, նկ. 12:

[8] **Б. А. Куфтин,** Урартский «колумбарий» ..., աղ. XXIII, նկ. 1, 2:

[9] **Ch. Burney,** նշվ. աշխ., էջ 185, նկ. 95—97:

Նախիջևանի Քյուլ-Թափայի II շերտում[1], Զագլիկում[2]: Այս կճուճները հարմար են հեղուկի համար:

Նկ. 14. Դավաթ Էլարից:

Տարատեսակ բաժակներ (աղ. XI), թասեր, քրեղաններ (աղ. XII), գավեր, տապակարաններ-սաջեր (աղ. XIII), ձագարներ (նկ. 16-ի վերևինը), քամիչներ, մինիատյուր կավամաններ (նկ. 16 ներքևինը և աղ. XIV միջին շարք) հայտնաբերվել են համարյա բոլոր հնավայրերում:

Բացի վերոհիշյալ հիմնական խմբերից Հայաստանի վաղ բրոնզեդարյան խեցեղենին բնորոշ են նաև գլանաձև իրանով և ծորակով կավամաններ, բազմաթիվ զարդարուն ու անզարդ կավամանների մասեր, որոնց ձևը վերականգ-



Նկ. 15. Կճուճ Շամլուղից:

[1] О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, Баку, 1939 (Ադրբեջ. լեզվով) աղ. 27, նկ. 1, 2.

[2] Б. А. Куфтин, Նշվ. աշխ., աղ. XXII, նկ. 4:

նոցը դժվար է: Կան մեծ կավամաններ՝ ուսերին կլոր անցք (Գառնի՝ № 2234/74, Էլար՝ № 127/10): Շատ հավանական է, որ նրանք խնոցու նախատիպն են: Նմանները հայտնաբերվել են Բաբա-դերվիշում[1], Վրաստանում՝ Օզնիի բնակատեղիում[2] և Ծալկայի շրջանի Աբիլարի ամրոցում[3]:

Նկարագրված խեցեղենի համար բնորոշ է կանթերի բազմազանությունը: Զափազանց յուրահատուկ են նաև սկավառակաձև կափարիչները, որոնք հայտնաբերվում են համարյա բոլոր հուշարձաններում (նկ. 19):



Նկ. 16. Ջագար և կճուճ Մաշտոցի բլուրից:

Կլոր օջախներ հայտնաբերվել են Շենգավիթի յուրաքանչյուր կլոր կացարանի կենտրոնում, հատակից մի փոքր բարձր և բնորոշ են նրա բոլոր շերտերի համար, այսինքն գտնվել են նրա տարբեր հորիզոններից (աղ. VII, վերևից II շարքի I—II)[4]: Օջախների և՛ հորիզոնական շուրթերը, և՛ ելուստների մակերեսները զարդարված են ռելեֆ զարդանախշերով: Նման օջախի մասեր հայտնաբերվել են նաև Քոսի-Հոթերում: Շենգավիթում հայտնաբերված կլոր օջախների մոդելները հավաստում են նրանց նաև պաշտամունքային նշանակությունը (№ 1330/273):

Կլոր օջախների այլ տեսակներ հայտնաբերվել են Կարազ-Արծնում[5], Վրաստանում՝ Օզնիի բնակատեղիում[6], Կվացխելեբիում[7] և Խիզանաանտ-Գորայում[8], Կուլբակեբիում, Զգուդերիում, Կուլխամիում[9]:

Օջախի հենակների և պատվանդանների բազմաթիվ և բազմապիսի օրինակներ են հայտնաբերվել, որոնց ըստ ձևի կարելի է բաժանել մի շարք ենթախմբերի:

1. Շրջանակաձև, տափակ մասով հենակներ (Շենգավիթ՝ 1330/180, Ղարա-Թափա՝ 1461, Մոխրաբլուր՝ № 178), որոնք զուգահեռներ դեռևս չունեն (նկ. 17, աղ. VII վերևից II շարք, ձախից III և աղ. XV):

---

1 Г. И. Исмайлов, Автореферат, էջ 17:

2 Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе. էջ 39, աղ. X:

3 Նույն տեղում:

4 Ե. Բայբուրդյան, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում, էջ 203: Նույնի, Культовый очаг из раскопок Шенгавитского поселения в 1936—37 гг. Вестник древней истории. 1938, № 4 (5), էջ 257:

5 H. Koşay, նշվ. աշխ., էջ 397, նկ. 172, 173:

6 Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, էջ 286:

7 А. Джавахишвили, Л. Глонти, նշվ. աշխ., աղ. XII_2, XVII_2, 3:

8 Р. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, էջ 41:

9 О. Джапаридзе, նշվ. աշխ., էջ 74:

2. Պայտաձև հենակներ հայտնաբերվում են բոլոր բնակատեղիներում, ունեն բազմաթիվ տարատեսակներ (նկ. 18, աղ. XVI, XVII)։ Վրաստանում (Օզնիի բնակատեղիում[1], Զգուդրիս Գվերդայում[2], Ամիրանիս-Գորայում[3]), Հյուսիսային Օսեթիայում[4], ինչպես և Հյուսիսային Կովկասում (Լուգովոյի բնակատեղիում)[5] սակավ օրինակներով են հայտնի և այն բազմազանությունը, առատությունը և տարատեսակները չունեն, ինչ-որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվածները։

Պայտաձև հենակները հայտնաբերվել են Փոքր Ասիայում՝ Ալիշարի բլուրում, թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակի վերջով և II հազարամյակի

Նկ. 17. Թռչնազարդ հենակի մի մաս Շենգավիթից։



Օջախի շրջանաձև հենակ Ղարա-Թափայից։

սկզբով[6]։ Մեր հենակներին արտաքուստ նման են հատկապես Հյուսիսային Սիրիայում և Պաղեստինում «Քուռ-արաքսյան» տիպի խեցեղենի հետ հայտնաբերված Տաբարա-էլ-Ակրադի և Բեթ-Շանի մարզակերպ պայտաձև հենակները[7]։ Բ. Կուֆտինը Անդրկովկասում հայտնաբերված պայտաձև հենակների զուգահեռները տեսնում է Կրետե-միքենյան քաղաքակրթության աստվածուհու «եղջերավոր զոհարաններում»[8] և գտնում, որ այդ հենակները պետք է ավելի շուտ կապված լինեն կին աստվածուհու պաշտամունքի հետ[9]։

3. Եղջերավոր հենակները հիմնականում պատկերում են եզան ոճավորված ֆիգուրա, ունեն որոշ տարբերություններ ա) չորս հաստ ոտքերով և գլխի վեր երկու կողմի վրա տարածվող եղջյուրներով (Շրեշ-բլուր՝ 779/18, Քյուլ-Թափա՝ 1228, աղ. VII, ներքևից II շարք, ձախից I), բ) առանց ոտքերի, տափակ հատակով և քառանիստ բարձր իրանով (Շրեշ-բլուր և Քյուլ-Թափա՝ 766/156, 779/15, աղ. VII, ներքևից II շարք, ձախից II-ը), գ) տափակ հատակով, սակայն ձվաձև, մասամբ երկարավուն իրանով (Շրեշ-բլուր և Քյուլ-Թա-

[1] Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, էջ 36։

[2] В. П. Любин, Археологическая разведка в окрестностях города Сталинири, էջ 15, նկ. 18, էջ 21։ О. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, էջ 83։

[3] Т. Н. Чубинишвили, Амиранис-Гора, էջ 29, նկ. 62, էջ 95։

[4] Р. М. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, էջ 125։

[5] Նույն տեղում, էջ 126։

[6] S. Hood, նշվ. աշխ., էջ 139։

[7] Նույն տեղում, էջ 117, աղ. XI A, B, նկ. 9, էջ 139։

[8] Б. А. Куфтин, К проблеме энеолита внутренней Картлии и Юго-Осетии, էջ 70։

[9] Նույնի, Урартский „колумбарий"..., էջ 81։

փա՝ 766/155, 157, 158, Զվարթնոց՝ գտնվում է տեղի թանգարանում՝ 145, աղ. VII, ներքևում, ձախից III)։ Անշուշտ նրանք կապված են եղան պաշտամունքի հետ, որը մթա III հազարամյակում լայն տարածում էր գտել Հայկական լեռնաշխարհում և Հին Արևելքում ընդհանրապես։

Նկարագրված եղջերավոր հենակներն ունեն տեղային հատկանիշներ և Հայկական լեռնաշխարհից դուրս դեռևս նմանները չեն հայտնաբերվել, սակայն նրանից այլ տարատեսակներ հայտնի են։



Նկ. 18. Պայտաձև հենակ Տիգնիսից։

4. Բրգաձև կամ աշտարակաձև[1] հենակներ հայտնաբերվել են Շրեշ-բլուրում (№ 779/15), Շենգավիթում (№ 1330/233), Գառնիում (աղ. VII ներքևից II շարք, աջից II)։

5. Հենակներ, որոնք ավելի շուտ կավամանի տպավորություն են թողնում, սակայն իրենց կառուցվածքով հարմար չեն օգտագործվելու որպես ճաշի կամ հեղուկի աման։ Էլարի դամբարաններում նրանք գերազանցապես դրված են կճուճների տակ և անշուշտ պատվանդան-հենակի դեր են կատարել (նկ. 19-ի ներքևինը, աղ. XVIII, վերևում և աղ. XXV-ի վերջին սյունակը)։ Բնորոշ են Շրեշ-բլուրին և Քյուլ-թափային, Քոսի-ճոթերին (№ 603, 593, աղ. XXV, աջ կողմից վերևի 2-ը)։ Վերոհիշյալ հենակներն ավելի կատարելագործված տեսք են ստանում Էլարում (№ 2245/3, 31, 35, № 2246/33, 37, 53, 114, № 1813/38), Խորում-բուլաղում (№ 197), Բարա-գեվրիշում (աղ. XXV աջից, վերևից III, IV)։ Նման հենակներ բնորոշ են միայն դեռևս Հայկական լեռնաշխարհին։

6. Եռոտանի պատվանդանները (Շրեշ-բլուր և Քյուլ-թափա՝ № 605, 607, 766/113, 117, Շենգավիթ՝ № 1618/31, 1330/191, Գառնի՝ № 2235/105, Դվին՝ 1917/339, աղ. XVIII) ևս բնորոշ են միայն Հայկական լեռնաշխարհին և սերտ

[1] Б. А. Куфтин, Урартский «колумбарий» ..., էջ 119։

ոչ մի տեղ դեռևս չեն հայտնաբերվել։ Նրանց վրա կամ կավամաններ են դրվել, կամ էլ պաշտամունքային նշանակություն ունեցող որևէ իր, արձանիկ և այլն։

Նկ. 19. Թաղար կափարիչով դրված բարձրադիր շուրթերով հենակի վրա. Էլար։

Այսպիսով Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարաշրջանի հուշարձաններից հայտնաբերված օջախները և կրակի ու օջախի հետ կապված իրերը՝ հենակներն ու պատվանդանները և այլն, հավաստելով նրանց առօրյա գործածական նշանակությունը, անկասկած են դարձնում նաև պաշտամունքային նշանակությունը և միաժամանակ հնարավորություն տալիս գաղափար կազմելու տվյալ ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի բնիկների հավատալիքների արվեստի վերաբերյալ։

Հայտնաբերված նյութերով պարզվում է, որ պաշտվել են ինչպես մարդը (օջախի պայտաձև հենակների քանդակներ, կանացի և տղամարդու արձանիկներ), այնպես էլ կենդանիները (դարձյալ օջախի հենակներ, եզան, ոչխարի, ձիու, շան կավե և քարե արձանիկներ), թռչունները և բնությունն ընդհանրապես։

Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի մշակույթին բնորոշ են նաև գլանաձև իրանով և երկու վերջավորություններում լայնացող շրջանաձև մակերեսներով կավից պատրաստված իրեր, որոնց վերին թասանման գոգավորվող մակերեսը մրից սևացած է։ Նրանցում հավանաբար բուսական յուղ են այրել բնակարանը լուսավորելու, գուցե և պաշտամունքային արարողությունների ժամանակ։ Ունեն բավականին լայն տարածում։ Հայտնաբերվել են Շենգավիթում (№ 1618/150), Գառնիում՝ (№ 1964/296 և 2176/12), Շրեշ-բլուրում և Քյուլ-Թափայում՝ (№ 1227/19 և № 766/148, 149, աղ. VII, ներքևից II շարք, աջից III)։ Վրաստանում՝ Օզնիում[1], Կիկեթում[2], Հյուսիսային Օսեթիայում՝ Տաու-Լեգետ քարանձավում[3], Դաղստանի Մեգեբինյան և Վերխնեգունիբեկյան բնակատեղիներում[4], Հյուսիսային Կովկասում՝ Ճուգովայի բնակատեղիում[5]։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում մթա III հազարամյակում, ինչպես վերը տեսանք, բարձր վարպետության է հասնում հատկապես խեցեգործությունը։ Հնագույն բրուտները կավից պատրաստել են տնտեսական բազ-

1 О. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, էջ 82, նկ. 17_1։

2 Նույն տեղում, նկ. 17_2։

3 Р. М. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, էջ 124, 125։

4 Նույն տեղում։

5 Е. И. Крупнов, Прикаспийская археологическая экспедиция, էջ 99, նկ. 40_2։

ձապիսի և պաշտամունքային նշանակություն ունեցող առարկաներ, տարբեր ձևերի և չափերի կավամաններ՝ սկսած մեծ կարասներից, վերջացրած մինիատյուր խաղալիքներով, կափարիչներ, կլոր մասսիվ թրծած օջախներ և օջախների տարատեսակ հենակներ, պատվանդաններ, ձուլելու կաղապարներ, սայլի մոդելների անիվներ, իլիկի գլուխներ, խաղալիքներ, պաշտամունքային առարկաներ՝ մարդու և կենդանիների արձանիկներ և այլն։

Բ. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐԸ

Ամբողջ խեցեղենը պատրաստված է ձեռքով։ Բրուտները օգտագործել են տեղական կավը և նրան ավելի կայունություն, ամրություն տալու համար խառնել են տարբեր նյութեր, օրինակ՝ խճավազ, կամ ուղղակի գետավազ, երբեմն նաև մանր ջարդած խեցի։ Հանդիպում են խեցու բեկորներ, որոնց կտրվածքում երևում են այրված խոտի կամ հարդի հետքեր։

Խեցեղենի էական հատկանիշներից մեկը դա կառուցման եռմասանիության սիստեմն է, այսինքն կավամանը պատրաստվում է երեք մասերի միացությունից, ստորին՝ դեպի ցած նեղացող ներքնամասի, միջին՝ տակառաձև կամ ուռուցիկ մասի և վերին գլանաձև վզի։ Այդ իսկ պատճառով էլ կավամանի մի մասից անցումը դեպի մյուսը շեշտված է։ Ինչպես վերը տեսանք, ստորին մասը ուռուցիկ փորի հետ միանում է հորիզոնական սուր եզրով, իսկ վիզը փորի հետ՝ հորիզոնական լայն կամ նեղ գոտիով։ Հայտնաբերված մի շարք խեցիներ, ոչ թե սովորական կոտրված բեկորներ են, այլ անջատված են միացման տեղերից և նրանց վրա շատ լավ երևում են մատերով սեղմելու հետքերը (№ 2127/1, 2, 5, 7, 31)։ Եռմասանիությունը բնորոշ է խեցեղենի բոլոր ձևերին՝ սկսած մեծ կարասներից, վերջացրած խաղալիքի փոքրիկ կավամաններով։ Զարգացման հաջորդ փուլում նրանք գերազանցապես պատրաստվում են կավե գլաններից ստացված ժապավենների պարուրաձև միացությունից։ Կանթերը պատրաստվում են առանձին և ապա կպցվում կավամաններին։

Խեցեղենի մի մասին բնորոշ է բազմաշերտություն. միջին մասը մոխրագույն, դրսի կողմինը սև, ներսինը՝ վարդագույն։ Ըստ Բ. Կուֆտինի, այն կարող էր ստացվել երկու եղանակով. կամ կավե կմախքի վրա դրսից և ներսից թաց ու յուղոտ կավի շերտեր քսելու եղանակով, և ապա թրծման եղանակով, որի դեպքում կրակի վերականգնող ազդեցությանը ենթարկվում է կավամանը միայն դրսից, իսկ ներսի մասը ոչ, այդ պատճառով էլ աստառը մնում է բաց գույնի և ստացվում է «վարդագույն աստառով խեցեղեն»[1]։

Խեցեղենի մեծամասնությունը արտաքինից պատած է սև, երբեմն վարդագույն, մոխրագույն, նարնջագույն, սակավ շագանակագույն անգոբով և փայլեցրած է։ Անգոբն ստացվել է մեծ մասամբ արդեն ամրացված, չորացած կավամանի վրա յուղոտ, գուցե ներկախառն նուրբ կավի մասսա քսելով, որը թրծումից հետո առաջացնում է հարթ և նուրբ, մի փոքր ճաքճքված մակերես։ Դժվար է ասել, թե այդպիսի արտակարգ, երբեմն հայելանման արծաթափայլը ի՞նչ եղանակով է ստացվել։ Արդյոք հենց ներկն է իր մեջ այդ փայլը պարունակել, թե ներկելուց հետո որևէ փայլ են քսել, կամ թե տեխնիկական այլ պրոցեսի հետ կապված երևույթ է։ Այդ մասին գրականության մեջ կան տար-

[1] Б. А. Куфтин, К вопросу о ранних стадиях бронзовой культуры на территории Грузии, էջ 13։ Նույնի, Следы поселений, относящихся к концу бронзы и ее началу (энеолиту) в Нижнем Гоми, էջ 142.

բեր կարծիքներ: Կատարված որոշ փորձեր ցույց են տվել, որ թրծումից առաջ փայլեցրած խեցեղենը, թրծումից հետո իր փայլը լրիվ չի պահպանում, խամրում է: Ենթադրվում է, որ խեցեղենը լրացուցիչ փայլեցման պետք է ենթարկվեր թրծումից հետո[1]:

Կավամանների աստառը ներկված է տարբեր գույներով՝ շագանակագույն, մոխրագույն, մարմնագույն, վարդագույն, դեղին, սև և անգամ մանուշակագույն: Ներսից կավամանների շուրթերը լայն ժապավենով նույնպես փայլեցվում են:

Խեցեղենի հարդարելուն, կոկելուն են ծառայել քարե կոկիչները, որոնցից հայտնաբերվում են համարյա բոլոր վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում և մեծ քանակությամբ:

Ըստ որակի հայտնաբերված ամբողջ խեցեղենը կարելի է բաժանել երկու խմբի՝ բարձրարվեստ և հասարակ:

Հասարակ խեցեղենը մեծ մասամբ խոհանոցային է, մրից սևացած հետքերով, անզարդ, անփայլ մակերեսով: Պատրաստված է խոշոր ավազախառն, վատ հունցած և մշակված կավից. ունի ոչ համաչափ թրծում: Կրակի ուժեղ ազդեցությունից շատ քայքայվում և փշրվում է: Նման կավից են պատրաստված նաև օջախները և օջախի հենակները: Այս խեցեղենը արտաքինից պատած է դեղին կամ վարդագույն կավի նուրբ շերտով:

Բարձրարվեստ խեցեղենը պատրաստված է լավ հունցած, մշակված, բարձրորակ կավից և աչքի է ընկնում իր արտակարգ թրծումով: Ունի կոկած, հարթեցրած մակերես, որը գերազանցապես զարդանախշված է: Առանց բացառության բոլորի շուրթերը նուրբ են և եզերված անկյունային նեղ ժապավենով: Մեծամասնությանը բնորոշ է փոքրիկ ներճկված հատակ: Խեցեղենի այս խումբն աչքի է ընկնում մասերի համաչափությամբ, սիմետրիայով և զարդանախշերի կատարման բարձր ճաշակով:

Զարդարուն խեցեղենի բնորոշ հատկանիշները հետևյալներն են.

1. Զարդանախշված են խորը լայնակոս, ռելեֆ, ռելեֆ-ներճկված, ներճկված և գծային զարդանախշերով, որոնք կատարվել են դեռևս չթրծած, թաց կավի վրա սեղմելու և փորագրելու եղանակով:

2. Ռելեֆ, ռելեֆ-ներճկված և ներճկված զարդանախշերը բացառապես կատարված են սեղմելու եղանակով, իսկ գծայինը, և սեղմելու, և փորելու եղանակով:

3. Կավամանների ուսուցիկ փորը ոչ թե ամբողջությամբ է զարդանախշված, այլ միայն մեկ երեսից:

4. Գծային զարդանախշերը իրենց բնույթով երկրաչափական են: Նրանց սիրված մոտիվները եռանկյունիներն են (տարբեր դասավորությամբ, որոնք ամբողջությամբ կամ կեսից գծածածկ են), մեանդրները (որոնք շատ հաճախ զուգորդվում են եռանկյունիներով): Հանդիպում են նաև ցանցապատ կամ զիգզագ ժապավեններ և շեղանկյունիներ, գծածածկ, սեպաձև և կետածածկ անկյուններ:

5. Խորը լայնակոս զարդանախշերի սիրված մոտիվներն են պարույրները, համակենտրոն շրջանները և նրանցով կազմված կոմպոզիցիաները, ինչպես նաև բուսական մոտիվները:

6. Ռելեֆ-ներճկված զարդանախշերի հիմքը կազմում են պարույրներով և բլիթածածկ անկյուններով կազմված բարդ կոմպոզիցիաները:

[1] Նույն տեղում, էջ 142:

7. Ներճկված զարդանախշերը հիմնականում արտահայտվում են շրջանաձև կամ ձվաձև փոսիկներով և նրանց հետ երբեմն զուգորդվող թեք ակոսիկներով կամ «բեզիկներով»:

8. Բարձրաքանդակ զարդանախշերով խեցեղենը թվով քիչ է, բաղկացած է առանձին բազմազալար պարույրներից, քառանկյունիների և ալիքաձև ժապավենների զուգորդությունից:

9. Զարդանախշերում գերիշխողը պարույրն է, որը հանդես է գալիս ինչպես մեկուսի, այնպես էլ տարբեր համադրություններով: Հանդիպում են ակնոցաձև պարույրներ տարբեր միացություններով՝ նետասլաքի ձևի՝ բշիջածածկ, կամարաձև միացությամբ և այլն: Հանդիպում են պարույրներ համադրված քառանկյունաձև և եռանկյունաձև ֆիգուրների հետ:

10. Բնորոշ են նաև թռչնաձև զարդանախշեր:

Օրնամենտալ որոշ մոտիվներ անշուշտ իրենց հիմքում պիկտոգրաֆիկ պատկերումներ են, սակայն նրանց վերծանությունը առայժմ դժվար է:

Ինչպես տեսանք, այս տերիտորիայում ուսումնասիրվող դարաշրջանում ի հայտ է գալիս իր հիմքում միասնական, նյութական մի մշակույթ, որի միասնությունը հստակորեն նշվում է նրա համար բնորոշ խեցեղենով:

Խեցեղենի նմանությունները երևան են գալիս ոչ միայն կավի բաղադրության, թրծման եղանակի, մակերեսի մշակման առանձնահատկությունների, կատարման եղանակի միջոցով, այլև խեցեղենի ձևերով, զարդանախշերի միասնության և կատարման միջոցներով:

Չնայած վերոհիշյալ ընդհանրություններին, խեցեղենի մանրամասն ուսումնասիրության միջոցով ի հայտ են գալիս որոշ տեղային, լոկալ առանձնահատկություններ: Միաժամանակ ուրվագծվում է նրա զարգացման էվոլյուցիան, որի միջոցով հնարավոր է դառնում տալ նաև նրա ժամանակագրական որոշ հաջորդականությունը:

Գ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ելնելով խեցեղենի ձևերի զարգացման յուրահատկություններից, զարդամոտիվների բնույթից և նրանց կատարման եղանակներից, խեցեղենը կարելի է բաժանել հետևյալ փուլերի, որոնք իրենց հերթին բաժանվում են լոկալ խմբերի.

I. Խեցեղեն, որին բնորոշ է եռմասնություն, շեշտված անցումներ, խոր, լայնակոս փորելու տեխնիկայով կատարված զարդանախշեր, որոնցով գերազանցապես զարդարված են կավամանների ուռուցիկ փորերը:

Զարգացման այս փուլի խեցեղենն ըստ տեղային յուրահատկությունների բաժանվում է մոտավոր խմբերի:

Առաջին խմբի խեցեղենն իր ցայտուն արտահայտությունն է գտել Շրեշբլուրում ու Քյուլ-Թափայում և պայմանականորեն այն կարելի է անվանել Շրեշ-բլուրյան խումբ[1]:

Այս խմբի լայնակոս զարդանախշերին բնորոշ են բուսական մոտիվներ, և նրանց հիմքի վրա կառուցված մի նոր կոմպոզիցիա: Բուսական մոտիվներով զարդարված են գերազանցապես գավաթներ-կճուճները, որոնցից մեկի վրա (№ 600) բրուտ-արվեստագետը ցանկացել է պատկերել հավանաբար

[1] Է. Խանզադյան, Շրեշ-բլուրի և Քյուլ-Թափայի խեցեղենն ու նրա արվեստը: Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1964, Երևան, էջ 40—47:

ծաղկի Թուփ (աղ. XIX-ի վերևինը), մյուսի վրա՝ տերևների և ծաղիկների հաջորդականություն (№ 644, աղ. XXV, փ. I, աջից II-ը)։ Բուսական Թփի (№ 599, աղ. XIX, վերևից II շարք ձախ կողմինը) և ցորենի հասկի (№ 607/17, նկ. 20) վերարտադրությունը տեսնում ենք այլ կավամանների վրա։

Վերոհիշյալ բոլոր բուսական զարդանախշերը կատարված են հյուԹեղ, Թանձր շտրիխներով։ Նրանց մեջ կա պլաստիկա, բնության շունչ։

Մյուս կճուճների վրա բրուտ-արվեստագետը բուսական ցողուններով կազմված հիմքով կառուցում է մի նոր կոմպոզիցիոն կմախք (աղ. XX), որի հիմքը կազմում է հորիզոնական և Թեք ակոսներով նավակը (այն կարող էր ոչ միայն ջրի, այլ հողի, երկրի, անդրաշխարհի խորհրդանիշ ծառայել)։ Նրա կենտրոնից սկիզբ առնող և անկյուն կազմող կորագիծ, դեպի վեր բարձրացող մեկԹև, երկԹև և եռաԹև ժապավեններն ավարտվում են ուղղահայաց երկարավուն ակոսից կախված առանձին պարույրով (№ 603, 607/1, 4, 18, 766/113), ակոսածածկ քառանկյունիններով (№ 590, 593, 607/6), կամ այս երկուսի համադրությամբ առաջացած ֆիգուրներով (№ 591, 607/7)։ Այս կոմպոզիցիոն կմախքը Թերևս կենաց ծառի ամենանախնական արտահայտություններից մեկն է։



Նկ. 20. Գավաթի մաս ցորենի հասկի զարդանկարով. Շրեշ-բլուր։

Վերոհիշյալ կմախքը, որը հիմք է ծառայել Շրեշ-բլուրի և Քյուլ-Թափայի բոլոր ձևերի կավամանների զարդանախշերի համար, բրուտները զարդարել են նաև այլ մոտիվներով. այսինքն կոմպոզիցիոն կենտրոնը հարստացրել են համակենտրոն շրջաններով, ճառագայԹաձև ակոսներով, պարույրներով, այսպիսով, մեր կարծիքով, երկիրը, ջուրը, բուսականությունն արտահայտող կոմպոզիցիոն հիմքի վրա բրուտն ավելացնում է հավանաբար լեռները, երկնակամարը (№ 605, աղ. XIX, XX), արևը արտահայտող զարդամոտիվներ (№ 607, աղ. XIX, XX, նկ. 21)։ Ընդհանրապես Շրեշ-բլուրյան խեցեղենին բնորոշ է զարդանախշերի մեծ բազմազանություն (№ 591, 601, 602, 604, 607 և այլն, նկ. 28, 45, 46)։

Վերոհիշյալ զարդանախշերի կոմպոզիցիան ավելի մոնումենտալ և նատյուրմորտի տպավորությամբ վերարտադրված է լայնաշուրԹ հենակների (№ 539, 603, աղ. XX, ներքևից I, II) և եռոտանի պատվանդանների վրա (№ 605, 607/22, 766/117, աղ. XVIII)։

Այսպիսով Շրեշ-բլուրի և Քյուլ-Թափայի խեցեղենի համար բնորոշ է խորը, լայնակոս, հյուԹալի շտրիխներով կատարման եղանակը։

Ինչպես վերը տեսանք, ուսումնասիրվող ժամանակաշրջանի արվեստագետը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես բնապաշտ և եԹե ճիշտ են մեր կռահումները, ապա տիեզերքի վերաբերյալ պաշտամունքի տարրերը իրենց արտացոլումն են գտնում նաև վաղ բրոնզեդարյան արվեստում։ Այս բոլորը նշված խեցեղենի զարդանախշերի վերծանման առաջին փորձերն են, կռահումներ, որոնք կճշտվեն, կլրացվեն այլ ուսումնասիրողների կողմից։ Մի բան անժխտելի է, որ վաղ բրոնզեդարյան մարդն արդեն կարո-

ջանում էր տեսածը ոճավորելով վերարտադրել, նա գաղափար ուներ սիմետրիայի, ռիթմիկ կրկնությունների և կոմպոզիցիայի մասին[1]:

Շրեշ-բլուրյան խմբի մեջ են մտնում Շենգավիթի խեցեղենի մի մասը (№ 1330/20, 33, 45, 113, 132, 133, 139, № 1618/190, № 1442/6, աղ. XXIV, 1 փուլ), Յայջի գյուղում հայտնաբերված խեցեղենի մեծ մասը[2]:

Նման կոմպոզիցիայով խեցու բեկորներ հայտնաբերվել են Սառնաղբյուր գյուղում (Աղինի շրջան № 1547) և Կառնուտում (№ 1478/12բ, կատարված ռելիեֆ), սակայն այդ կոմպոզիցիան բնորոշ չէ հյուսիսի հուշարձաններին. հավանաբար այնտեղ է թափանցել Արարատյան դաշտավայրից և ապացուցում է մշակութային կապերի առկայությունը:

Երկրորդ խումբը կարելի է պայմանականորեն անվանել կառնուտյան-կիրովականյան: Այս խմբին բնորոշ են նույն բազմագալար շրջանները, պարույրները, հատիկաձև ակոսներով ծածկված լայն ժապավենները, սակայն հիմնականը զարդանախշերի խճճվածությունն ու բարդությունն է (նկ. 23, 24):

Մեկ այլ լոկալ խումբ կարելի է համարել Կարազ-Արծնի սարին շերտի (8 մ խորությունից հայտնաբերված) խեցեղենը[3], որին բնորոշ են նույն եռամասանի կավամանները՝ զարդարված խոր լայնակոս պարույրներով, համակենտրոն շրջանների, սրածայր ակոսների, կամ թե եռանկյունաձև և քառանկյունաձև շրջանակներում ամփոփված փոսիկների համադրությամբ: Այսպիսով զարգացման I փուլում խեցեղենը երևան է գալիս դեռևս երեք լոկալ խմբերով:



Նկ. 21. Գավաթի մաս Շրեշ-բլուրից:

Խեցեղենի զարգացման առաջին փուլին բացի խոր լայնակոս զարդանախշերից բնորոշ են նաև ռելիեֆ բազմալար պարույրներ:

Զարգացման այս փուլը, ինչպես տեսանք, տարածման շատ լայն շառավիղ չի ունեցել: Խոր, լայնակոս տեխնիկայով կատարված խեցեղենի հարավային սահմանը Իգդիրի հովտից այն կողմ չի անցնում և միաժամանակ բոլորովին բնորոշ չէ Վրաստանի և Ադրբեջանի խեցեղենին: Ճիշտ է, Վրաստանի մի շարք հուշարձաններին հատուկ է ռելեֆ բազմագալար զույգ ակնոցաձև պարույրների զարդամոտիվը (Ամիրանիս-Գորա, Օզնի, Կիկետ), որը թափանցել է նաև Հյուսիսային Կովկաս (Կայակենդ, Վելիքենդ, Մամայ-կուտանյան և Լուգովայի բնակատեղիները)[4], սակայն այդ զարդամոտիվը տարածման լայն շա-

[1] Է. Խանզադյան, նշվ. աշխ., էջ 40, 47:

[2] Ch. Burney, նշվ. աշխ., էջ 43, 191, նկ. 28, 129, 130 (նկարը պետք է դիտել շրջված), նկ. 132, 142, 143:

[3] H. Koşay, նշվ. աշխ., տես՝ չէրտագրական աղյուսակը և էջ 390-ն նկ. 35, 36, 42, էջ 389, նկ. 37, 49, էջ 392:

[4] Р. М. Мунчаев, Эпоха меди и бронзы в истории Дагестана (III—II тыс. до н. э.) Автореферат, М., 1953, էջ 6:

ռակից ունի և գոյություն է ունեցել ուսումնասիրվող դարաշրջանի զարգացման բոլոր փուլերում:

Խեցեղենի զարդարման առաջին փուլում սկիզբ են առնում նաև ուղղագիծ երկրաչափական զարդանախշերը, սակայն նրանք շատ սակավ են հանդիպում, բացի այդ ակոսային եղանակով են կատարված, դեռևս նրբագիծ չեն (Կառնուտ, Էջմիածնի Քյոլ-Թափա (նկ. 23, 24):

Սակավ օգտագործվում են նաև ներճկված փոսիկները, որոնք և առանձին են հանդես գալիս, և կազմում են լայնակոս զարդանախշերի մասը (Շրեշ-բլուրյան և Կարազ-Արծնի խմբերում):

II փուլի խեցեղենին դարձյալ բնորոշ է կավամանների նմանությունը, նույնպես շեշտված անցումներ և չնայած պահպանվում են նախորդ փուլի զարդանախշման հատկանիշները, սակայն երևան են գալիս նոր յուրահատկություններ: Կավամանների վիզը զարդարվում է նրբագիծ երկրաչափական մոտիվներով, իսկ ուռուցիկ փորը ռելեֆ-ներճկված նեղ ակոսով կատարված զարդանախշերով (աղ. XXV):



Նկ. 22. Գավաթ Մաշտոցի բլուրից:

Երկրորդ փուլի խեցեղենը նույնպես բաժանվում է երկու խմբերի՝ Կիրովականյան և Շենգավիթյան:

Կիրովականյան խմբի խեցեղենի յուրահատկությունն այն է, որ անցումներն ավելի ուժեղ են շեշտված: Արտաքինը ոչ միայն սև փայլեցրած է, այլ նաև կարմիր և դեղին:

Որպես կանոն վզի հիմքը զարդարված է ուղղագիծ երկրաչափական զարդանախշերի մեկ նեղ ժապավենով, իսկ ուռուցիկ փորը բշտիկաձև դաշտերի և պարույրների համադրությամբ ստացված, նեղ ակոսով կատարված ռելեֆ-ներճկված զարդանախշերի բարդ կոմպոզիցիայով (չնայած սակավ հան-



Նկ. 23. Զարդարուն կավամանի մաս Կառնուտից:

դիպում են նաև այնպիսինները, որոնց վզի հիմքը զարդարված չէ, կամ և՛ վիզը, և՛ ուռուցիկ իրանը զարդարված են ռելեֆ-ներճկված զարդանախշերով (նկ. 22, աղ. XXI, XXII, XXV):

Կիրովականյան խմբի մեջ մտնում են Կիրովականի շրջակայքի բոլոր հու-

շարժանների խեցեղենը, Աղստև գետի հովտից՝ Համզաչիմանի՝ Սարի Սոփբլուրի խեցեղենը[1]: Ղազախի՝ Քարա-դեվրիշի խեցեղենի մի մասը[2], Ալավերդու շրջանից Արդվիի խեցեղենը (№ 1038), Ե. Լալայանի կողմից 1905 թ. Վրաստանի պետական թանգարանին հանձնված գավաթները, որոնց Բ. Կուֆտինը սխալմամբ համարում է Նախիջևանի Քյուլ-Թափայից բերված[3], Կարալի խեցեղենի մի մասը[4]: Այս խեցեղենը հասնում է մինչև Հաղար-Թեփե (նկ. 25)[5]:



Նկ. 24. Զարդարուն կավամանի մաս Կառնուտից:

Խեցեղենի կիրովականյան խումբն իր զուգահեռներն ունի Վրաստանում՝ Բեշթաշենի ամրոցի «էնեոլիթյան» խեցեղենի II կոմպլեքսում[6], Ծալկայի դամբանաբլուրների ավագ խմբի խեցեղենում[7], Թբիլիսիի մոտ՝ Սաբուրթալոյում հայտնաբերված խեցեղենում[8]: Սակայն չպետք է մոռանալ, որ Վրաստանի վերոհիշյալ հուշարձանների խեցեղենի մի մասը կապվում է Կվացխելեբիի, Կուլբակեբիի խեցեղենի հետ, որոնք ունեն իրենց տեղային լոկալ յուրահատկությունները և չեն կապվում Հայկական լեռնաշխարհի վերոհիշյալ խմբերի հետ:



Նկ. 25. Կավամանի զարդարուն վզի մաս Հաղար-Թեփեից (Մալաթիա):

Շենգավիթյան խմբին բնորոշ է ոչ միայն վզի հիմքի, այլ ամբողջ վզի զարդանախշումը գծային երկրաչափական մեկից ավելի ժապավեններով, որով երբեմն զարդանախշվում են նաև կավամանի ուսերը (աղ. XXIII): Ուսուցիկ փորը զարդարվում է ռելեֆներճկված զարդանախշերով, որոնք

[1] Նյութերը գտնվում են Կիրովականի Գավառագիտական թանգարանում:

[2] **И. Г. Нариманов, Г. С. Исмайлов**, Акстафачайское поселение у г. Казах, էջ 152, նկ. 26, 7, 8, 10: **Г. С. Исмайлов**, Из истории древнейшей культуры Западного Азербайджана, աղ. III, IV.

[3] **Б. А. Куфтин**, Урартский «колумбарий»..., էջ 97—98, նկ. $53_{1,2}$, աղ. XVI_8, XXIV_2. Археологические раскопки в Триалети, էջ 113, նկ. 120, 121:

[4] **Ch. Burney**, նշվ. աշխ., էջ 201, նկ. 224:

[5] Նույնի, նշվ. աշխ., էջ 406, նկ. 159, տե՛ս նաև աղյուսակը:

[6] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 115—116, 479, աղ. CXX-ի վերին շարքը:

[7] Նույնի, К вопросу о ранних стадиях бронзовой культуры на территории Грузии, էջ 20, նկ. 10б:

[8] Նյութերը գտնվում են ՎՊԹ-ում, հրատարակված չեն:

նախորդ փուլի ճոխությունը, մոտիվների շքեղությունը չունեն (աղ. XXV)։ Այսպիսով լայնակոս զարդանախշերն իրենց տեղը զիջում են գծային երկրաչափականին, որն այս փուլում արտակարգ լայն ծավալ և զարգացում է ստանում։

Շենգավիթյան խմբին են հարում Գառնիի (№ 2234/136, 125Հ), և Դվինի խեցեղենի մի մասը (տե՛ս 1959 թ. պեղումները)։

Խեցեղենի զարգացման II փուլում երևան են գալիս նմասանի գավաթներ՝ զարդարված մեծ կլոր և ձվաձև փոսիկներով։

Խեցեղենի շենգավիթյան խումբն իր զուգահեռները հյուսիսում դեռևս չունի և ոչ էլ Իգդիրից հարավ կամ արևմուտքում՝ Կարազ-Արծնում կարելի է հանդիպել։

III փուլն յուրահատուկ է կավամանների ձևերի և զարդանախշերի պարզեցման գծը։ Չնայած սկզբում դեռևս պահպանվում է կավամանների նմասանիությունը, սակայն այն վերապրուկային է։ Բնորոշ են դառնում սահուն անցումներով և ձգված իրանով կավամանները, ատրճանաբար վերանում են կանթերը։ Մյուս կողմից երևան են գալիս նոր ձևերի, նոր որակով և տեխնիկայով կատարված կավամաններ, որոնք իրենց հետագա զարգացումն են ստանում միջին բրոնզի դարաշրջանում։ Լայնակոս և ռելեֆ-ներճկված զարդանախշերն հիմնականում անհետանում են (աղ. XXIV և XXV)։

Որոշ հուշարձաններում շարունակվում են գծային երկրաչափական զարդանախշերը, որոնք վերջին շրջանում հանդես են գալիս տարբեր ձևափոխումներով, պարզեցվում են, փոխվում է կատարման եղանակը և վերջապես կավամանները զրկվում են զարդարանքից, իսկ հուշարձանների մի հսկա խմբի խեցեղեն զարդանախշվում է միայն ներճկված, մանր փոսիկներով, որոնք ատրճանաբար նույնպես անհետանում են։

III փուլի խեցեղենը կարելի է բաժանել երեք տարբեր, լոկալ խմբերի՝ էլարյան, շենգավիթյան և արագածյան։

1. Էլարյան խմբի խեցեղենն իր մի շարք հատկանիշներով դեռևս կապվում է նախորդ փուլերի հետ, այսինքն կավամանների ձևը համարյա նույնն է՝ լայնաբերան են, ուռուցիկ փորով, սև փայլեցրած մակերեսով, կիսագնդաձև կանթերով և նուրբ ժապավենով եզերված շուրթերով, փոքրիկ ներճկված հատակով, նրբախեցի, սակայն,

ա. Վերանում է կավամանների նմասանիությունը, անցումները կատարվում են սահուն և իրանը մի փոքր ձգվում է (աղ. XXIV, XXV)։

բ. Լայնաշուրթ հենակներն ստանում են որոշակի ձև, շուրթերն ավելի բարձրացիր և լայն են դառնում, իրանը ոչ թե կլոր է, այլ կոնաձև, դեպի ցած լայնանում է (աղ. XXV)։

գ. Խեցեղենը գերազանցապես զարդարվում է ներճկված փոսիկներով, թեք ակոսներ-բեզիկներով, տարբեր տիպի ռելեֆ ելուստներով, խուլ-կանթերով (աղ. XII-ի ներքևի 2-ը, աղ. XIV, XXIV, XXV)։ Չնայած հանդիպում են նաև գծային երկրաչափական և ռելեֆ զարդանախշեր, սակայն նրանք բնորոշ չեն էլարյան խեցեղենի համար, վերապրուկային են։

դ. Ներճկված փոսիկներով զարդանախշվում է կավամանների ուռուցիկ փորը, կանթերի գագաթը և տակի մասը (աղ. XXIV, XXV, նկ. 14)։

ե. Երևան են գալիս խեցեղենի նոր ձևեր, որոնք իրենց զարգացումն են ստանում միջին բրոնզի դարաշրջանում (օրինակ՝ խողովակաձև բարձր վզով գլորացող իրանով կճուճներ և այլն)։

Էլարյան տիպի խեցեղենը տարածման արտակարգ լայն շառավիղ ունի։ Այն իր մեջ ընդգրկում է Գառնիի խեցեղենի մեծ մասը, Աղթամիրի ստորին շերտի խեցեղենը, Ակունքի և Նախիջևանի Քյուլ-Թափայի II շերտի խեցեղենը, Բաբա-դերվիշի և Մալաքլուի խեցեղենի մի մասը։ Դամբարանային մշակույթից՝ Ջրառատի դամբանաբլուրի, Երևանում՝ Խորումբուլաղի, Լենինականի՝ Մսի կոմբինատի դամբարանային նյութերը, Հացավանի, Քարսիի, Ասաղանորի, Արճեշի խեցեղենը և այլն։ Այս խեցեղենն իր զուգահեռներն ունի Վրաստանում՝ Օզնիի և Կիկետի[1], Բարմակսիզի խճուղու և Տաշ-բաշի[2] դամբարանային նյութերում, միայն այն տարբերությամբ, որ Վրաստանի խեցեղենին բնորոշ չեն ներճկված փորիկները. նրանք կամ անզարդ են կամ զարդարված ելուստներ-խուլ կանթերով։ Հարավում՝ Իրանական Ադրբեջանում այն մասամբ իր զուգահեռներն ունի Գեոյ-Թեփեի «K» շերտում և այլն։

2. Շենգավիթյան խմբի խեցեղենը դարձյալ պահպանում է նախորդ փուլի որոշ հատկանիշներ։ Նրբագիծ երկրաչափական զարդանախշերն իրենց ծաղկումն են ապրում և նրանց հետ համատեղ հանդես են գալիս պարզեցված երկրաչափական առանձին խոշոր ֆիգուրների շարաններ (նկ. 26)։ Սակայն հիմնականում երևան են գալիս կավամանների նոր ձևեր՝ երկթեք կամ բազմանիստ իրանով (նկ. 27), տափակ հատակով վարդագույն հասարակ կավամաններ, կոպիտ, ծանր, հաստախեցի, բաց շագանակագույն արտաքին մակերեսով լայնաբերան գավեր, սափորներ, քրեղանատիպ կավամաններ, որոնց ուռուցիկ ուսերը, կամ ժապավենաձև ռելեֆ շուրթերը զարդարված են դեպի ցած գոգաթներով, ակոսածածկ թեք և ուղիղ դասավորությամբ խոշոր եռանկյունիների շարքերով, տարբեր ուղղություններ ունեցող ակոսների լայն ժապավենով (աղ. XXV)։ Այս զարդանախշերը կատարված են մի նոր եղանակով, ոչ թե թաց կավի, այլ արդեն չորացած և չթրծված կավի վրա, մի փոքր քերելու եղանակով։ Ճիշտ նման եռանկյունիների շարանով են զարդարված նաև միջին բրոնզի գունազարդ խեցեղենը միայն այլ եղանակով կատարված՝ վարդագույն փայլեցրած մակերեսի վրա սև փայլաններկով։

Նմանապես վաղ բրոնզի դարաշրջանում սկիզբ առած գծածածկ եռանկյունաձև զարդամոտիվները որոնք ուսումնասիրվող դարաշրջանի զարդանախշերի կոմպոզիցիայի մասն են կազմում, միջին բրոնզի շրջանում հանդես են գալիս դարձյալ շարաններ կազմած և վարդագույն ֆոնի վրա կատարված սև փայլաններկով[3]։

Զարդամոտիվների և նրանց կատարման եղանակի տեսակետից որոշ զուգահեռներ կարելի է տեսնել Վրաստանում, օրինակ՝ Ամիրանիս-Գորայի բնակատեղիի դամբարանային խեցեղենում, որտեղ № 19 դամբարանի կճուճները Շենգավթի նման զարդանախշված են չորացրած կավի վրա կատարված ակոսածածկ խոշոր, գագաթներով վեր եռանկյունիների շարքերով, որոնք արված են վզի հիմքում, իսկ ուռուցիկ իրանը զարդարված է գծային երկրաչափական զարդանախշերով[4]։ Սակայն Ամիրանիս-Գորայի № 19 դամբարանի վերոհիշյալ կճուճներն իրենց ձևով ավելի մոտ են Թրիալեթիի Բ. Կուֆտինի բնորոշմամբ

---

[1] Նյութերը հրատարակված չեն, տե՛ս ՎՊԲ, ինվ. 40—58։ 13, 40—58։ 15, 255։ 258, 250 և այլն։

[2] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 116—117, նկ. 126։

[3] **Է. Խանզադյան**, Լճաշենի № 6 կուրգանը, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1960, Երևան, էջ 68։ Նույնի, Лчашенский курган № 6, КСИА, вып. 91. 1962, էջ 68։

[4] **Т. Чубинишвили**, Амиранис-Гора, էջ 91, նկ. $17_{1, 2, 6}$։

«Հնագույն բրոնզի» դարաշրջանի դամբանադաշտային թաղումների II խմբի IV կարասին և X դամբանաբլուրի խեցեղենին, որտեղ նույն եռանկյունաշարքը և իրանի ուսային մասում նման զարդամոտիվներ ենք տեսնում միայն նուրբ գծային եղանակով կատարված[1]։

Շենգավթի վերոհիշյալ խեցեղենի որոշ գծեր կարելի է տեսնել նաև Սաչխերիի շրջանի Ցարցիս Գորայի դամբարաններից հայտնաբերված նյութերում, որտեղ նույն եղանակով կատարված գագաթներով վեր ուղղված եռանկյունիների շարքը կարելի է տեսնել կավամանի վզի հիմքում, որպիսիները մենք տեսանք Ամիրանիս Գորայի № 19 դամբարանում[2]։

Նկ. 26. Կավամանի մաս Շենգավթից։

Երրորդ փուլի շենգավթյան խեցեղենի հետ կարելի է համեմատել Բեշթաշենի ստորին շերտի խեցեղենի III կոմպլեքսը, որը հայտնաբերվել է երկրորդ կոմպլեքսից վեր[3] (ինչպես վերը տեսանք II կոմպլեքսի նյութերը համապատասխանում են մեր խեցեղենի II փուլի կիրովականյան խմբին)։



Նկ. 27. Գավաթ Շենգավթից։

Բեշթաշենի խեցեղենի III կոմպլեքսը կազմում է սև փայլեցրած նուրբ գծային զարդանախշերով խեցեղենը։ Այս բեկորներից մեկի վրա փաստորեն կրկնվում է Շենգավթի խեցեղենի նեղ ժապավենի մեջ ամփոփված գծածածկ զիգզագ գոտին, որն այստեղ հանդես է գալիս ազատ, առանց ժապավենի մեջ կաշկանդվելու, մոնումենտալ և զուգահեռ շարքերով[4]։ Այս խեցեղենին մոտ, շերտագրական նույն պայմաններում հայտնաբերվել են նաև զոնադարդ խեցեղենի մի քանի բեկորներ, որոնցից մեկի վրա կրկնված է Շենգավթի՝ վերը նկարագրված խոշոր գծածածկ եռանկյունիների շարքը, որը հավանաբար

[1] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 105, նկ. 112, 113, էջ 465, աղ. CXIV։

[2] Նույնի, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, էջ 78, նկ. վերևից 3-րդը։

[3] **Б. А. Куфтин**, Археологические раскопки в Триалети, էջ 116—117։

[4] Նույն տեղում, էջ 116—117, 483, աղ. CXXII։

գունազարդ խեցեղենի ամենավաղ օրինակն է[1]։ Բ. Կուֆտինը Բեշտաշենի խեցեղենի III կոմպլեքսի զուգահեռները նույնպես տեսնում է Շենգավիթում[2]։

Այս բոլոր զուգահեռներն իրենց հերթին շեշտում են III փուլի շենգավիթյան խեցեղենի վաղ բրոնզեդարի վերջին վերաբերվելը, որն ունի անցումային հատկանիշներ վաղ բրոնզից դեպի միջին բրոնզը։

3. Առագածյան խմբում զուգորդվում են Շենգավիթի երկրաչափական գծային զարդանախշերը, Էլարի խեցեղենի ձևերը, զարդանախշերը՝ փոսիկներով ու խուլ կանթերով հանդերձ։

Արագածյան խեցեղենի բնորոշ հատկանիշն այն է, որ նրանում համադրվում են մեկ կողմից՝ վաղ բրոնզի խեցեղենի անհատացող հատկանիշները, մյուս կողմից ձեռք է բերում նոր հատկանիշներ, ինչպես ճիշտ նկատել է Հ. Մարտիրոսյանը, սկիզբ են դնում որակապես նոր բրուտագործական արտադրության, որոնք իրենց զարգացումն են ստանում միջին բրոնզի վաղ փուլերում[3]։

Արագածյան խեցեղենը վաղ բրոնզեդարյանի հետ կապվում է կավամանների շուրթերի ձևավորմամբ, հատակների ներձկվածությամբ, բռնակների էլարյան տիպով, կավամաններով, որոնք ունեն ցածրադիր, երկթեք իրան։ Զարդանախշման նուրբ գծային տեխնիկայով և որոշ մոտիվներով, օրինակ՝ շախմատաձև դաշտերով, եռահարկ հատված եռանկյունիներով հարում է Շենգավիթին, իսկ կավամանների ուսերի զույգ կիսալուսնաձև ելուստներով, փոսիկներով և խուլ կանթերով կապվում է Էլարի հետ։

Տարբերիչ նոր հատկանիշները հետևյալներն են[4].

Խեցեղենի մի մասը ձեռք է բերում նոր ձևեր, որոնք պատրաստված են վարդագույն բարձրորակ կավից, վատ մշակված, անհարթ մակերեսով և անփայլ։ Կավամանների մի մասի հատակները դառնում են լայնադիր։ Կճուճների մի խմբի իրանը ավելի ձգվում է, վիզը բարձրանում և կիսալուսնաձև կանթերը մի փոքր աղեղնաձև դուրս են ձգվում։

Զարդանախշերի երկրաչափական կոմպոզիցիայում նկատվում է պարզեցում, դասավորության նոր սկզբունքներ։ Վաղ բրոնզեդարյան հորիզոնական յուրահատուկ լայն ժապավեններում պահպանվում է ամփոփվածության սկզբունքը, սակայն փոխվում է դասավորությունը և հանդես են գալիս թեք, անկյուն կազմող ժապավեններում ամփոփված գծածածկ քառանկյունիներ՝ սուր գագաթներով իրար միացված գծածածկ եռանկյունիների շարքով, շախմատաձև դաշտերով, որոնք կրկնվում են միջին բրոնզի դարաշրջանի վաղ փուլերի խեցեղենում՝ Թազաքենդի և Էլարի տիպի գունազարդ խեցեղենում[5]։

Արագածյան խմբի մեջ մտնում են Արմավիրի[6], Աստղաձորի[7], Զառաջարսի[8], Շամլուղի (№ 2073, 2074), Ղարա-Թափայի (№ 1458 և 556/42), Հառիճի

---

[1] **Б. А. Куфтин,** Археологические раскопки в Триалети, էջ 481, աղ. CXXI։ Նույնի, К вопросу о ранних стадиях бронзовой культуры на территории Грузии, էջ 22։

[2] Նույնի, Археологические раскопки в Триалети, էջ 112։

[3] **А. А. Мартиросян,** Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 42–46։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

[6] **Б. А. Куфтин,** Урартский «колумбарий»... էջ 93, աղ. 23, էջ 92. նկ. $50_{1,2}$, աղ. $23_{3,6}$։

[7] Նույն տեղում, էջ 99, նկ. 94a և աղ. XX_1։

[8] Պեղումներ՝ Հ. Մնացականյանի, նյութերը հրատարակված չեն։

(№ 781), Երևանի Թահիրովի սովխոզի (№ 2062բ) և Էջմիածնում հայտնաբերված որոշ նյութեր (№ 766/71, աղ. XXV)։

Քյուլ-Թափայի II շերտի երկարավիզ, ուռուցիկ բարձր ուսերով, ձգված իրանով սև փայլեցրած ավելնաձև մեկ կանթանի կամ երբեմն երկկանթանի անզարդ կճուճները[1] հիշեցնում են Արագածում և Արմավիրում հայտնաբերված նման կճուճները, միայն թե ունեն ավելի համաչափ իրան։ Չնչին փոփոխություններով այս ձևը պահպանվում է միջին բրոնզի սև փայլեցրած խեցեղենում, որտեղ կանթերն անհետանում են և կավամանները զարդարվում են կամ կարմիր ֆոնի վրա սև զարդանախշերով, կամ սև փայլեցրած մակերեսի վրա փորված գծային կամ ռելեֆ զարդանախշերով, օրինակ՝ նույն Քյուլ-Թափայի III շերտի խեցեղենում[2], կամ Կիրովականի միջին բրոնզի դարաշրջանի դամբանաբլուրի խեցեղենում (№ 1861/13—17, 23, 26)։

Արագածյան խեցեղենն իր զուգահեռներն ունի Զաղլիկում[3], Հյուսիսային Կովկասում՝ Լուգովոյի բնակատեղիում[4], Կարաբուդախքենդի № 2 դամբարանում[5]։ Այն մասամբ կապվում է նաև Յանիկ-Թեփեի խեցեղենի հետ, որտեղ կճուճների մի մասի ուռուցիկ ուսերը զարդարված են նույնպես ներագիծ երկրաչափական առանձին-առանձին ֆիգուրաներով[6]։

Այս բոլորն անշուշտ խոսում են այն մասին, որ III փուլի խեցեղենն իր բոլոր լոկալ տարբերակներով վերաբերվում է վաղ բրոնզեդարյան մշակույթի զարգացման վերջին շրջանին, որը մեկ կողմից կրում է վաղ բրոնզի մշակույթի բնորոշ գծերը, իսկ մյուս կողմից՝ ձեռք է բերում նոր հատկանիշներ, որոնք իրենց զարգացումն են ստանում միջին բրոնզի դարաշրջանում։

Չնայած մենք խեցեղենը թվագրելու ստույգ շերտագրական տվյալներ դեռևս չունենք, սակայն ելնելով խեցեղենի էվոլյուցիոն զարգացման առանձնահատկություններից, որոշ տիպոլոգիական համեմատություններից, ինչպես նաև շերտագրական բնույթի վերոհիշյալ դիտողություններից, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի զարգացման I և II փուլը կարող ենք թվագրել մ. թ. ա. III հազարամյակի I կեսով, որի վերին սահմանը կարող է հասնել մինչև մ. թ. ա. XXIV դարը, իսկ խեցեղենի III փուլը մ. թ. ա. III հազարամյակի II կեսով, որի վերին սահմանը կարող է հասնել մինչև մ. թ. ա. XX դարը։

Խեցեղենի մանրամասն անալիզը, ինչպես և համեմատությունները Հայկական լեռնաշխարհից դուրս գտնվող համաժամանակյա հուշարձանների նյութերի հետ, ապացուցում են, որ խեցեղենի նման բազմազանությունը և շքեղությունն իր զարգացման երեք փուլերով, տեղային հատկանիշները կրող կավամանների ձևերով և զարդամոտիվներով բազմաթիվ տարբերակներով առայժմ յուրահատուկ է միայն Հայկական լեռնաշխարհին, իսկ նրանից դուրս մենք հանդիպում ենք այդ խեցեղենի միայն թույլ արձագանքներին։

Հետևաբար նման խեցեղենով մշակույթի ծագման և առաջացման օջախը, հայրենիքը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհում։

---

1 О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, աղ. 27։

2 Նույն տեղում, աղ. 35, նկ. 2, 8։

3 Б. А. Куфтин, Урартский «колумбарий»..., էջ 91—93, նկ. 56, աղ. XX_4, XXIII_4։

4 Р. Мунчаев, էջ 109, նկ. 32։

5 Р. М. Мунчаев, К. Ф. Смирнов, Археологические памятники близ села Карабудахкент. էջ 8, նկ. 5։

6 Ch. Burney, նշվ. աշխ., աղ. LXXV, նկ. 64, աղ. LXXI և այլն։

3. ՄԱՆԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հնագիտական մի շարք հայտնագործություններ ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում մթա III հազարամյակում արդեն ծանոթ են եղել մանածագործությանը, մանել են թել և միաժամանակ գործել հագուստներ:

Մանածագործության հետ կապված հիմնական գործիքներից մեկը իլիկի գլուխն է (աղ. XXVII), որից մեծ քանակությամբ հայտնաբերվել է համարյա բոլոր բնակատեղիներում, մասամբ նաև դամբարաններում:

Իլիկի գլուխներ հայտնի են ոսկորից (Շենգավիթ՝ № 1330/210, Շրեշբլուր՝ № 121/33, Գառնի՝ № 1964/5, 2176/21, 35, № 2235/23, Ջրառատի դամբանադաշտ՝ № 1939/23—27, Քոսի-Ճոթեր՝ ԿԳԹ և քարից (Քեթի՝ № 1689, Շենգավիթ՝ 1330/185, 116, Ջրառատի դամբանադաշտ՝ № 1939/29, 30): Վերջիններս ընդհանրապես լայն տարածում ունեն և՛ Հին Արևելքի և՛ Կովկասի վաղ բրոնզեդարյան հնավայրերում:

Իլիկի գլուխների հայտնագործությամբ ապացուցվում է, որ Հայկական լեռնաշխարհի անդրանիկները ծանոթ են եղել թել մանելու տեխնիկային:

Թե ի՞նչ նյութից են նրանք թել ստացել, դժվար է որոշել, որովհետև թելը կամ նրանով ստացված գործվածքները փտել և մեզ չեն հասել, սակայն մի բան պարզ է, որ իլիկով թել մանելուն նախորդել են ավելի պրիմիտիվ, ենթակեղևային հյուսվածքներով պատրաստվող գործվածքները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, շնորհիվ անասնապահության նոր ձևի առաջացման, մանր եղջերավոր կենդանիների՝ ոչխարի և այծի գլխաքանակի աճման, հավանաբար ընդլայնվել է նաև բրդի օգտագործումը ոստայն հյուսույթ:

Իլիկով մանած թելից գործվածք ստանալու համար, այն պետք էր վերափաթաթել մեծ կոճերի կամ հինագլանների վրա, որոնք մեծ մասամբ փայտից լինելով մեզ չեն հասել, սակայն Գառնիում (№ 2234/174) և Բաբա-դերվիշում[1] հայտնաբերված կենդանիների կողոսկրները՝ վերին լայն մասում անցքով, հավանաբար նման դեր են կատարել (նկ. 28):

Ջնայած ջուլհակի դազգահը չի պահպանվել, սակայն հնագիտական որոշ նյութեր ենթադրել են տալիս նրա գոյությունը Հայկական լեռնաշխարհում մթա III հազարամյակում: Շենգավթում (№ 1330/327, 328, 329), Մոխրաբլուրում (1962 թ. № 26), Նախիջևանի Քյուլ-Թափայում հայտնաբերված ակոսաձև, ընդլայնակի փորվածքներով մի խումբ կարմիր և դեղին տուֆից փոքրածավալ քարերը (աղ. XXVI, ներքևում, աջից II), հավանաբար ծառայել են մի պարզունակ դազգահի, որի ձևը Էրզրումի, Ախալքալակի, Զանգեզուրի և Վանի հայերի մոտ պահպանվել է մինչև XX դարի սկիզբը: Այն իրենից ներկայացնում է միմյանցից որոշ հեռավորության վրա՝ գետնի մեջ ուղղահայաց կանգնեցրած փայտե ձողեր՝ վերին ծայրերը ճյուղավորումով, որի վրա դրվում է փայտիկ: Վերջինիս վրա ամրացվում են թելերը, որոնք ներքևի մասում չորսական հատ կապվում են վերոհիշյալ քարե ծանրոցներից: Որպեսզի թելերը ձգված լինեն և չխճճվեն, նրանց վրա հագցվում է բարակ ճյուղ՝ փայտիկ: Վերոհիշյալ կողոսկրների հետ Գառնիում (№ 2234/174, նկ. 28, աջից I-ը) և Բաբա-դերվիշում[2] հայտնաբերվել են երկարավուն, տափակ, քառակող մշակված ոսկրե

[1] Г. С. Исмайлов, Из истории древнейшей культуры Западного Азербайджана, Автореферат, էջ. VI:

[2] Նույն տեղում:

գործիքներ, որոնք հավանաբար ծառայել են վերահիշյալ գազգահի գործվածքը հարթեցնելուն, թելերը հավասարեցնելուն։ Նման ոսկրե գործիքներ հայտնաբերվել են նաև Շենգավիթում (№ 1330/207, 208)։ Այդպիսի պարզունակ գազգահները օգտագործվել են ոչ հեռավոր անցյալի շատ ժողովուրդների մոտ։

Այդ մշակույթին բնորոշ են նաև ոսկրե հերուններ-շյուղեր, որոնցով հավանաբար թելից գործվածքներ են հյուսել։ Նման շյուղերից մի քանիսի կոթառի մասում մեկկողմանի կամ երկկողմանի փորվածքներ են արված (Շենգավիթ՝ № 1330/200, 346, էլար՝ № 127/22 և այլն, նկ. 28)։



Նկ. 28. Մանածագործական գործիքներ։

Ասեղների հայտնագործությունը Գառնիում (№ 2176/104. № 2234/157), Շենգավիթում (№ 1330/138), էլարում (№ 127/27) և այլուր (նկ. 28, ձախից II, III. IV) ապացուցում է, որ կար են արել բավականաչափ բարակ թելով։ Հավանաբար նման թելի վրա են շարվել պաստայից շատ փոքր անցքով տարատեսակ ուլունքները, որոնք էլարի դամբարաններում հայտնաբերվում են կմախքների վզի ողերի մոտ։ Նուրբ գործվածքների առկայությունը Հայկական լեռնաշխարհում ապացուցվում է դեռևս մ.թ.ա. IV հազարամյակից սկսած, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղում Ստեփանակերտի № 103, 119, 125 դամբանաբլուրներում, ինչպես նաև էջմիածնի շրջանի Թեղուտի էնեոլիթյան բնակատեղիում հայտնաբերված տեքստիլային խեցեղենի գործվածքները բավական նուրբ են պատրաստված։

Ամփոփելով կարելի է ասել, որ մանածագործության ծագումն ու զարգացումը պայմանավորված էր տեխնիկայի ընդհանուր զարգացմամբ, արմատացող երկրագործությամբ և անասնապահությամբ, որոնք մանածագործության համար հիմնականում նոր հումք մատակարարողներն էին։

4. ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ ուսումնասիրությունների միջոցով ապացուցված է, որ կենդանիների կաշվի, մորթու առանձնահատկությունները և նրանց մշակման միջոցները մարդկային հասարակությանը ծանոթ են եղել նրա զարգացման դեռևս նախնական փուլերում։

[1] **Б. Л. Богаевский**, История техники, 1936, М.—Л., т. I, էջ 287—288, նկ. 203. **Ֆր. Ратцель**, Народоведение, т. I, 1902, Петербург, էջ 708, т. II, էջ 353։

Չնայած մորթուց և կաշվից պատրաստված իրերը փտել և մեզ չեն հասել, սակայն հայտնաբերված մի շարք գործիքներ վկայում են նրանց գոյությունը Հայկական լեռնաշխարհում նաև մ.թ.ա. III հազարամյակում:

Վաղ բրոնզեդարյան հնավայրերում հայտնաբերվել են տարբեր ձևերի ու չափերի կայծքարե և օբսիդաքարե պահանգավոր դանակներ, որոնք օգտագործվել են կաշեգործության մեջ: Նման պահանգավոր կայծքարե ներդիրներից մեկը (Շենգավիթ՝ № 1330/353) ծայրամասային է, երկարավուն, սղոցաձև ունի հստակ ատամնաշար: Հայտնաբերված մյուս ներդիրներն ունեն կարճ և լայն աշխատող եզր, նախորդի նման ուղիղ և շեշտված ատամնաշարով (Շենգավիթ՝ 1330/362, Արմավիր՝ № 834, Դվին՝ № 1917/80 և այլն): Այս սղոցաձև դանակներով կազմված կոմպլեքսով հարմար էր ոչ միայն կաշի, այլև ոսկոր, միս, ձուկ, ծառ կտրել կամ օգտագործել բազմաթիվ այլ իրեր սղոցելու և կտրելու նպատակով:

Մորթու և կաշվի մշակմանն են ծառայել նաև կայծքարե և օբսիդաքարե քերիչները, շեղբերը, որոնք հայտնաբերվում են և՛ բնակատեղիներում, և՛ դամբարաններում (աղ. VI): Քառանկյունաձև մի շարք դանակներ հայտնաբերվել են Էլարի դամբարաններում (№ 2246/66a, 69a—երկթեք հավասար նիստերով, № 2246/77—եռանիստ), որոնցով հավանաբար կտրել կամ մաշկազերծ են արել դամբարաններում դրված ոչխարի կամ այծի միսը: Երկնիստ, եռանիստ, քառանիստ դանակներ հայտնաբերվել են Աթարբեկյանի դամբանաբլուրում (№ 1939/11—14, 16—18), Գառնիում (№ 1964/52a, b, 58, 38, № 2234/175, № 2235/43d, 51b), Շենգավիթում (№ 1330/363), Ցիոլեառվույում (№ 1961/11, 8), երկնիստ-եռանիստ դանակներ բնորոշ են Էջմիածնի Քյուլ-Թափային[1]:

Հայտնաբերվել են նաև օբսիդաքարից տարբեր ձևերի քերիչներ–շեղբեր, որոնց նիստերն ուղղագիծ չեն նախորդների նման, այլ կորագիծ (Գառնի՝ № 1965/2, 2176/92, 96, Էլար՝ № 2246/64, 38, աղ. VI):

Քառանկյունաձև դանակներ, քերիչներ, շեղբեր հայտնաբերվել են Նախիջևանի Քյուլ-Թափայում՝ II շերտում[2], Լեռնային Ղարաբաղի Խաչենագետի դամբանաբլուրում[3], Աղստև գետի հովտի Բաբա-դերվիշ բնակատեղիում[4], Վանում՝ Շամիրամալթիի բնակատեղիում[5] և այլուր:

Կաշեգործության մեջ մեծ դեր են կատարել նաև ոսկրե հերունները, որոնք մեծ առատությամբ հայտնաբերվում են համարյա բոլոր վաղ բրոնզեդարյան հնավայրերում:

Հերունները երկու տիպի են.

1. **Սրածայր**, որոնք կարող էին որպես ծակիչներ օգտագործվել, կաշվից տրեխներ պատրաստելու, հագուստ կամ մորթուց վերնազգեստներ պատրաստելու համար և այլն: Նրանք կարող էին և որպես բրուտագործի գործիք ծառայել խեցեղենը զարդանախշելու համար (աղ. XXVI):

---

[1] **Б. Б. Пиотровский**, Поселения медного века в Армении, նկ. 2:

[2] **О. А. Абибуллаев**, Первые итоги раскопок Кюль-тепе, էջ 78, 79, աղ. I, V: Նույնի, Некоторые итоги изучения холма Кюльтепе в Азербайджане, էջ 159, նկ. 24:

[3] **К. Х. Кушнарева**, Памятники медного века в Нагорном Карабахе, նկ. 26:

[4] **И. Г. Нариманов, Г. С. Исмайлов**, նշվ. աշխ., էջ 150, նկ. 1₆:

[5] **Խ. Սամուելյան**, նշվ. աշխ., աղ. XIX, նկ. 10—24:

2. Բութ ծայրով ճնշիչներ-կոկիչները նախորդների համեմատ ունեն ավելի լայն մակերես և կլորացող բութ ծայրեր (աղ. XXVI):

Սրանք հավանաբար օգտագործվել են որպես կոկիչներ կաշեգործության մեջ: Կաշին այլ գործիքների օգնությամբ մաշկելուց և փտող մասերը հեռացնելուց հետո, նրանց որպես հագուստ կամ կոշիկ օգտագործելու համար անհրաժեշտ էր փափկություն և ճկունություն տալ, մանր ծալքերը հարթել: Կաշվին և մորթուն, մշակման միջոցով, փափկություն ու ճկունություն տալուց հետո միայն կարելի է այն օգտագործել հագուստ և կոշիկ պատրաստելու համար:

Կաշեգործության հետ կապված վերոհիշյալ գործիքներն ունեն ազգագրական մի շարք զուգահեռներ[1]:

Սակայն չպետք է մոռանալ, որ վերոհիշյալ դարաշրջանում կաշեգործության վերելքը նույնպես պայմանավորված էր մետաղագործության զարգացմամբ: Մետաղե գործիքների՝ դանակի, հերունների մուտքը կաշեգործության ասպարեզ, մի նոր խթան հանդիսացավ նրա զարգացման, առաջընթացի համար:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկները ուսումնասիրվող դարաշրջանում կրել են ոչ միայն գործված հագուստներ, այլ նաև մորթուց և կաշվից պատրաստված հագուստներ ու կոշիկներ:

5. ՔԱՐԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհում քարի մշակման ավանդույթը շատ հին է: Այն սկիզբ է առել դեռևս պալեոլիթից: Քարե գործիքները երկար ժամանակ լայն կիրառություն են ունեցել տնտեսության տարբեր ճյուղերում, կենցաղում և իրենց նշանակությունը վերջնականապես կորցրել են երկաթի դարաշրջանում:

Ինչպես հնագիտական նյութերն են ապացուցում, վաղ բրոնզեդարում տեղաբնիկ վարպետները ծանոթ են եղել տարատեսակ քարերի մշակման տեխնիկային: Քարամշակման համար հումք են ծառայել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռնաշղթաները, որոնք արտակարգ հարուստ են քարատեսակներով: Հայտնի է, որ դեռևս հնագույն ժամանակներից սկսած, որոշ քարատեսակներ նաև արտահանվել են:

Ժակ դե Մորգանը ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի, հատկապես Արագածի օբսիդաքարի տեղային յուրահատկությունները, գտնում է, որ սկսած պալեոլիթյան դարաշրջանից, այն արտահանվել է Առաջավոր Ասիայի ու հրաբխային շրջանները՝ և մեծ մասամբ հայտնաբերվում է Քուրդիստանի, Լուրիստանի, Էլամի, Շումերի, ինչպես նաև Կովկասի էնեոլիթյան շերտերում[2]:

Ինչպես վերը տեսանք, քարից վաղ բրոնզեդարում բազմաթիվ և բազմատեսակ գործիքներ են պատրաստել, որոնք ծառայել են երկրագործությանը (աղորիքներ, սանդեր, սանդկոթեր, տրորիչներ, մանգաղի ներդիրներ), փայտամշակմանը (սեպեր, կացիններ, սղոցներ), հանքամշակմանը (կացիններ-մուրճեր), մանածագործությանը (դազգահի ծանրոցաքարեր, իլիկի գլուխներ), կաշեգործությանը (քերիչներ, դանակներ), ձկնորսությանը (սուզաքարեր), խեցեգործությանը (կոկիչներ): Քարից պատրաստել են նաև զենքեր

1 Б. Л. Богаевский, նշվ. աշխ., էջ 284:

2 Morgan, J. La prehistoire orientale, Paris, 1927, t. III, էջ 26:

(նետասլաքներ, գուրզեր, մարտական կացիններ), զարդեր (ուլունքներ, կոճակներ), արվեստի նմուշներ (արձանիկներ, պաշտամունքային առարկաներ, կախիկներ-հմայիլներ), խաղալիքներ (խաղանիշեր, մանկական սայլի մոդելների անիվներ) և այլն։

Քարի մշակման ասպարեզում հիմնականում պահպանվում է հին, էնեոլիթյան տեխնիկան։ Կատարելագործվում են քարի մշակման՝ հղկման, փայլեցման և շաղափման (գայլիկոնելու) եղանակները, սակայն ամբողջությամբ վերցրած քարամշակությունը զարգացում չի ապրում և քարե գործիքների որոշ տեսակներ (կտրող, ծակող) աստիճանաբար դուրս են մղվում բրոնզե գործիքների կողմից։

Փայտի մշակման տրադիցիան ևս շատ հին է։ Փայտից պատրաստված իրերը, գործիքներն անշուշտ լայն կիրառություն են ունեցել տնտեսության տարբեր բնագավառներում, մասամբ նաև բնակարանաշինության մեջ։ Փայտից են պատրաստվել հիմնականում աշխատանքի շատ գործիքներ, որոնք փտել և մեզ չեն հասել։

Քարե և հատկապես բրոնզե մի շարք գործիքներ ենթադրել են տալիս, որ փայտամշակման մեջ օգտագործվել է փայտը փորելու, կտրելու, ողորկելու, տաշելու և մի շարք այլ եղանակներ։ Նույն բանը կարելի է ասել նաև ոսկրի և եղջյուրի մշակման վերաբերյալ։ Ինչպես վերը տեսանք, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ են եղջյուրե և հատկապես ոսկրե տարատեսակ աշխատանքի գործիքներ (հերուններ, շյուղեր, կոկիչներ, հինադյաններ, ասեղներ, իլիկի գլուխներ), զարդեր (կոճակներ, հմայիլներ), զենքեր (նետասլաքներ) և այլն։

Պարզ է, որ այդ շրջանում գործել են նաև խսիրներ, պարաններ, մաղեր, կողովներ և տնտեսական նշանակություն ունեցող այլ իրեր, որոնք մեզ չեն հասել։

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ է նաև բավականաչափ զարգացած բնակարանաշինությունը։ Որպես շինանյութ օգտագործվել է քարը, եղեգը, կավը և նրանով պատրաստված հում աղյուսը։

Այսպիսով, ինչպես վերը տեսանք, արհեստները վաղ բրոնզի դարաշրջանում զարգացման մի նոր փուլ են թևակոխում։ Հատկապես մետաղագործությունը և խեցեգործությունն անջատվելով տնայնագործությունից դառնում են ինքնուրույն արտադրաճյուղեր, որը պայմանավորված էր տնտեսության մի նոր վերելքով։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՋԱԽՆԵՐԸ, ՏԱՐԱԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԵՎ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վաղ բրոնզի դարաշրջանի մշակույթի պատմության ուսումնասիրության կարևորագույն և հիմնական հարցերից մեկը, որ միշտ առաջ է քաշվում համարյա բոլոր գիտնականների կողմից, դա սև փայլեցրած բնորոշ խեցեղեն ունեցող նյութական կուլտուրայի ծագման, զարգացման և նրա տարածման ուղիների հարցն է։

Ինչպես տեսանք, Բ. Կուֆտինն այդ մշակույթի օջախը համարում էր Քուռ-արաքսյան միջագետքը, որի անունով էլ այն կոչվեց և երկար տարիներ այդպես էր ընդունվում սովետական հնագետների կողմից։

Չ. Բարնեյը չհամաձայնվելով Բ. Կուֆտինի հետ, գտնում է, որ այդ մշակույթի ծագման հիմնական շրջանը Արևելյան Անատոլիան է, այսինքն Արևմտյան Հայաստանի տերիտորիան և Արաքսի միջին հոսանքը, իսկ Թրիալեթին և Ուրմիո լիճը համարում է ծայրամասային[1]։

Վաղ բրոնզի մշակույթը բաժանելով երեք փուլերի Չ. Բարնեյը պնդում է, որ առաջին փուլի մշակույթը հավանաբար տարածվել է ամբողջ Արևելյան Անատոլիայում և նրա սահմաններից դուրս՝ Վրաստան և Ուրմիո լճի շրջանը։ Նրա ծագման կենտրոնը հավանաբար եղել է Արաքսի հովտի միջին մասը՝ Երևանի շրջանը և Իգդիրը, որտեղից այն հեշտությամբ կարող էր տարածվել դեպի հյուսիս՝ մինչև Թրիալեթի, իսկ դեպի հարավ-արևելք՝ մինչև Ուրմիո լիճը, դեպի արևմուտք՝ մինչև Կարաղ և Բլուր[2]։ Մյուս կողմից, վերոհիշյալ մշակույթի ծագման ավելի հավանական կենտրոնը համարում է Խարբերդի (Էլյազիգի) շրջանը, ելնելով այդտեղ խալկոլիթի երկարատև գոյության փաստից[3]։

Սովետական գիտնականների գերազանց մեծամասնությունը, այսպես կոչված, «Քուռ-արաքսյան էնեոլիթյան» խեցեղենի ծագման հարցը շոշափե-

[1] Ch. Burney, նշվ. աշխ., էջ 165, 166։

[2] Նույն տեղում, էջ 168։

[3] Նույն տեղում։

չեն բնականաբար ձգտում են գտնել նրա տեղային խոր արմատները։ Եվ իրոք, ինչպես վերը նշվեց, Հայկական լեռնաշխարհում արդեն հայտնի են մ.թ.ա. IV հազարամյակի էնեոլիթյան վաղ երկրագործական բնույթի մի խումբ հուշարձաններ, որոնց ուսումնասիրությունից պարզվում է, որ վաղ բրոնզեդարյան մշակույթն իր խոր արմատներով կապվում է էնեոլիթյան մշակույթի հետ, որ վաղ բրոնզեդարում զարգացման իր երկրորդ փուլն ապրող մետաղագործությունը սկիզբ է առել Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան մշակույթի ընդերքում, ինչպես և բնակարանաշինությունն իր կլոր կացարանների սիստեմով ավանդաբար անցել է վաղ բրոնզի մշակույթին։

Ինչ վերաբերվում է վաղ բրոնզեդարյան խեցեղենին, ապա պետք է նշել, որ էնեոլիթից դեպի վաղ բրոնզի անցման փուլը չնայած դեռևս բացակայում է, այդ անմիջական կապող օղակը դեռևս հայտնաբերված չէ, սակայն վերջերս Արարատյան դաշտավայրում հայտնաբերված մ.թ.ա. V—IV հազարամյակի հուշարձաններից մեկի՝ Թեղուտի խեցեղենում արդեն ի հայտ են գալիս վաղ բրոնզեդարյան ինքնատիպ խեցեղենի որոշ սաղմեր։ Թեղուտի խեցեղենը, չնայած իր որակով, կատարման եղանակով, գույնով լրիվ տարբերվում է վաղ բրոնզեդարյանից, սակայն էնեոլիթյան մշակույթի զարգացման տվյալ փուլում արդեն երևան են գալիս կավամանների ձևեր (լայնաբերան, գլանաձև վզով, ետ ծալված անկյունային շուրթերով կավամաններ), հենակների մասեր, որոնք զարգացած ձևեր են ընդունում վաղ բրոնզի դարաշրջանում։

Այս բոլորով հանդերձ, վաղ բրոնզեդարյան խեցեղենի անալիզը ևս վկայում է, որ այդպիսի շքեղ, գեղարվեստական խեցեղենով մշակույթի հայրենիքը, զարգացման բուն օջախը Հայկական լեռնաշխարհն է և հատկապես Արարատյան դաշտավայրը։

Համեմատությունները համաժամանակյա մյուս հուշարձանների հետ ապացուցում են, որ խեցեղենի նման բազմազանություն և շքեղություն իր զարգացման երեք փուլերով, տեղային հատկանիշներ կրող կավամանների ձևերով և զարդամոտիվների բազմաթիվ տարբերակներով առայժմ չի կարելի տեսնել և ոչ մի տեղում։

Օջախների հենակների-պատվանդանների այնպիսի բազմաձևություն և տարատեսակներ, որպիսին տեսնում ենք հատկապես Արարատյան դաշտավայրի հուշարձաններում, Շենգավթում, Մոխրաբլուրում և Գառնիում, Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնի չեն, չնայած սակավաթիվ օրինակներ հանդիպում են Վրաստանում, կամ Կիրբեթ-Կերակյան մշակույթում։ Վերջապես նման ինքնատիպ խեցեղենով հուշարձանների այնպիսի խիտ ցանց, որպիսին Հայկական լեռնաշխարհում է (որի թիվը ներկայումս հաշվվում է երեքհարյուրից ավելի) ոչ մի տեղ չկա։

Մի՞թե այս բոլորն ամենավառ, ամենացայտուն ապացույցները չեն այդ մշակույթի տեղային ծագման և Հայկական լեռնաշխարհում զարգացման օջախ լինելու։

Մենք համամիտ ենք Չ. Բարնեյի հետ Վրաստանի և Ուրմիո լճի հուշարձանների ծայրամասային լինելու հարցում։

Ինչպես վերը տեսանք, Գեոյ-Թեփեի «K» շերտում, Յանիկ-Թեփեում ևս հանդիպում են նույն շենգավիթյան տիպի ամրոց-բնակատեղիներ՝ կլոր կացարաններով և հում աղյուսե պատերով։

Գեոյ-Թեփեի խեցեղենն իր արտաքին սև փայլով և զարդանախշման

սկզբունքներով (ներճկված փոքրիկ փոսիկներ, ելուստներ) հարում է Էլարյան խմբին, սակայն Գեոյ-Թեփեի կավամաններն իրենց կառուցվածքով մեծ մասամբ տարբերվում են Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի ձևերից։

Չնայած այստեղ ևս հանդիպում ենք նույն գավաթներին՝ շուրթից սկսվող կանթով[1], կամ ուղղահայաց խողովակաձև վզով հաստ շուրթերով, ուռուցիկ ուսերով թաղարների[2], սակայն այս երկու ձևերն էլ արտակարգ լայն տարածում ունեն սկսած Գեոյ-Թեփեից մինչև Հյուսիսային Կովկաս։ Մյուս բոլոր կավամաններն իրենց ձևով տարբերվում են։ Դրանք մեծ մասամբ լայնահատակ խոր թասեր կամ բրեզաններ են[3], մասամբ օղակաձև նստուկով[4], որը բոլորովին չի հանդիպում Հայկական լեռնաշխարհում և իր այդ հատկանիշով այն ավելի շուտ կապվում է «K» շերտին նախորդող «M» շերտի խեցեղենի հետ[5]։

Վերջապես Հայկական լեռնաշխարհի խեցեղենին այդքան բնորոշ կիսալուսնաձև կանթերը չափազանց հազվադեպ են Գեոյ-Թեփեում։

Այսպիսով Գեոյ-Թեփեի «K» շերտի խեցեղենն իր ձևով մեծ մասամբ ունի տեղային հատկանիշներ, սակայն իր կատարման եղանակով, արտաքին սև փայլով և զարդանախշումով հիշեցնում է Հայկական լեռնաշխարհի խեցեղենին։

Յանիկ-Թեփեի խեցեղենը տարբերվում է Գեոյ-Թեփեից, մի փոքր ավելի ուշ հատկանիշներ ունի և ավելի շուտ մոտ է արագածյան խմբին (զարդանախշման հատկանիշներով), միաժամանակ ունի տեղային որոշ հատկանիշներ[6]։

Ինչ վերաբերվում է Ծալկայի շրջանի հուշարձաններին, ապա նրանք մի թևով կապվում են Հայկական լեռնաշխարհի խեցեղենի, իսկ մյուս թևով կվացխելեբյան տիպի հետ։

Ինչպես վերը տեսանք, Բեշտաշենի ամրոցի ստորին շերտի խեցեղենի II կոմպլեքսի մի մասը (վզի հիմքում երկրաչափական նրբագիծ զարդանախշեր, իսկ ուռուցիկ փորին պարուրաձև վերջավորությամբ ռելեֆ-ներճկված զարդանախշեր) հարում է Հայկական լեռնաշխարհի խեցեղենի կիրովականյան խմբին[7], սակայն մյուս մասն իր ձևով կապվում է կվացխելեբիի հետ[8], որպիսի ձևեր Հայկական լեռնաշխարհում չեն հանդիպում։

Տաշ-Բաշի և Բարմակսիզի խճուղու քարարկղային մշակույթն իր թե՛ թաղման և թե՛ կավամանների ձևով կապվում է Էլարի հետ, միայն այն տարբերությամբ, որ զուրկ է ներճկված փոսիկներից։ Ընդհանրապես հարկավոր է շեշտել այն հանգամանքը, որ Հայաստանում այդքան լայն տարածում գտած ներճկված փոսիկներով զարդանախշումն, որն այդքան լայն շառավիղ է ունեցել նաև հարավում, հասել մինչև Գեոյ-Թեփե, Վրաստանում սակավ է հանդի-

---

1 T. Burten-Brown, նշվ. աշխ., աղ. VI, նկ. 419, W. Lamb, նշվ. աշխ., աղ. II, նկ. 1։

2 Նույն տեղում, նկ. 10, № 138, նկ. 8, № 146, 147։

3 Նույն տեղում, նկ. 7, № 549, 47, 453, նկ. 8, № 586, 296, 1105 և այլն։

4 Նույն տեղում, աղ. VI, նկ. 10, № 385, աղ. III, № 45, նկ. 10, № 41։

5 Նույն տեղում, աղ. III, նկ. 43։

6 C. A. Burney, Excavations at Yanik Tepe, north-west Iran, աղ. LXXI, LXXIII.

7 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, աղ. CXX։

8 А. Джавахишвили, Л. Глонти, նշվ. աշխ., աղ. IV, շերտ C_{1-3} ։

գիզում և նրա հյուսիս-արևելյան սահմանն առայժմ Ղազախի՝ Բաբա-դերվիշը կարելի է համարել։

Նույն բանը կարելի է ասել նաև Օզնիի նկատմամբ, որը թե՛ իր թաղման ձևով և թե՛ նյութերով կապվում է Էլարի հետ, հատկապես խեցեղենի ձևերով, որը, սակայն, նմանապես զուրկ է ներճկված փոսիկներից։ Բացի այդ, Օզնիի խեցեղենի մի մասը հարում է դարձյալ կվացխելեբյան խմբին։ Օրինակ՝ Օզնիում տեսնում ենք բիկոնաձև իրանով, շուրթից սկսվող երկկանթանի կճուճներ[1], որոնք հատկանշական են հատկապես Կվացխելեբիի «C» շերտին[2] և Հայկական լեռնաշխարհում դեռևս հայտնի չեն։ Օզնիի երկարավիզ կավամանները, որոնց ուսուցիկ փորը զարդարված է կիսագնդաձև կանթերով[3], իրենց զուգահեռներն ունեն Կվացխելեբիի «C» շերտի[4], Կուլբակերիի խեցեղենում[5]։

Ինչ վերաբերում է Ամիրանիս-Գորային, ապա նա մի թեով կապվում է Կարազ-Արծնի հետ՝ իր բազմագալար պարուրաձև և բազմաշրջան քառանկյունային զարդամոտիվներով, ինչպես նաև կիրովականյան խմբի հետ, մեկ այլ թեով կրկնում է Էլարյան և արագածյան խեցեղենի բնորոշ գծերը, սակայն ունի խեցեղենի մի խումբ, որն իր մի փոքր ավելի ուշ շրջանի հատկանիշներով բնորոշ է հատկապես փարավանյան խեցեղենին[6] և Հայկական լեռնաշխարհում դեռևս չի հանդիպում։

Այսպիսով Վրաստանի վերոհիշյալ հուշարձանները մասամբ կրկնում են Հայկական լեռնաշխարհի խեցեղենի հատկանիշները, իսկ մյուս թեով էլ կապված են մեկ այլ տիպի խեցեղենի հետ, որն իր ձևով և զարդանախշման սկզբունքներով տարբեր է հայկականից։ Համենայն դեպս Ախալցխայից, Թրիալեթիից և Թբիլիսիից հյուսիս ընկած հուշարձաններն այլ խմբեր են կազմում, որը և գուցե վերաբերվում է էթնիկ մի այլ կազմ ունեցող ցեղախմբերի։

Այսպիսով «Քուռ-արաքսյան էնեոլիթ» տերմինը կորցնում է իր նշանակությունը նաև մեկ այլ իմաստով։ Այդ անվան տակ փաստորեն մինչ այժմ հասկացվել է Անդրկովկասյան «էնեոլիթը» ընդհանրապես։ Սակայն վերջին տարիների նոր հուշարձանների հայտնագործումը և նյութերի մանրամասն ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Անդրկովկասում, ինչպես և Հյուսիսային Կովկասում գոյություն են ունեցել մի շարք խմբեր, որոնք չնայած գտնվել են զարգացման միևնույն փուլում, այդ իսկ պատճառով էլ բնորոշվում են քարե և մետաղե իրերի համանման կոմպլեքսներով, սակայն միմյանցից տարբերվում են տեղային ուրույն հատկանիշներով, որոնք արտահայտվում են ինչպես խեցեղենի գծով, այնպես էլ ճարտարապետական կառույցվածքների, կենցաղային և պաշտամունքային նշանակություն ունեցող նյութերի որոշ տարբերակումներով։

Նման խումբ կարող են կազմել ներքին Քարթլիայում հայտնաբերված հուշարձանները՝ Կվացխելեբին, Խիզանաաթ-գորան, Գուդաբերտկա Ցիխիագորան։

---

1 **О. Джапаридзе**, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, *աղ. V, նկ. 9.*

2 **А. Джавахишвили, Л. Глонти**, *նշվ. աշխ., աղ. IV, նկ. 391, 394, 423։*

3 **О. Джапаридзе**, *նշվ. աշխ., աղ. IV նկ. 7։*

4 **А. Джавахишвили, Л. Глонти**, *նշվ. աշխ., աղ. IV, նկ. 407—410։*

5 **О. Джапаридзе**, *նշվ. աշխ., աղ. II, նկ. 1, 2։*

6 **Т. Чубинишвили**, Амиранис-Гора, *էջ 27, աղ. V, նկ. 26—34, էջ 91, նկ. 176։*

Ա. Ջավախիշվիլին և Լ. Գլոնտին նշում են, որ Կվացխելեբիի «C» շերտի խեցեղենին իր ընդհանուր բնույթով ավելի մոտ է Շիդա Քարթլիայի և Վերին Իմերեթիայի (Նաչերկաղևի, Ցարցիս-Գորա, Կորետի, Ջգուդերի, Նուլի, Զադինա), ինչպես նաև Բեշթաշենի ամրոցի ստորին շերտի հրապարակի խեցեղենը, մասամբ էլ Օզնիի և հատկապես Կուլբակեբիի, Կիկետի, Դիդուբեի խեցեղենը[1], իսկ «B» շերտին հատկանշական է մի խեցեղեն, որը տիպիկ է Սաչխերիի ուշ շրջանի դամբարաններին և հատկապես Թրիալեթիի, այսպես կոչված, վաղ բրոնզեդարյան դամբանաբլուրներին[2]:

Քանի որ այս խմբից ամենից լավ ուսումնասիրված է Կվացխելեբին, որը կրում է մի շարք հուշարձանների ընդհանուր հատկանիշները, մեզ թվում է, որ այդ խումբը կարելի է անվանել կվացխելեբյան:

Մեկ այլ խումբ կարող են կազմել Ադրբեջանում մինգեչաուրյան տիպի հուշարձանները, որին հարում են Նախիի շրջանի, Վարդանլիի շրջանի հուշարձանները, Դիդուբեն և այլն:

Նման մեկ այլ խումբ էլ կազմում են հյուսիս-արևելյան կովկասյան, կայակենդյան տիպի հուշարձանները:

Իհարկե այս հարցը լուրջ ուսումնասիրության կարոտ է, սակայն մի բան ակնառու է, որ վերոհիշյալ խմբերը զարգացման միևնույն փուլով պայմանավորված հատկանիշներից բացի ունեն նաև էական տարբերիչ գծեր, որոնց անտեսել հնարավոր չէ:

Ինչպես I գլխում տեսանք, Վրաստանում դեռևս կլոր կացարաններ չեն հայտնաբերվել. օրինակ՝ կվացխելեբյան խմբին բնորոշ են քառակուսի շենքեր՝ կլորացող անկյուններով: Նմանները հայտնաբերվել են Գուդաբերտկա Ցիխիագորայում, Ամիրանիս-Գորայում: Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական կառուցվածքները (կլոր կացարաններ հարակից քառանկյունի շենքերով) ունեն տեղային հարուստ ավանդներ և ավելի շուտ կապվում են վերին Միջագետքի ու արևելամիջերկրածովյան վաղ մշակույթի հետ: Ճարտարապետական նման ձևեր են արտահայտում նաև Իրանական Ադրբեջանի հուշարձանները՝ Գեոյ-Թեփեն և Յանիկ-Թեփեն:

Չնայած խեցեղենի կատարման եղանակը մի հսկայական տերիտորիայում նույնն է (թրծումը և որոշ հիմնական ձևեր կրկնվում են. բնորոշ է սև փայլեցրած մակերես, կիսագնդաձև և ձվաձև կանթեր), սակայն, ինչպես տեսանք, կվացխելեբյան խեցեղենին բնորոշ են կավամանների նոր ձևեր, որոնք բացակայում են Հայկական լեռնաշխարհում: Օրինակ՝ «C» շերտում հայտնաբերված ոտքով կավամանները, եռականթ կճուճները, տարբեր հենակները, որոնք Ա. Ջավախիշվիլու և Լ. Գլոնտիի կողմից նշվում են որպես տեղային բնորոշ, սպեցիֆիկ հատկանիշներ[3]:

Մյուս կողմից կվացխելեբյան խեցեղենում բացակայում են Հայկական լեռնաշխարհին բնորոշ խեցեղենի բազմաթիվ ձևերը և բազմազան զարդամոտիվները:

Ինչպես Հայկական լեռնաշխարհին, այնպես էլ Վրաստանին բնորոշ են կավե թրծած օջախներ, սակայն նրանք ունեն կառուցվածքային տարբերիչ գծեր: Վերջապես Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթին

---

1 Т. Чубинишвили, Амиранис-Гора, էջ 64:

2 Նույն տեղում, էջ 65:

3 Նույն տեղում, էջ 64:

այդքան բնորոշ պայտաձև հենակները, որոնք ոչ միայն պեղման ժամանակ, այլ հենց գետնի մակերեսից բազմաթիվ տարատեսակներով հայտնաբերվում են առատորեն, Վրաստանում հազվադեպ են, իսկ Կվացխելեբիում բոլորովին չեն հայտնաբերվել: Տարբերիչ գծեր կարելի է տեսնել նաև մինգեչաուրյան և Հյուսիսային կովկասյան խմբերի հետ համեմատելիս:

Հայկական լեռնաշխարհում կան նաև պաշտամունքային նշանակություն ունեցող այլ իրեր, օրինակ՝ եռոտանի պատվանդաններ, բարձրադիր լայն շուրթերով հենակներ, եղան ֆիգուրայով տարատեսակ հենակներ, որոնք Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնի չեն: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթը զարգացել է որպես մի ինքնուրույն մշակութային միասնություն, որն իր ազդեցության ոլորտի մեջ է պահել հարևան երկրների համաժամանակյա մշակույթը:

Նրա սահմանները հարավում ընդգրկելով Վանա լճի շրջակայքը, հասնում են մինչև Իրանական Ադրբեջան՝ Ուրմիո լճի շրջակայքի հուշարձանները՝ Գեոյ-Թեփե, Յանիկ-Թեփե, Հյուսիսում՝ Թրիալեթի, Թբիլիսի, իսկ նրա շառավիղները տարածվում են նաև Հյուսիս-Արևելյան Կովկաս, մինչև Մուժիչի գյուղը (ՉԻԱՍՍՀ): Հյուսիս-արևմուտքում ընդգրկելով Էրզրումի շրջանը, այն տարածվել է մինչև Սվազ (Զարա և Հաֆիկ) և Մալաթիա (Արգուվան և Հեքիմխան): Հարավ-արևմուտքում նրա էլեմենտները թափանցել են մինչև Սիրիա և Պաղեստին:

Սիրիայում և Պաղեստինում քանի որ Հայկական լեռնաշխարհի տիպի խեցեղենն առաջին անգամ հայտնաբերվել է Կիրբեթ-Կերակում (Պաղեստին), ուստի այդ անունով էլ կոչվել է այդ մշակույթը:

Սիրիայում հայտնաբերվել է Տաբարա-էլ-Ակրադում, այն տարածվել է Ամուկի դաշտավայրում, Ռաս-Շամրայից դեպի հարավ-արևմուտք՝ Թել-Սուքասում, Համայում, իսկ Հալեպից դեպի արևելք չի գտնվել[1]: Պաղեստինում հայտնաբերվել է Աֆուլայում, Կիրբեթ-Կերակում, Բեթ-Շանում[2]: Այստեղ կիրբեթ-կերակյան մշակույթը հայտնաբերվել է վաղ բրոնզի III շերտում (երկու դար), IV-ում արդեն չկա, իսկ Տաբարա-էլ-Ակրադում՝ IV—I շերտերում[3]:

Նման խեցեղենի երևան գալը Սիրիայում և Պաղեստինի կոմպլեքսներում մի շարք գիտնականների կողմից բացատրվում է «Քուռ-արաքսյան» մշակույթի կրող արևելա-անատոլիական, այսինքն պատմական Հայաստանի ցեղերի միգրացիայով կամ էքսպանսիայով:

Ռ. Ամիրանը նշում է, որ Պաղեստինի վաղ բրոնզի դարաշրջանի III փուլում, մթա III հազարամյակում, նոր տիպի խեցեղեն է ի հայտ գալիս, որը պատրաստված է ձեռքով, չնայած նախորդող շրջանում անիվի բնակչությունը ծանոթ էր արդեն դուրգնին[4]: Նա այդ նոր տիպի խեցեղենը բաժանում է ութ խմբի, որոնց մի մասի զուգահեռները տեսնում է Ալաջա-Հույուկում, Կուսուրայում, Ալիշարում, իսկ մյուս մասը Կարազում և գտնում, որ այդ բոլոր նմանությունները ասում են այն մասին, որ Պաղեստինում մենք ունենք միգրացիա[5]:

---

[1] **S. Hood,** Excavations at Tabara el Akrad, 1948—1949, էջ 117:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 118:

[4] **R. B. K. Amiran,** Connections between Anatolia and Palestine in the early bronze age, էջ 189:

[5] Նույն տեղում, էջ 92—191:

Վ. Լեմբը նույնպես նշում է կիրբեթ-կերակյան խեցեղենի երկակի բնույթը[1]:

Կիրբեթ-կերակյան խեցեղենի 13 և 17a տիպերը Ս. Հուդը համեմատում է «Քուռ-արաքսյանի» հետ և տալիս նրա բնորոշ հատկանիշները՝ փոքրիկ ներճկված հատակ, սև փայլեցրած մակերես, վարդագույն աստառ, շուրթից սկըսվող կանթեր, լայնակոս, ռելեֆ ելուստավոր և գծային զարդանախշեր, որոնցով զարդարված են կավամանների միայն մեկ երեսը[2]:

Իրականում 17B խմբի խեցեղենն է, որ իր ձևով հիշեցնում է էլարյան տիպի գավաթները՝ սահուն անցումներով և շուրթից սկսվող կանթով, որոնք լայն տարածում ունեն[3], սակայն ինչպես ճիշտ նկատել է Ռ. Մունչաևը, Տաբարա-էլ-Ակրադի խեցեղենի 13-րդ տիպն իր ձևով բոլորովին չի նմանվում «Քուռ-արաքսյան էնեոլիթին»[4]: Մեզ թվում է, որ խեցեղենի 13-րդ տիպն իր ձևով ավելի մոտ է կանգնած Հաջիլարի նեոլիթյան և խալկոլիթյան կավամաններին[5]:

Այսպիսով, շատ հավանական է, որ այդ խումբը ներկայացնում է երկու տիպի խեցեղենի հատկանիշների զուգորդում՝ Հաջիլարի և Հայկական լեռնաշխարհի տիպի:

Սակայն կիրբեթ-կերակյան խեցեղենի կապը Հայկական լեռնաշխարհի հետ զգացվում է ոչ միայն Ս. Հուդի նշած խեցեղենի 17B խմբով, այլ մի շարք այլ բեկորներով զարդարված ռելեֆ զարդանախշերով, այդ թվում նաև պարույրներով[6], պարուրաձև վերջավորություն ունեցող կոմպոզիցիայով[7] (որն իր զուգահեռները կարող է ունենալ ավելի շատ շրջ-բլուրյան տիպի խեցեղենում, քան թե Կարազում), լայնակոս, անկյուն կազմող ժապավեններով[8], որը նույնպես բնորոշ է Հայկական լեռնաշխարհի խեցեղենին: Կիրբեթ-կերակյան կափարիչների գծային զարդանախշերը[9] հիշեցնում են Հայկական լեռնաշխարհի գծազարդ խեցեղենին:

Վերջապես արտակարգ մեծ նմանություններ կարելի է տեսնել օջախի պայտաձև հենակները համեմատելիս: Դարձյալ այստեղ կապն ավելի շատ Շենգավիթի, Արարատյան դաշտավայրի հետ է, քան Կարազի:

Վ. Լեմբը ևս նշում է, որ Կարազում օջախի պայտաձև, տարատեսակ հենակներ հայտնի չեն[10]:

Անդրադառնալով կիրբեթ-կերակյան մշակույթի ծագման հարցին, պետք է նշել, որ Ա. Իեսսենը համոզեցուցիչ է համարում հյուսիս-արևելքից մի խումբ բնակիչների ժամանակավոր, բայց ակտիվ ներթափանցումը Սիրիա և Պաղես-

---

[1] **W. Lamb,** The culture of North-East Anatolia and its Neighbours, էջ 31:

[2] **S. Hood,** նշվ. աշխ., էջ 117:

[3] Նույն տեղում, աղ. XII, A-խմբի նկ. 1 և նկ. 8, 17B-ն, այստեղ նկարների համարները շփոթված են, աղ. XII A խմբի նկ. 1-ը համապատասխանում է 17B-ին:

[4] **Р. Мунчаев,** նշվ. աշխ., էջ 153:

[5] **Yamest Mellaart,** Excavations at Hacilar. First Preliminary Report. Anatolian Studies, vol. VIII, 1958, էջ 141, աղ. 7, նկ. 2, 7, աղ. XXX:

[6] **S. Hood,** նշվ. աշխ., էջ 136, նկ. 8, տիպ 19a: **G. M. Fitzgerald,** The earliest pottery from Beht-Shan. Museum Journal, Philadelphia, XXIV, 1935, աղ. VII և նկ. 1, 3, 4, 8:

[7] **R. Amiran,** նշվ. աշխ., աղ. 5, նկ. 9:

[8] Նույն տեղում, աղ. 5, նկ. 1, 3, 4, 6, 7:

[9] **S. Hood,** նշվ. աշխ., նկ. 7, տիպ 21, b, c:

[10] **W. Lamb,** նշվ. աշխ., էջ 32:

տին, սակայն նշում է, որ այդ ներթափանցման բնույթը շատ բաներում դեռևս անհասկանալի է[1]:

Չ. Բարնեյը նշում է, որ արևելա-անատոլիական վաղ բրոնզի I շրջանին բնորոշ ռելեֆ պարույրները դիտվում են նաև Կիրբեթ-Կերակում և քանի որ կիրբեթ-կերակյան մշակույթը Պաղեստինում սովորաբար թվագրվում է մոտավորապես մթա 2600—2400 թթ., այդ կապերը արևելա-անատոլիական, այսինքն Արևմտահայաստանի վաղ բրոնզի I փուլում զարմանք չի առաջացնում[2]: Սակայն գտնում է, որ կիրբեթ-կերակյան և Արևմտահայաստանի (որը ամենուր նա անվանում է արևելա-անատոլիական) խեցեղենի նմանությունը ընդհանուր բնույթ է կրում և այդ խեցեղենը մասնավորապես կապվում է Խարբերդի (էլյազիգյան) խեցեղենի հետ[3], նշելով, որ այդ տվյալները խոսում են հօգուտ այն ենթադրության, որ ժողովուրդների այդ միգրացիան կամ ներխուժումը (որը հավանաբար բավական արագ է կատարվել) տեղի է ունեցել Խարբերդից դեպի Ամուկի դաշտավայրը[4], սակայն ոչ թե Մալաթիայի ճանապարհով, այլ Խարբերդի շրջապատող հարթավայրերից, սկզբից հարավային, ապա արևմտյան ուղղությամբ, և եթե նման միգրացիան Խարբերդի շրջանից իրոք եղել է, ապա այն կատարվել է հավանաբար մեկ դարի ընթացքում, մոտավորապես մթա 2700 և 2600 թվականներին[5]:

Ինչպես վերը հիշատակվեց՝ Ա. Իեսսենը, նշելով պղնձահանքերով հարուստ երկու շրջանների մասին, մեկը Տրապիզոնից և Ծորոխից, մյուսը Խարբերդից հարավ-արևելք՝ Արղանայում (Անգղատուն՝ Էրգանի-Մադեն), գտնում է, որ մետաղագործության վաղ փուլերում նրանք պետք է, որ կարևոր դեր խաղային ինչպես Անդրկովկասին, այնպես էլ Հյուսիսային Սիրիային և Միջագետքին մետաղով մատակարարելու գործում, և, քանի որ, Սիրիայում հայտնաբերված մետաղե իրերը վերաբերվում են Կիրբեթ-Կերակի տիպի խեցեղենի հարավ թափանցելու ժամանակին և ավելի ուշ ժամանակաշրջանին՝ մինչև մթա II հազարամյակի I հարյուրամյակները, ուստի այս հանգամանքը հնարավորություն է տալիս գտնել Կիրբեթ-Կերակի կապը հյուսիս-արևելյան մշակույթի հետ[6]: Ա. Իեսսենն այդ կապը մի կողմից տեսնում է Հայկական Տավրոսի վրայով՝ Արղանայի միջոցով, մյուս կողմից՝ Տրապիզոնից և Ծորոխից հարավ ընկած տերիտորիաներով, այսինքն Էրզրումի-Կարսի միջոցով:

Այս կարծիքը բավական համոզեցուցիչ է: Հնարավոր է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների ժամանակավոր ներթափանցումը Սիրիա, Պաղեստին, բացի Էրզրումի ճանապարհից կատարվել է նաև Արղանա-Մադենից Խարբերդի (էլյազիգ) հարավային դաշտավարային շրջաններով: Այս կարծիքին է նաև Բարնեյը[7]: Բացի այդ կիրբեթ-կերակյան և Հայկական լեռնաշխարհի խեցեղենի՝ մեր կողմից վերը կատարված համեմատությունները համոզում են, որ կիրբեթ-կերակյան խեցեղենն իր ընդհանուր հատկանիշներով է կապվում Կարսի հետ, սակայն զարդամոտիվների յուրահատկություններով ինչպես նաև օջախի պայտաձև հենակներով կապվում է ավելի շատ Արարատյան

[1] А. А. Иессен, Кавказ и Древний Восток и IV и III тысячелетиях до н. э., էջ 5:

[2] Ch. Burney, նշվ. աշխ., էջ 174:

[3] Նույն տեղում, էջ 173:

[4] Նույն տեղում, էջ 174:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 6:

[7] Ch. Burney, նշվ. աշխ., էջ 174:

դաշտավայրի, Շենգավիթի և Էլարի հետ։ Ուստի, շատ հավանական է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների ժամանակավոր ներթափանցումը Սիրիա, Պաղեստին կատարված լիներ Արարատյան դաշտավայրից Վանա լճի հյուսիսով՝ Մանազկերտով, Բուլանըխի հովտով, հայկական Տավրոսի՝ Արղանա-Մադենի, Խարբերդի դաշտավայրով։

Այսպիսով հնագիտական նյութի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ մթա III հազարամյակում, Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ երկրագործական ցեղերը տարածվել են և՛ դեպի հյուսիս, և՛ դեպի հարավ, իրենց հետ տանելով տեղային ուրույն մշակութային հատկանիշները։

Այդ մշակույթը կրող ցեղերն, ամենայն հավանականությամբ, խուրրիտներն են եղել։ Ըստ Գ. Մելիքիշվիլու, մթա II հազարամյակի սկզբներին խուրրիտական ցեղերի հզոր միավորումները՝ միտաննիների և խուրրերի թագավորությունը գտնվելիս են եղել վերին Միջագետքում, Վանա լճի շրջակայքում և ուժեղացած խուրրիտական տարրը տարածվել է բավական ընդարձակ տերիտորիայում, սկսած Իրանական Քուրդիստանից, Արևելքում՝ մինչև Փոքր Ասիայի շրջանները, և ապա դեպի հարավ՝ Սիրիա և Պաղեստին[1]։ Ըստ Հ. Մարտիրոսյանի, հավանաբար Առաջավոր Ասիայի երկրների մշակութային և տնտեսական ձեռքբերումների տարածողը բրոնզի մշակույթի զարգացման սկզբնական փուլերում հանդիսացել է այդ խուրրիտական բնակչությունը, որի մասն են կազմել և Հայկական լեռնաշխարհի ցեղերը[2]։

Վերը բերված մի շարք զուգահեռները Հին Արևելքի մշակույթի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի նյութերի հետ ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի տեղաբնիկները փոխադարձ սերտ կապերի և փոխհարաբերությունների մեջ են եղել նշված երկրների հետ։

Այդ իսկ պատճառով, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձանների թվագրման համար, այն հնարավորության սահմաններում համադրվում է Մերձավոր Արևելքի և Կովկասի համաժամանակյա հուշարձանների հետ։

Ընդհանրապես թվագրման հարցը բավական բարդ է և կարելի է ասել դեռևս չլուծված։

Սովետական գիտնականների մի մասը, այսպես կոչված, «քուռ-արաքսյան էնեոլիթը» թվագրում են մթա III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով, ոմանք էլ մթա IV հազարամյակի վերջով և III հազարամյակի սկզբով։ Սակայն հիմնականում գիտնականների մեծամասնությունը Անդրկովկասի վաղ բրոնզեդարյան մշակույթը թվագրում են մթա III հազարամյակով։ Այնուամենայնիվ շերտագրական ստույգ տվյալների բացակայության պատճառով վաղ բրոնզեդարյան հուշարձանների մի մասը դեռևս ժամանակագրական իրենց ճիշտ տեղը չեն գտել։

Շենգավիթի շերտագրական տվյալները դեռևս մեզ հայտնի չեն։ Նախիջևանի Քյուլ-Թափայի միայն II շերտն է համապատասխանում վաղ բրոնզի դարաշրջանին, որը վերաբերվում է էլարյան փուլին, այսինքն վաղ բրոնզի III, վերջին փուլին։ Բացի այդ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթի հետ կապվող կուլտուրական հզոր նստվածքներ և շերտագրական

---

1 Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, էջ 93—104։

2 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 47։

որոշ տվյալներ տվող հուշարձանները գերազանցապես ծայրամասային բնույթ են կրում և բացի այդ զարգացման բոլոր փուլերը չեն ընդգրկում, ուստի հնարավոր չէ հենվել նրանց վրա և թվագրել Հայկական լեռնաշխարհի բոլոր հուշարձանները:

Նման հուշարձանների շարքը կարելի է դասել Գեոյ-թեփեն, որի «K» շերտն է համապատասխանում վաղ բրոնզեդարին և, ինչպես վերը նշվեց, այն գերազանցապես կապվում է Ելարյան տիպի III փուլի հետ, իսկ Գեոյ-թեփեում Հայկական լեռնաշխարհի խեցեղենի I և II փուլերին բնորոշ շքեղ լայնակոս և ռելեֆ-ներճկված զարդանախշերով խեցեղենը բացակայում է:

Տ. Բերթոն-Բրաունի կողմից Գեոյ-թեփեի «K» շերտի թվագրությունը հիմնավորված չէ: Նա Գեոյ-թեփեի «K» շերտի վերին հորիզոններում հայտնաբերված մկնդեղային բրոնզից պատրաստված ռակետային շքասեղը համեմատելով Ուրի թագավորական դամբարաններում հայտնաբերված նման ոսկե շքասեղի հետ, այն թվագրում է մթա 2500 թ., և դրա հիման վրա գտնում, որ «K» շերտը գոյություն է ունեցել մինչ 2500 թ.[1], այսինքն այն թվագրում է մթա III հազարամյակի I կեսով:

Գեոյ-թեփեի «K» շերտի վերոհիշյալ թվագրությունն ընդունում է նաև Վ. Լեմբը[2]: Նա, այսպես կոչված, «արևելա-անատոլիական» վաղ բրոնզի խեցեղենի ամենավաղ թվագրումը տալիս է մթա 2800—2750 թթ.[3]:

Չ. Բարնեյը հենվելով Գեոյ-թեփեում և Ալաջայի խալկոլիթյան շերտում հայտնաբերված ռելեֆ-պարուրային զարդանախշով խեցեղենի վրա, այդ մշակույթին տալիս է ավելի վաղ թվագրություն, սկիզբը համարելով մթա 3000 թ., իսկ վերջը ոչ ուշ քան մթա 1900 թվականը[4]:

Հենվելով Գեոյ-թեփեի և Կարազի որոշ տվյալների վրա Չ. Բարնեյը արևելա-անատոլիական վաղ բրոնզի մշակույթը բաժանում է երեք փուլերի. Նրանք համապատասխանեցնելով Գեոյ-թեփեի «K»-ի երեք ենթափուլերին[5]:

Նա վաղ բրոնզի II փուլի սկիզբը մոտավորապես համարում է մթա 2500 թ.[6], իսկ III փուլի վերջը ոչ ուշ քան մթա 1950—1900 թթ., նրա տևողությունը ընդունելով երկու դար[7]:

Այսպիսով Չ. Բարնեյի կողմից Գեոյ-թեփեի թվագրությունը չի համապատասխանում Տ. Բերթոն-Բրաունի թվագրությանը: Երկուսն էլ սկիզբը ընդունում են մթա III հազարամյակի սկիզբը, սակայն Տ. Բերթոն-Բրաունը նրա վերջը համարում է մթա 2500 թ., իսկ Չ. Բարնեյը մթա III հազարամյակի վերջը:

Ջ. Մելլարտի կողմից հրատարակված ժամանակագրական սխեմայում Կարազի տիպի հուշարձանները, կապված Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարաշրջանի հուշարձանների հետ, վերաբերվում են մթա 2500—2300 թվականներին[8]:

---

1 **T. Burton-Brown**, Excavations in Azarbaijan, էջ 34:

2 **W. Lamb**, նշվ. աշխ., էջ 30:

3 Նույն տեղում:

4 **Ch. Burney**, նշվ. աշխ., էջ 167:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 169:

7 Նույն տեղում, էջ 172:

8 **J. Mellaart**, Anatolian chronology in E. and M. Bronze age. AS. VII, 1957, p. 73.

Ինչպես վերը տեսանք, կիրբեթ-կերակյան մշակույթը Չ. Բարնեյի կողմից թվագրվում է մթա 2600—2400 թթ.[1], որը ըստ Ռայտի և Օլբրայտի, համապատասխանում է Եգիպտոսի III—II դինաստիաներին[2]: Կիրբեթ-կերակյան խեցեղենը Ռ. Ամիրանը թվագրում է մթա XXIII—XXII դդ.[3], որի հետ համաձայն է և Վ. Լեմբը[4]:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձանների ուսումնասիրությունից պարզվեց, որ նրանք բոլորը համաժամանակյա չեն և հիմք ընդունելով խեցեղենի զարգացման երեք փուլերը նրանց կարելի է բաժանել երեք խոշոր ժամանակագրական խմբերի:

Քարե և ոսկրե գործիքները կրել են քանակական դանդաղ փոփոխություններ, ուստի նրանց վրա հենվել հնարավոր չէ: Նրանք իրենց ձևը և դերը չնչին փոփոխություններով պահպանել են նեոլիթից սկսած, մինչև Ուրարտական շրջանը ներառյալ:

Ինչպես տեսանք, որոշ զարգացում նկատվում է կացինների մեջ, հատաբակ սեպերին հաջորդում են բռնակի համար անցքով կացինները. որոշ զարգացում նկատվում է նաև աղորիքների մեջ:

Մետաղագործությունը վերոհիշյալ երեք ժամանակագրական խմբերով բնութագրել չենք կարող, որովհետև դեռևս համապատասխան նյութեր չունենք, սակայն, ինչպես վերը տեսանք, նյութերի մի մասը թվագրվում է մթա III հազարամյակի I, մյուսը՝ II կեսով:

Խեցեղենի I և II փուլերը (որոնք շերտագրական ստույգ տվյալներ դեռևս չունեն, այլ փուլերի են բաժանված պայմանականորեն՝ ելնելով տիպաբանական որոշ համեմատություններից, նրանց էվոլյուցիոն զարգացումից և մասնակի շերտագրական բնույթի դիտողություններից) պայմանականորեն թվագրում ենք մթա III հազարամյակի I կեսով, որի վերին սահմանը կարող է հասնել մինչև մթա XXIV դարը, իսկ III փուլն ավելի հավաստի, ճիշտ թվագրություն է ստանում շնորհիվ մետաղական հարուստ իրերի, ձուլման կաղապարների, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հին Արևելքում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և թվագրվում են մթա III հազարամյակի II կեսով, որի վերին սահմանը կարելի է ընդունել մթա XX դարը:

Հենվելով Նախիջևանի Քյուլ-Թափայից և Կվացխելեբիից ստացված ռադիոածխածնային «C»$_{14}$-ի անալիզի վրա, վերջերս որոշ գիտնականների կողմից Անդրկովկասի վաղ բրոնզեդարյան մետաղե իրերը և կաղապարները թվագրվում են մթա III հազարամյակի I կեսով: Սակայն Հայկական լեռնաշխարհի տեղական նյութական մշակույթին չափազանց բնորոշ խեցեղենի էվոլյուցիան, ինչպես և այլ բնույթի հարցեր ապացուցում են Նախիջևանի Քյուլ-Թափայի և նրան զուգահեռ հուշարձանների վաղ բրոնզի ոչ թե սկզբին, այլ վերջին վերաբերվելը:

Այսպիսով վաղ բրոնզեդարյան մշակույթին վերաբերվող ժամանակագրական հարցերը առայժմ լուծված համարել չի կարելի: Ռադիոածխածնային մեթոդով Անդրկովկասի հնագիտական իրերի տարիքը որոշելու դեռևս նախնական փորձերն են կատարվել:

---

1 Ch. Burney, նշվ. աշխ., էջ 174:

2 S. Hood, նշվ. աշխ., էջ 119:

3 R. Amiran, նշվ. աշխ., էջ 103:

4 W. Lamb, նշվ. աշխ., էջ 31:

Ինչպես տեսանք, վաղ բրոնզեդարյան հուշարձանների բացարձակ թվագրությունը դեռ որոշակի չէ և կարոտ է լուրջ ուսումնասիրության։ Այն իր վերջնական լուծումը կստանա շերտագրության ավելի մի շարք խոշորագույն հուշարձանների ուսումնասիրությամբ և յուրաքանչյուր շերտ թվագրող բազմապիսի մնացքի և այլ իրերի հայտնաբերումով, որին և զուգ. օգնության կգա նաև ռադիոածխածնային և գիտական այլ մեթոդներով նյութերի տարիքը որոշելը։

Նշված փաստերի հանրագումարը, հայկական վաղ բրոնզեդարյան մշակույթին վերաբերվող որոշ եզրակացություններ և մտահղացումներ անվիճելիորեն վկայում են այդ դարաշրջանի հուշարձանների, նյութական մշակույթի հետագա, ավելի լայն ուսումնասիրության անհրաժեշտությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնագիտական, հատկապես կենցաղային բնույթի հուշարձանների ուսումնասիրությունից պարզվում է, որ սկսած մթա V—IV հազարամյակներից Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել տեղաբնիկ երկրագործական ցեղերով, որոնց արդեն ծանոթ էր մետաղագործությունը։ Սակայն այդ ցեղերի մշակույթն իր զարգացումն ու ծաղկումն է ապրում հատկապես մթա III հազարամյակում՝ վաղ բրոնզի դարաշրջանում, որը նշանավորվում է երկրագործության երկրորդ հզոր վերելքով։ Ինչպես տեսանք, զարգացման այս նոր փուլի համար խթան հանդիսացավ խոշոր եղջերավոր կենդանիների՝ եզան օգտագործումը որպես քաշող ուժ, որը հնարավորություն տվեց անցնելու հողի մշակման մի նոր սիստեմի, այսինքն հողը վարելու եղանակով օգտագործմանը։ Անասնապահությունը ևս զարգացման մի նոր վերելք է ապրում։ Խոշոր եղջերավոր կենդանիների կողքին մեծ զարգացում են ստանում մանր եղջերավորները, որոնք բացի մսից տեղաբնիկներին ապահովում էին մորթով և հատկապես բրդով՝ հումքի մեծ բազա ծառայելով մանածագործության համար։ Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճը, որը թելադրված էր հասարակության արտադրաուժերի զարգացմամբ, հանգեցրեց անասնապահության ձևի փոփոխության, կիսաքոչվոր անասնապահության առաջացման։

Երկրագործության և անասնապահության վերելքի պայմաններում առաջադիմում են նաև արհեստները՝ մանածագործությունը, կաշեգործությունը, բնակարանաշինությունը և հատկապես խեցեգործությունն ու մետաղագործությունը։ Վերջիններս տնայնագործությունից անջատվելով դառնում են ինքնուրույն, առանձին արտադրաճյուղեր։

Զարգացման մի նոր փուլ է թևակոխում մետաղագործությունը, որը բնորոշվում է ձուլման բարդ պրոցեսով, ինչպես մկնդեղային բրոնզի, այնպես էլ այլ տիպի ձուլվածքների ստացմամբ, տարատեսակ մետաղե իրերի բազմազանությամբ և այլն։ Հատկապես մեծ զարգացում է ապրում զուտ տեղային հատկանիշներով խեցեգործությունը, որը, չնայած տարածման իր մեծ շառավիղին, բնորոշվում է ձևերի հաճախակի կրկնությամբ, կատարման եղանակի նույնությամբ։ Նրա լոկալ տարբերակներում անգամ նկատվում են զարդանախշերի ոճային և սյուժետային կապեր։ Այս բոլորն անշուշտ հավա-

նական են դարձնում խեցեգործության մասնագիտացած կենտրոնների գոյության փաստը:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթն աչքի է ընկնում նաև արվեստի գողարիկ նմուշներով ու հավատալիքները ներկայացնող նյութական բազմապիսի հուշարձաններով:

Արվեստն իր արտացոլումն է գտել ինչպես խեցեղենում, այնպես էլ մարդկային, կենդանակերպ և թռչնակերպ քարե ու կավե արձանիկներում, օջախներում, կրակին ու պաշտամունքին ծառայող օջախի տարատեսակ հենակներում: Կանացի ոճավորված արձանիկները, որոնցից մեկը գտնվել է Էջմիածնի Գյոյ-Թափայում (աղ. VII, XXVII), երկրագործական ժողովուրդների մոտ դիտվում է որպես ագրարային կուլտի մարմնավորում: Հայրիշխանության գոյության ակնառու փաստերից է տղամարդու արձանիկների հայտնագործությունը: Հայտնաբերվել են նաև եզան, ոչխարի, ձիու, շան, թռչունի արձանիկներ (աղ. XXVI), բացի արձանիկներից, եզան պաշտամունքին են նվիրված նաև օջախի տարատեսակ հենակները (աղ. VII):

Խեցեղենն իր ձևով, կատարման տեխնիկայով և հատկապես զարդանախշումով կարելի է այդ դարաշրջանի արվեստի լավագույն նմուշների շարքը դասել: Չնայած այն պատրաստված է ձեռքով, սակայն մեծամասնությունը նրբախեցի է, աչքի է ընկնում ձևերի կատարելությամբ, սիմետրիայով, հայելանման փայլով մեծ ճաշակով և հմուտ ձեռքերով կատարված զարդանախշերով, որոնք ցաք ու ցրիվ զարդեր չեն, այլ հաճախակի կուռ, սիմետրիկ և իմաստավորված կոմպոզիցիաներ, որոնցում, ինչպես մեզ թվում է, իրենց արտացոլումն են գտել երկիրը ջրերով, բուսականությամբ, մասամբ երկնակամարն արտահայտող որոշ երկնային մարմիններ:

Վերոհիշյալ կոմպոզիցիաները հավանաբար կապված էին նաև երկրագործական և անասնապահական աշխատանքի հետ, այսինքն արևը և ջուրը մարմնավորում էին այն ուժը, որը նպաստում էր այդ աշխատանքի հաջողությանը:

Բացի ոճավորված կոմպոզիցիաներից, խեցեղենի զարդանախշերին բնորոշ են նաև բուսական թփեր, ծաղիկների և տերևների համադրություններ, ցորենի հասկի պատկերումներ, որոնք ունեն գեղարվեստական բարձր արժանիքներ, կատարված են ռելիեֆորեն, հյութեղ, թանձր շտրիխներով: Անշուշտ նրանցում իրենց մարմնավորումն են գտել երկրագործ, անասնապահ տեղաբնիկների համար այնքան բաղձալի գարունը, բնության զարթոնքը և խոստումնալից բերքառատ ամառը:

Բուսական մոտիվներից բացի վերոհիշյալ ժամանակաշրջանի կիրառական արվեստի ամենասիրված մոտիվներն են բազմատեսակ պարույրները, մեանդրները, եռանկյունիները, շեղանկյունիները, համակենտրոն շրջանագծերը, թռչունները և կենդանիները, որոնք մեծ մասամբ ոճավորված են:

Արվեստի նմուշների շարքը կարելի է դասել նաև զարդարանքի մի շարք տարրեր՝ ուլունքներ, կոճակներ, կախազարդեր-հմայիլներ, ապարանջաններ ու քորոցներ և այլն:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի մշակույթը նշանավորվում է նախնադարյան արվեստի և պաշտամունքի զարգացման մի նոր փուլով, որին բնորոշ է զարդամոտիվների միավորման տենդենց, ոճավորում, սիմետրիա, ռիթմիկ կրկնություններ, բնապաշտական երևույթներ և այլն:

Զարգացում, փոփոխություն է նկատվում նաև թաղման որոշ ձևերի մեջ։ Եթե մթա IV հազարամյակում դամբանաբլուրները կառուցվում էին կոլեկտիվ թաղումների համար և հանդիսանում էին ընդհանուր գերեզմանոց մի տոհմի համար (Ստեփանակերտի № 103, 119, 125 դամբանաբլուրները), ապա վաղ բրոնզեդարում կոլեկտիվ թաղումներից բացի, այդ հսկայածավալ դամբանաբլուրը կառուցվում է մեկ անհատի համար, (Խաչենագետի № 2 դամբանաբլուր), որի հետ դրված իրերը նույնպես վկայում են գույքային անհավասարության սաղմնավորումը, նախնադարյան, համայնական կարգերի քայքայման սկիզբը, որն իր զարգացումը ստացավ մթա II հազարամյակի սկզբներին, հանգեցնելով ռազմական ավագանու, ցեղի առաջնորդների, այսինքն վերնախավի առաջացման, գույքային անհավասարության ամուր հաստատման, որոնց համար լավագույն օրինակ կարող են ծառայել Կիրովականի և Թրիալեթիի հարուստ դամբանաբլուրները։

Սոցիալական կարգի պարզաբանման համար մենք քիչ հնարավորություններ ունենք, սակայն ելնելով բնակատեղիների պլանավորումից, բնակարանների կառուցվածքից և մասամբ ազգագրական տվյալներից, կարելի է հանգել որոշ եզրակացությունների։

Վաղ բրոնզեդարյան բնակատեղիների պարսպապատումը վկայում է արդեն հարստության կուտակումը և նրա պաշտպանության անհրաժեշտությունը։ Ինչպես վերջին հանգամանքը, այնպես էլ երկրագործության ու անասնապահության վերելքը, նաև որոշ արհեստների անջատումը, առաջին տեղն են մղում տղամարդու աշխատանքը տնտեսության մեջ և որոշակիորեն ձևավորվում են հայրիշխանական հարաբերությունները։

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիները, ինչպես տեսանք, կառուցվել են որոշակի պլանով և նրանց բնորոշ են կենտրոնական կլոր կացարանով ու հարակից բազմաթիվ սենյակներով, տնտեսական նշանակություն ունեցող շինություններով կազմված կոմպլեքսներ, որոնք միմյանցից որոշակի հեռավորության վրա են գտնվել։ Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ յուրաքանչյուր բնակատեղի հավանաբար պատկանելիս է եղել մեկ տոհմի և այդ բնակարանային կոմպլեքսներից յուրաքանչյուրում բնակվել է մի գերդաստան, այսինքն մեկ մեծ ընտանիք՝ կազմված մի շարք առանձին զույգային ընտանիքներից։

Յուրաքանչյուր զույգային ընտանիք ժամանակի ընթացքում աճելով, բազմանալով, անշուշտ տրոհվում էր, անջատվում և իր հերթին վերածվում մի նոր գերդաստանի։ Այսպիսով տվյալ բնակատեղիի տոհմը կազմվում էր արյունակցական, ազգակցական կապեր ունեցող գերդաստաններից։

Կլոր կացարանի կենտրոնական դիրքը և յուրաքանչյուր նման կացարանում կլոր օջախի, մթերքների պաշարի, կենցաղային նշանակություն ունեցող այլ իրերի առկայությունը ենթադրել է տալիս, որ հիմնական տնտեսական միավորը հանդիսացել է ոչ թե զույգային, այլ մեծ ընտանիքը։ Բացի այդ նկատի ունենալով գերդաստանների մեկուսացման տենդենցը, կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր գերդաստանի բնակարանային գույքը պատկանել է միայն տվյալ մեծ ընտանիքին, այսինքն կազմել է նրա սեփականությունը։
Այսպիսով հողի և կենդանիների կոլեկտիվ օգտագործման պայմաններում ընտանեկան սեփականության առաջացումը համայնական հարաբերությունների մեջ արդեն ճեղքվածք էր առաջացրել։

Հնագիտական նյութի ուսումնասիրությունը հաստատում է, որ Հայկական լեռնաշխարհի այդ ինքնատիպ մշակույթը կրող ցեղերը ազգակից են եղել միմյանց, գերազանցապես բնակություն են հաստատել գետահովիտներում, իրար բավական մոտ, ունեցել են կյանքի միանման պայմաններ, նրանց սերտ համագործակցությունը ամրապնդվել է մշակութային ձեռքբերումների, տնտեսական մթերքների փոխանակությամբ և աստիճանաբար ձուլվելով՝ նրանք կազմել են ցեղային միություններ։

Այսպիսով մթա III հազարամյակում Հայկական լեռնաշխարհում բնակվող հասարակությունը ցեղերից կազմված մի էթնիկ միավորում է ներկայացրել, որը զբաղեցրել է հսկայական տերիտորիա, փոխանակային սերտ կապերի մեջ է եղել Առաջավոր Ասիայի երկրների և Կովկասի հետ, ինչպես տեսանք նրանցից ազդվել է և միաժամանակ փոխազդել նրանց մշակույթի վրա։

Այս մշակույթը կրող ցեղերի էթնիկ պատկանելությունը դեռևս դժվար է որոշել, սակայն նրանք հավանաբար խուռիներ են։

РЕЗЮМЕ

При изучении прошлого раннеземледельческих племен Закавказья, как и вообще Кавказа, особое и своеобразное место занимают история и культура племен Армянского нагорья эпохи ранней бронзы (III тыс. до н. э.).

В изучаемую эпоху земледелие, скотоводство, металлургия и ремесла переживают бурное развитие, что кладет начало новой фазе первобытнообщинного строя в Армении.

Хотя материалы этой эпохи еще не достаточно изучены, тем не менее только на территории Советской Армении известно около шестидесяти памятников. В последнее время большая группа памятников была обнаружена и исследована также на территории западных областей Армянского нагорья (ныне Турция).

В эпоху ранней бронзы наиболее населенными местами Армянского нагорья были Араратская долина, Котайкский и Разданский районы, бассейн озера Севан, район Ташир-Дзорагета, Ширак, долины Алашкерта (Карагез), Вананда, Чалдырана, Карина (Эрзерум), Байбурта, окрестности озера Ван, равнины Маназкерта, Буланыха, Муша, Харберта (Элязиг) и Малатии.

Численностью и разнообразием археологических памятников особое место занимает Араратская равнина. Здесь выявлено около двадцати пяти ярких памятников, среди которых особое место нужно отвести крепости-поселению Шенгавит, расположенному в юго-западной части Еревана.

К известным памятникам Араратской долины принадлежат также Шреш-блур и Кюль-тапа (Эчмиадзинский район), Мохраблур (Октемберянский район), являющиеся искусственными зольными холмами. На правом берегу Аракса (в Турции) особенно примечательны памятники Игдырской равнины—Малаклу, Гекчели и Яйджи.

Видными памятниками Котайкского района являются Гарни и Элар.

На севере Армянского нагорья густо населенным районом является Ташир-Дзорагет. В этом районе раннебронзовыми памятниками особенно богаты Кировакан и его окрестности. Ряд памятников был обнаружен в восточной части Кировакана, в «Димаци таг», где известны Тагаворанист и холм Маштона, и напротив Химкомбината—поселение Коси-чотер. Эти памятники находятся довольно близко друг к другу и построены на естественно возвышающихся высотах, окруженных реками. Исследование материалов, относящихся к памятникам Кировакана, показало, что они имеют исключительное сходство и могут рассматриваться как результат одинаковой культуры родственных родов или племен.

Группы памятников обнаружены также в районе Спитака и Алаверди.

Среди памятников Ширака примечателен Карнут (Дираклар), который выделяется своеобразной орнаментированной керамикой.

Обобщая материал, можно заметить, что по расположению поселений раннебронзовой эпохи известны памятники двух типов: 1) на искусственных холмах, 2) на естественных холмах и возвышениях.

Искусственные холмы характерны для низменных районов. К их числу можно отнести памятники Араратской долины и других равнинных областей края. Памятники второго типа сооружались на высоких горных и речных террасах, т. е. на таких площадях, которые возвышались над окружающей местностью.

